13 Այդ առանձնայատկութիւնների մասին, կապուած հայկական կլասիցիզմի զարգացման գործում Մխիթարեանների ունեցած դերի արժէքաւորման հետ, ուշագրաւ մտքեր է յայտնում գրականագէտ Ս. Ծտիկեանը իր մի գրքի Ներածութեան մէջ (տե՛ս **Ս. Ծտիկեան**, *Հայ նոր գրականութեան ժամանակագրութիւն (1801-1850)*, Եր., 1973, էջ 27-34):

14 **Ծ. Նազարեան**, *Պետրոս Ղափանցի*, Եր., 1969, էջ 158:

15 **Եղիշէ Մարտիկեան**, *Հայկական կերպարուեստի պատմութիւն*, գիրք Ա, Եր., 1971, էջ 5:

16 Տե՛ս «*Էջմիածնի գանձեր*» ալբոմ, Էջմիածին, 1984:

17 Դրա քննութեանն է նուիրուած մեր «Կլասիցիզմի հիմնական սկզբունքների արտացոլումն Խաչատուր Էրզրումեցու գեղագիտութեան մէջ» յօդուածը («Բանբեր Երեւանի համալսարանի», Եր., 1993, թ. 1, էջ 42-48):

18 **Լէօ**, *Հայկական տպագրութիւն*, հտ. 1, Թբիլիսի, 1901, էջ 306:

19 **Ծ. Նազարեան**, *Պետրոս Ղափանցի*, էջ 192. **Մ. Թադեւոսեան**, *Հայկական կլասիցիզմի տեսութիւնը*, Եր., 1977, էջ 24: Նոյն տեղում Մ. Թադեւոսեանը թոյլ է տալիս նաեւ փաստական անճշտութիւն՝ խառնաշփոթ ձեւով ներկայացնելով արուեստին եւ բանաստեղծութեանը վերաբերող հատուածների թուարկումը:

20 Այս վերջին հանգամանքը ճիշտ կերպով նկատել են Ծ. Նազարեանը եւ Մ. Թադեւոսեանը իրենց նշուած աշխատութիւններում:

21 Տե՛ս **Б. Кедров**, *Классификация наук*, т. 1-ый, М., 1961, с. 87:

22 Զարմանալի է, որ բուն բանաստեղծութեանը վերաբերող այս բաժնին իր կազմած «Հայ գրական քննադատութեան քրեստոմատիայում» տեղ չի տուել Ժ. Քալանթարեանը: Սա այն դէպքում, երբ գրեթէ ամբողջութեամբ ներկայացուած է «Ցաղագս արուեստի» բաժինը:

23 Խաչատուր Էրզրումեցու վրայ Դաւիթ Անյաղթի ուսմունքի ընդհանուր ազդեցութեան մասին տե՛ս **Ծ. Նազարեան**, *Դաւիթ Անյաղթը եւ հայոց միջնադարեան գեղարուեստական գրականութիւնը* («Բազմավէպ», 1981, թիւ 3-4):

24 **Խ. Էրզրումեցի**, *Համառոտական իմաստասիրութիւն*, էջ 120: Հմմտ. **Դաւիթ Անյաղթ**, *Երկասիրութիւնք փիլիսոփայականք* (համահաւաք բնագրերը եւ առաջաբանը Ս. Արեւշատեանի), Եր., 1980, էջ 40:

25 **Խ. Էրզրումեցի**, նոյն տեղում, էջ 2:

26 Մէկ այլ տեղ Խ. Էրզրումեցին գրում է. «...Նա արուեստ իսկ յորջորջի, քանզի զստոյգ կանոնս ունի» (տե՛ս «Համառոտական իմաստասիրութիւն», էջ 120):

27 Տե՛ս նոյն տեղում, էջ 2:

28 Նկատենք, որ արուեստի տեսակներից իւրաքանչիւրի առանձնայատկութեան եւ դրանց սահմանների հարցը եւրոպական էսթետիկայում յատուկ սրութեամբ արծարծուեց եւ ողջ խորութեամբ քննուեց Էրզրումեցու «Համառոտական իմաստասիրութիւն» երկից տասնամեակներ անց: Յատուկ դրա համար իր «Լաոկոոն, կամ Գեղանկարչութեան եւ պոեզիայի սահմանների մասին» (1766) աշխատութիւնը գրեց գերմանացի մեծ լուսաւորիչ-գեղագէտ Լեսսինգը:

29 **Խ. Էրզրումեցի**, *Գիրք քերականութեան*, Ցալիկօնեայ, 1696, էջ 21:

30 Տե՛ս «Համառոտական իմաստասիրութիւն», էջ 234:

31 Նոյն տեղում, էջ 5:

32 «Մարտասանութիւն», Վենետիկ, 1713, էջ 5:

33 «Համառոտական իմաստասիրութիւն», էջ 4:

34 Տե՛ս «*Կարճառոտագունեղ համառոտութիւն Ընդհանրական աստուածաբանութեան*», Վենետիկ, 1736, էջ 55:

35 Նոյն տեղում, էջ 293:

36 «Համառոտական իմաստասիրութիւն», էջ 4:

37 Նոյն տեղում, էջ 546::

38 Նոյն տեղում, էջ 15:

39 Նոյն տեղում, էջ 3:

40 Նոյն տեղում, էջ 5:

41 Նոյն տեղում, էջ 17:

42 «Մարտասանութիւն», էջ 6:

43 Տե՛ս **Հր. Թամրազեան**, *Հայ քննադատութիւն*, գիրք Ա, Եր., 1993, էջ 127:

44 Տե՛ս **Ս. Արեւշատեան**, *Դաւիթ Անյաղթը հին Հայաստանի ականաւոր փիլիսոփայ*, Եր., 1980, էջ 4:

45 Տե՛ս **Կ. Միրումեան**, *Յովհաննէս Սարկաւագի աշխարհայեացքը*, Եր., 1984, էջ 209:

46 «Համառոտական իմաստասիրութիւն», էջ 4:

47 «Կարճառոտագունեղ համառոտութիւն Ընդհանրական աստուածաբանութեան», էջ 36:

ՄԵԾ ՀԱՅՔԻ ԲԴԵՇԽՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԵՒ ԲԴԵՇԽՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋ

Բաբկէն Յարութիւնեան

Չնայած հայագիտութեան ունեցած մեծ ձեռքբերումներին, մինչեւ օրս էլ լիակատար պատասխան չի տրուել այն հարցին, թէ ինչ է իրենից ներկայացնում բդեշխութեան հաստատութիւնը: Որչափ մեզ յայտնի է գրականութիւնից, Մեծ Հայքի բդեշխութիւնների վերաբերեալ սկզբնաղբիւրների տեղեկութիւնների առջին հաւաքողը եղել է Հ. Ղ. Ինճիճեանը, որը, սակայն, այդ խնդիրը առանձին քննութեան առարկայ չի դարձրել:[1] Յիշեալ հարցին անդրադարձել է Հ. Ղ. Ալիշանը, որը փորձել է սկզբնաղբիւրների՝ երբեմն անորոշ հաղորդումներին աշխարհագրական յստակութիւն հաղորդել[2], սակայն, հարկ է խոստովանել, որ նրա եզրայանգումները երբեմն պարզապէս սխալ են: Աւելի ուշ այդ խնդիրն այլեւայլ առիթներով քննութեան է առնուել Յ. Մարքուարթի, Ա. Քրիստենսենի, Ն. Ադոնցի, Ե. Հերցֆելդի, Մ. Ռոստովցեւի, Յ. Մանանդեանի, Գ. Ծերեթելու, Ա. Մարիքի, Ռ. Ֆրայի, Մ. Շոմոնի, Վ. Հեննինգի, Ս. Երեմեանի, Լ. Ջանաշիայի, Կ. Թումանովի, Վ. Գ. Լուկոնինի, Գ. Մելիքիշվիլու եւ այլոց աշխատութիւններում, սակայն բդեշխութիւնների ուսումնասիրութեանը առանձին աշխատանքներ են նուիրել միայն չորս հետազօտող՝ Ա. Պալիարոն, Ֆ. Ռունդգրենը, Ս. Կրկեաշարեանը եւ Թ. Գամսախուրդիան:

Համընդհանուր ճանաչում գտած տեսակէտի համաձայն, բդեշխները եղել են նահանգների կառավարիչներ: Սակայն նման մօտեցման դէպքում, բնականաբար, հարց է ծագում, թէ ինչո՞ւ ռազմական գրեթէ նոյն կարողութիւն ունեցող իշխաններից չորսը կոչւում էին բդեշխներ, իսկ միւսները՝ ոչ: Այսպէս, եթէ Աղձնեաց բդեշխները մարտադաշտ էին դուրս բերում 4000, Գուգարաց բդեշխները՝ 4500 մարդ, ապա Սիւնեաց իշխանների ռազմական կարողութիւնը կազմում էր 4400[3], Անգեղտան իշխանինը՝ 3400, իսկ Բզնունեաց եւ Կասպէից իշխաններինը՝ 3000-ական զինուորՀ[4]: Հասկանալի է, որ ռազմական կարողութիւնը չէ այն յատկանիշը, որով բդեշխութիւնը տարբերուել է աւագ կամ կրտսեր նախարարութիւններից: Աւելին, Աղձնեաց բդեշխը, որ Ագաթանգեղոսի կողմից անուանւում է «մեծ իշխան» կամ «բդեաշխն մեծ», եւ, ամէն ինչից դատելով, գերակայ է միւս բդեշխների նկատմամբ, ռազմական առումով աւելի թոյլ է, քան Գուգարաց բդեշխը, որին հեղինակը կոչում է «միւս անուանեալ բդեշխն»[5]:

Յ. Մարքուարթի կարծիքով, որը խարսխուած է հայկական սկզբնաղբիւրների տեղեկութիւնների վրայ, բդեշխ են կոչուել սահմանային երկրամասերի կառավարիչները: Նա գտնում էր, որ բդեշխութիւններն ստեղծուել են արդէն Տիգրան Մեծի (95-55 թթ. մ.թ.ա.) ժամանակներում եւ համապատասխանում են հայոց արքայից արքային մշտապէս ուղեկցող չորս հաւատարիմ (վասսալ) թագաւորներին[6]: Մօտաւորապէս նոյն դիրքում է նաեւ Ն. Ադոնցը, որի ենթադրութեամբ բդեշխները "не входили в местнические рамки, установленные для других нахараров; они стояли, так сказать, hors ligne, на особом положении, как почти равные царю. В этом смысле каждый из них мог

© National Library of Armenia

считаться գահէրէց перво-гаhным. Бдешхи-своего рода маленькие цари, владеющие территорией царств, прежде самостоятельных, но со времени Тиграна Великого признававших гегемонию армянских царей". Շարունակելով իր միտքը, հեղինակը գտնում է, որ "Взгляд на бдешхов, как на пограничников, сложился значительно позднее и, думаем, навеян строем персидского государства при Сасанидах, деленного на четыре края"[7]: Յ. Մանանդեանը, անդրադառնալով բդեշխութիւններին, գրել է, որ դրանք առաջին կարգի մեծ իշխանութիւններ էին, որոնք քաղաքականապէս գրեթէ անկախ էին, սակայն գտնուում էին Արշակունիների գերիշխանութեան ներքոյ: Ըստ նշանաւոր հայագէտի «բդեշխների իշխանութիւններն ընդարձակ երկիրներ էին Հայաստանի սահմանային շրջաններում: Հէնց այդ պատճառով բդեշխներն անուանւում էին «սահմանապահք», «սահմանակալք», նաեւ «կողմնապահք» կամ «կողմնակալք»»[8]: Կ. Թումանովը գործնականում միանում է նախորդ հեղինակներին՝ գտնելով միայն, որ Արմազիի ձորում յայտնաբերուած արձանագրութիւններում յիշատակուած բդեշխները ոչ այլ ոք են, բայց եթէ Գուգարաց բդեշխները[9]: Բդեշխութիւնների հարցին առանձին ուսումնասիրութիւն նուիրած Ս. Կրկեաշարեանի կարծիքով, հին Հայաստանում եղել են հիմնականում չորս բդեշխներ, որոնցից մէկը կոչուել է «մեծ» եւ եղել թագաւորից յետոյ երկրորդ անձնաւորութիւնը, վարչական սանդղակում՝ յետին պլան մղելով քրմապետերին: Բդեշխութիւններն ստեղծուել են եւ վերջնականապէս ձեւաւորուել Տիգրան Մեծի օրօք: Սկզբնական շրջանում բդեշխութեան պաշտօնը ժառանգական չի եղել եւ թագաւորի կողմից շնորհուել է մերձաւորներից որեւէ մէկին՝ իրեն մատուցած ծառայութեան դիմաց, եւ միայն հետագայում աւատատիրութեան զարգացման հետեւանքով բդեշխները դառնում են ժառանգական պաշտօնեաներ, որն արձանագրուած է հայ մատենագիրների երկերում[10]:

Որչափ մեզ յայտնի է, բդեշխութիւնների խնդրին առանձին ուսումնասիրութիւն նուիրած վերջին հեղինակը Թամար Գամսախուրդիան է: Ուսումնասիրելով բդեշխութեան հաստատութիւնը Պարսկաստանում, Հայաստանում եւ Վիրքում՝ նա գալիս է այն եզրակացութեան, որ բդեշխը Իրանում միշտ չի նշանակել նահանգի կառավարիչ եւ յատկապէս III դարում այն դեռեւս նման բովանդակութիւն չպէտք է ստացած լինէր: Նրա կարծիքով, բդեշխը պէտք է ժառանգուած լինի պարթեւական կամ աքեմենեան ժամանակաշրջանից, որը հաստատում են Արմազիի ձորում յայտնաբերուած վիմագրական յուշարձանները: Անդրադառնալով բդեշխութիւնների թուին՝ հեղինակը

բածուած Հայոց թագաւորութիւնը վարչականօրէն բաժանւում է մի շարք միաւորների, որոնց գլուխ կանգնած Հայոց թագաւորի կուսակալ-կառավարիչները Հայկական աղբիւրներում յայտնի են բդեշխ անունով, իսկ հեղինակները նրանց համարում են Հայոց թագաւորին ենթակայ բազիլեւսներ: Ս. Կրկեաշարեանի կարծիքով, Հին Հայաստանում եղել են հիմնականում չորս բդեշխներ, որոնցից մէկը կոչուել է «մեծ» եւ եղել թագաւորից յետոյ երկրորդ անձնաւորութիւնը, վարչական սանդղակում՝ յետին պլան մղելով քրմապետերին: Բդեշխութիւններն ստեղծուել են եւ վերջնականապէս ձեւաւորուել Տիգրան Մեծի օրօք: Սկզբնական շրջանում բդեշխութեան պաշտօնը ժառանգական չի եղել եւ թագաւորի կողմից շնորհուել է մերձաւորներից որեւէ մէկին՝ իրեն մատուցած ծառայութեան դիմաց, եւ միայն հետագայում աւատատիրութեան զարգացման հետեւանքով բդեշխները դառնում են ժառանգական պաշտօնեաներ, որն արձանագրուած է հայ մատենագիրների երկերում[10]:

Որչափ մեզ յայտնի է, բդեշխութիւնների խնդրին առանձին ուսումնասիրութիւն նուիրած վերջին հեղինակը Թամար Գամսախուրդիան է: Ուսումնասիրելով բդեշխութեան հաստատութիւնը Պարսկաստանում, Հայաստանում եւ Վիրքում՝ նա գալիս է այն եզրակացութեան, որ բդեշխը Իրանում միշտ չի նշանակել նահանգի կառավարիչ եւ յատկապէս III դարում այն դեռեւս նման բովանդակութիւն չպէտք է ստացած լինէր: Նրա կարծիքով, բդեշխը պէտք է ժառանգուած լինի պարթեւական կամ աքեմենեան ժամանակաշրջանից, որը հաստատում են Արմազիի ձորում յայտնաբերուած վիմագրական յուշարձանները: Անդրադառնալով բդեշխութիւնների թուին՝ հեղինակը

հակուած է կարծելու, որ դրանց թիւը իրականում եղել է երկու: Միաժամանակ նա գտնում է, որ մասնագիտական գրականութեան մէջ տարածում գտած այն տեսակէտը, թէ իբր բդեշխները Հայաստանում նախարարներից բարձր էին կանգնած եւ նրանց շարքում չէին դասւում, ճշգրտման կարիք ունի: Առաւել մանրամասն քննութեան առնելով բդեշխական հաստատութիւնը Վիրքում կամ Իբերիայում՝ նա եզրակացնում է, որ բդեշխի պաշտօն նշող տերմինի բովանդակութիւնը դարերի ընթացքում փոփոխուել է, այսինքն՝ այն տարբեր դարաշրջաններում տարբեր հասկացութիւններ է արտայայտել: Ուստի չի բացառւում, որ «բդեշխ» տերմինը վաղ շրջանում ունեցել է այնպիսի բովանդակութիւն, որը տարբերուել է Արմազիի արձանագրութիւններում վկայակոչուած նշանակութիւնից: Հետեւաբար, գտնում է նա, Լէոնտի Մրովելու վկայութիւնն այն մասին, որ «այսպէս կարգաւորեց այս ամէնը Փառնաւազը Պարսից թագաւորութեան նման», թերեւս իրական հանգամանքների արտացոլում է: Հէնց այս դարաշրջանում «բդեշխ» տերմինը եւ պաշտօնը պիտի ներմուծուած լինէր Պարսկաստանից, իսկ թագաւորից յետոյ երկրորդ դէմքը Քարթլիի թագաւորութիւնում, որին Ստրաբոնը ὁ δεύτερος է կոչում, պէտք է նոյնանայ բդեշխին[11]:

Արդ, տեսնենք, թէ ինչ են հաղորդում բդեշխութիւնների մասին հայկական սկզբնաղբիւրները: Մեզ հասած տուեալների համաձայն, Մեծ Հայքի թագաւորութիւնում կային չորս բդեշխութիւններ: Համաձայն Ագաթանգեղոսի մի հաղորդման «Եւ ի զինուորական[12] կողմանէն՝ զչորեսին գահերէցսն իւրոյ տաճարին, որ բդեշխքն կոչին. զառաջին սահմանակալն ի Նոր Ծիրական կողմանէն, եւ զերկրորդ սահմանակալն յԱսորեստանեայց կողմանէն, եւ զերրորդն՝ յԱրուաստան կողմանէն, զչորրորդն՝ ի Մասքթաց կողմանէն. զմեծ իշխանն Անգեղ տան, եւ թագադիր ասպետն, ...»[13]: Այս տեղեկութիւնից դժուար չէ եզրակացնել, որ բդեշխը զինուորական պաշտօնեայ էր, ըստ որում այս եւ այլ հաղորդումների համաձայն, անգամ մեծամեծ կամ աւագ նախարարների համեմատութեամբ՝ գահերէց: Այս իրողութիւնը հաստատում է նաեւ Փաւստոս Բուզանդի երկը. «Զայնու ժամանակաւ ապստամբեաց յարքայէն Հայոց մի ի ծառայից նորա մեծ իշխանն Աղձնեաց, որ անուանեալ կոչէր բդեաշխն. որ էր մի ի չորից, գահերէրց, բարձէրէց տաճարին արքունի»[14]:

Ագաթանգեղոսի մէկ այլ տուեալից դժուար չէ եզրակացնել, որ բդեշխները, լինելով հանդերձ բարձերէց եւ գահերէց, այնուամենայնիւ մտնում էին Մեծ Հայքի թագաւորութեան մեծամեծ նախարարների շարքը: Նա, անդրադառնալով Գրիգոր Լուսաւորչին ձեռնադրութեան նպատակով կեսարիա ուղեկցող նախարարներին, գրում է. «Յայնժամ թագաւորն (իմա՛ Տրդատ Գ-ն – Յ. Բ.) վաղվաղակի փութով եւ երկիւղիւ եւ մեծաւ խնդութեամբ հոգացեալ, գումարեաց զգլխաւորս նախարարացն եւ զկուսակալ աշխարհացն. առաջին՝ իշխանն Անգեղ տան, երկրորդ՝ իշխանն Աղձնեաց, որ է բդեաշխն մեծ, երրորդ՝ իշխանն մարդպետութեան իշխանութեանն, չորրորդ՝ իշխանն թագակապ իշխանութեան ասպետութեանն, հինգերորդ՝ իշխանն սպարապետութեան, զօրավար Հայոց աշխարհին. վեցերորդ՝ իշխանն Կորդովտաց աշխարհին, եօթներորդ՝ իշխան Ծոփաց աշխարհին. ութերորդ՝ իշխանն Գուգարացւոց աշխարհին, որ միւս անուանեալ բդեշխն. իններորդ՝ իշխանն Ռշտունեաց աշխարհին. տասներորդ՝ իշխանն Մոկաց աշխարհին. մետասաներորդ՝ իշխանն Ուտիացւոց աշխարհին. երկոտասաներորդ՝ իշխանն

© National Library of Armenia

Ծաւդէից աշխարհին, երեքտասաներորդ՝ իշխանն Ուտիացւոց աշխարհին. չորեքտասաներորդ՝ իշխանն շահապ Զարաւանդ եւ Հեր գաւառի. հինգետասաներորդ՝ իշխանն մաղխազութեան տանն. վեշտասաներորդ՝ իշխանն Արծրունեաց:

Այս իշխանք են ընտիրք, կուսակալք, կողմնակալք, հազարաւորք, բիւրաւորք ի մէջ Հայաստան աշխարհի տանն Թորգոմայ. զորս գումարեաց թագաւորն Տրդատ եւ առաքեաց զնոսա ի կողմանս Կապուտկացւոց, ի քաղաքն Կեսարացւոց, զոր հայերէն լեզուին Մաժաք կոչեն. զի տարեալ զ Գրիգորն՝ քահանայապետ կացուսցեն իւրեանց աշխարհին»[15]: Եթէ փորձենք մեկնաբանել այս հաղորդումը, ապա կարող ենք արձանագրել, որ բոլոր չորս բդեշխներն էլ պատկանում են թագաւորութեան գլխաւոր նախարարների եւ աշխարհների կուսակալների թուին, սակայն դրանք բոլորը չէ, որ բդեշխ են: Ուշադրութիւն է գրաւում մի իրողութիւն եւս: Նահանգների կառավարիչները երկրի ընտրանին են, կուսակալներ, բայց ոչ ժառանգատէր իշխաններ, իրողութիւն, որն ընդամէնը մի քանի տասնամեակ անց արմատապէս ենթարկուելու է փոփոխութեան:

Հարցիս քննութեան առումով հետաքրքիր են Փաւստոս Բուզանդի տեղեկութիւնները, որոնցից մէկն արդէն մէջ ենք բերել: Պարսից Շապուհ Բ-ի (309-379) սանձազերծած պարսկա-հայկական պատերազմներից մէկի ժամանակ, թշնամիներն «առին աւերեցին զմեծ քաղաքն Տիգրանակերտ, որ էր ի գաւառին Աղձնեաց յիշխանութեան բդեշխին. քառասուն հազար երդ, զայն նոյնհետայն ի գերութիւն խաղացուցին. եւ ինքեանք ի Ծոփս մեծ արշաւեցին»[16]: Շատ հետաքրքիր է պատմիչի տեղեկութիւնը հայոց Արշակ Բ թագաւորի դէմ ապստամբած մեծամեծ նախարարների մասին: Համաձայն հեղինակի հաղորդման «Եւ սկսան սորսորել գնալ ի բանակէն Հայոց թագաւորին. թողին զիւրեանց արքայն Արշակ: Բայց նախ այսմ գնալոյ սկիզբն առնէին մեծամեծ աւագանին: Նախ բդեաշխն Աղձնեաց, եւ Նոշիրականն[17] բդեաշխն եւ Մահկեր տանն, եւ Նիհորականն, եւ Դասընտրէին, եւ ամենայն նախարարութիւն Աղձնեաց, եւ զօրն եւ տունն տոհմին Աղձնեաց կողմանն ապստամբեցին յարքայէն Հայոց Արշակայ, եւ չոգան կացին առաջի արքային պարսկաց Շապհոյ. եւ պարիսպ ածէին ի Հայոց կուսէ՝ որ Զորայն կոչեն, դրունս դնէին. եւ զատուցին զիւրեանց աշխարհն ի Հայոց:

Եւ յետ սորա Գուգարաց բդեշխն, եւ յետ սորա Զորայ գաւառին տէրն, եւ Կողբայ գաւառին տէրն, եւ ընդ նոսա Գարդմանաձորոյ տէրն: ...Ապստամբեցին յԱրշակայ արքայէն Հայոց ամուր գաւառն Արձախայ, եւ ամուր գաւառն Տմորեաց, եւ ամուր աշխարհն Կորդեաց. եւ ապա եւ տէր գաւառին Կորդուաց չոգաւ եկաց առաջի թագաւորին Պարսից:

Յետ այսորիկ ապստամբեաց ի թագաւորէն Հայոց եւ ձեռին իշխանութեան տանն Հայոց թագաւորին, որ էր զԱտրպայական աշխարհաւն, յետս եկաց ի թագաւորէն Հայոց Ամուր աշխարհն Մարաց. յետս եկաց յարքայէն Հայոց եւ աշխարհն Կազբից. եթող զարքայն Հայոց եւ գնաց Սաղամուտ տէրն Անձտեայ, ընդ նմա իշխանն մեծի Ծոփաց. եւ գնացին առ թագաւորն Յունաց»[18]:

Բդեշխութիւնները կրկին յիշատակւում են Փաւստոս Բուզանդի կողմից Մուշեղ Մամիկոնեանի պատժիչ արշաւանքի կապակցութեամբ, որի արդիւնքում Մեծ Հայքի թագաւորութեան տարածքային ամբողջականութիւնը վերականգնուեց: Խօսելով հայոց սպարապետի՝ դէպի Վիրք կատարած արշաւանքի մասին՝ պատմիչը գրում է. «Ապա խաղայր սպարապետն Մուշեղ ի վերայ Վրաց արքային, եւ նեղէր զնա մեծապէս. եւ հարկանէր զերկիրն, եւ վանէր զամենայն աշխարհն Վրաց. եւ հանէր ընդ սուր զամենայն ազատս եւ զազգս նախարարացն, զոր եգիտ: Զ Փառնաւազեանսն հրաման տայր սպարապետն Մուշեղ հանել ի խաչ ի մէջ աշխարհին Վրաց. եւ զբդեաշխն Գուգարաց, որ յառաջն ծառայէր թագաւորին Հայոց եւ ապստամբեաց, կալեալ գլխատէր, եւ զազգն որձակոտոր առնէր, եւ զկանայսն եւ զդստերսն ի գերութիւն վարէին: Սոյն օրինակ եւ որ միանդամ ի կողմանն յայն էին նախարարքն, եւ ի թագաւորէն Հայոց եղեն ապստամբ, զամենեսեան գլխատէր. եւ թափէր զամենայն գաւառն, եւ առնոյր պանդանդս, եւ զմնացեալսն ի հարկի կացուցանէր: Եւ զհին սահմանսն, որ յառաջուն էր լեալ յերկիրն Հայոց եւ ընդ երկիրն Վրաց, որ է ինքն մեծ գետն Կուր, այնուհետեւ յինքն վտարեալ՝ դառնայր անտի»[19]:

Մուշեղ Մամիկոնեանը պատժիչ արշաւանք ձեռնարկեց դէպի Աղձնիք եւս, որի մասին պատմիչը յայտնում է. «Դառնայր ապա զօրավարն Մուշեղ յերկիրն Աղձնեաց, եւ հարկանէր զերկիրն ի մեծ ի հարուածս. զի եւ նոքա ապստամբեալ էին յարքայէն Հայոց: Ջերբակալ արարէալ զբդեաշխն Աղձնեաց, առ նմին կոտորեցին զկանայս, եւ զորդիս նոցա ի գերութիւն վարեցին, եւ զմնացեալսն ի հարկի կացուցանէր, եւ վերակացուս ցեալսն ի հարկի կացուցանէր, եւ վերակացուս եւ ոստիկանս յերկրին Աղձնեաց թողուին»[20]:

Հարցի քննութեան շահեկանութիւնից ելնելով՝ անհրաժեշտ ենք համարում մէջբերել նաեւ սպարապետ Մուշեղ Մամիկոնեանի՝ դէպի Նոշիրական եւ Կորդուք կատարած պատժիչ արշաւանքի մասին պատմիչի հաղորդումները: Փաւստոս Բուզանդը յայտնում է, որ «Հարկանէր Մուշեղ զապստամբս Նոշիրական աշխարհին, որ ապստամբեցին յարքայէն Հայոց. առնոյր աւերէր գերէր եւ ի մնացորդացն առնոյր պանդանդս. եւ բնակիչս երկրին ի հարկի ծառայութեան կացուցանէր[21]» եւ «Հարկանէր Մուշեղ սպարապետն եւ զայս գաւառս ապստամբեալս յարքայէն Հայոց, զԿորդուս եւ զԿորդիս եւ զՏմորիս. առնոյր եւ աւերէր. դնէր հարկ մնացորդացն, եւ առնոյր պանդանդս»[22]:

Բդեշխութեան հաստատութեան քննութիւնը լիարժէք չի լինի առանց Պատմահօր հաղորդումների, որոնք անտարակոյս թէ՛ օգնում են խնդրի վերլուծութեանը եւ թէ՛, ցաւօք, նոր հարցեր են ծնում, որոնք պատասխանի կարիք ունեն: Ամէնից առաջ հարկ է նշել, որ Մովսէս Խորենացին տեղեկութիւններ է պահպանել միայն Աղձնեաց եւ Գուգարաց բդեշխութիւնների մասին, որը եւ շատ ուսումնասիրողների մտածել է տուել, թէ բդեշխութիւնների իրական թիւն ընդամէնը երկուսն է: Պատմահայրը յայտնում է, որ Ասորեստանի թագաւոր Սինախերիբը (ըստ Պատմահօր՝ Սենեքերիմ) սպանուում է նրա որդիներ Ադրամելեքի եւ Սանասարի կողմից, որոնք փախչում են Հայաստան: Հետագայ շարադրանքից պարզւում է, որ «Յորոց զմինն յարեւմտից հարաւոյ աշխարհիս մերոյ, մերձ ի սահմանս նորին Ասորեստանի, բնակեցուցանէ Սկայորդին մեր քաջ նախնին, այս ինքն է զՍանասարն. եւ ի սմանէ աճումն եւ բազմասերութիւն լեալ՝ լցին զՍիմն ասացեալ լեառն: Իսկ պերճքն եւ գլխաւորքն ի նոցանէ յետոյ ուրեմն մտերմութիւն վաստակոց առ թագաւորսն մեր ցուցեալ՝ զբդեշխութիւն կողմանցն արժանաւորեցան առնուլ»[23]: Պատմիչի մէկ այլ հաղորդումից պարզւում է, որ Աբգար թագաւորի օրօք Աղձնիքի բդեշխն էր Մար Իհաբը[24], իսկ հայոց Տրդատ Գ թագաւորի մահուանից յետոյ Աղձնեաց բդեշխ՝ մեծ իշխան Բակուրը ապստամբում է եւ փորձում միանալ պարսից Որմիզդ թագաւորին[25]: Մանաճիհը Ռշտունին հարաւային զօրաբանակով եւ կիլիկեցիների օգնական հռոմէական զօրքով ջախջախում է Բակուրի զօրքը, բդեշխ Բակուրն սպանուում է, իսկ նրա Հեշա անունով որդին ձերբակալուում է եւ երկաթէ շղթաներով ու-

© National Library of Armenia

զարկւում Խոսրով Բ Կոտակ թագաւորին[26]:

Անդրադառնալով Գուգարաց բդեշխութեանը՝ Պատմահայրը յայտնում է. «Իսկ Գուշարայ, որ յորդւոցն Շարայի, ժառանգեաց զլեառն Մթին, որ է Կանգարք, եւ զկէս մասինն Ջաւախաց, զԿողբ, զԾոբ, զՁոր, մինչեւ ցամուրն Հնարակերտ: Բայց տէրութիւնն Աշոցայ, եւ զսեպհականութիւնն Տաշրաց կարգէ Վաղարշակ ի զաւակացն Գուշարայ Հայկազնոյ: Իսկ ընդդէմ լերին Կաւկասայ կողմնակալ հիւսիսոյ կարգէ զմեծ եւ զհզօր ազգն, եւ նահապետութեանն անուն կարդայ բդեաշխ Գուգարացւոց, որ էր լեալ ի զաւակէ Միհրդատայ, Դարեհի նախարարի. զոր ածեալ Աղեքսանդրի՝ թողու իշխան ի վերայ գերութեանն ի Վերիացւոց ազգացն, զոր էած Նաբուգոդոնոսոր, որպէս Աբիդենոս պատմէ...»[27]: Մովսէս Խորենացին տեղեկացնում է նաեւ, որ Խոսրով Բ Կոտակի օրօք երկրորդ զօրաբանակի հրամանատարն էր «Միհրան առաջնորդ Վրաց եւ բդեաշխ Գուգարացւոց, սպարապետ հիւսիսային զօրուն», իսկ Մեսրոպ Մաշտոցի օրերում Գուգարաց բդեշխն էր Աշուշան, որի հրաւէրով հայոց գրերի հեղինակը գնում է «յիւր (Աշուշայի – Յ. Բ) իշխանութիւնն ի գաւառն Տաշրաց»[28]:

Մենք, գիտակցաբար, առայժմ խուսափում ենք օտար սկզբնաղբիւրների տեղեկութիւններից, որոնց կ'անդրադառնանք հարցը քննարկելու ընթացքում: Իսկ այժմ տեսնենք, թէ ինչ եզրակացութիւնների կարելի է գալ վերը բերուած տեղեկութիւններից: Նախ անդրադառնանք բդեշխութիւնների քանակին: V դարի հայկական սկզբնաղբիւրներից դժուար չէ տեսնել, որ բդեշխութիւնների թիւն, այնուամենայնիւ, չորս է: Ագաթանգեղոսը յիշատակում է առաջին սահմանակալ բդեշխութիւնը Նոր Շիրականի կողմից, երկրորդ սահմանակալ բդեշխութիւնը Ասորեստանեայց կողմից, երրորդ սահմանակալ բդեշխութիւնը Արուաստանի կողմից եւ չորրորդ սահմանակալ բդեշխութիւնը Մասքթաց կողմից: Այս տեղեկութիւնն անորոշ է, ուստի բնաւ էլ զարմանալի չէ, որ ուսումնասիրողները դրան տարբեր մեկնութիւններ են տուել: Հայաստանի պատմական աշխարհագրութեան քաջագիտակ Հ. Ղ. Ալիշանի կարծիքով Նոր Շիրականի կողմից բդեշխութիւնը պէտք է տեղադրել Ամիդի եւ Մարդինի, Ասորեստանեայց կողմիցը՝ Մծբինի եւ Նինուէի, Արուաստանի կողմիցը՝ Միջագետքում եւ Զաբ անունը կրող գետերի, իսկ Մասքթաց կողմիցը, որի վրայ յունական Ագաթանգեղոսը յաւելում է «եւ Հոնաց», հիւսիսային շրջաններում՝ նոյնացնելով Գուգարաց բդեշխութեանը[29]: Աւելին՝ ճանաչուած աշխարհագրագէտի կարծիքով, Նոշիրականի կամ Նոր Շիրականի բդեշխը նոյնանում է Անգեղտան իշխանին, իսկ Արուաստանի կողմիցը՝ Կորդուացիին[30]: Յ. Մարքուարթը Մասքթաց կողմից բդեշխութիւնը նոյնացնում է Գուգարաց բդեշխութեանը, սակայն առաջին անուանումը կապում է ոչ թէ մասքութների, այլ վրացական Մեսխեթի երկրամասի կամ Մոսք կոչուած ցեղի անունների հետ[31]: Հեղինակն Աղձնեաց բդեշխութիւնը նոյնացնում է Արուաստանի կողմիցի՝ նի հետ[32], իսկ Նոր Շիրականի ենթակայութեան ներքոյ տեսնում է ոչ միայն Մարաց աշխարհը, այլեւ, ըստ երեւոյթին, Տմորիք, Կորդիք եւ Կորդուք գաւառները: Հասկանալի է, որ Մարքուարթը Նոր Շիրականի բդեշխութեան մէջ է մտցնում Մահկերտունը եւ Դասնը[33]: Աւելին, Գուգարաց բդեշխութեան ենթակայութեան ներքոյ փորձում է տեսնել սահմանակից Շակաշէն, Ուտի, Գարդման եւ այլ գաւառներ[34]: Հեղինակը, Ասորեստանեայքի տակ հասկանալով Ասորիքը, բաւականին

համարձակ եւ, ըստ էութեան, չհիմնաւորուած փորձ է կատարում Ասորեստանեայց կողմից բդեշխութեան ենթակայութեան տակ տեսնել Ծոփք Շահունի, Անգեղտուն, Մեծ Ծոփք եւ Անձիտ (Ἀνζιτηνή) գաւառները[35]:

Որոշակի հետաքրքրութիւն են ներկայացնում հայ պատմագիտութեան երախտաւոր Ն. Ադոնցի տեղադրութիւնները: Նրա կարծիքով, Նոշիրականը, Մահկերտունը, Դասնը եւ Նիհորականը գտնուել են մէկ՝ Նոշիրականի բդեշխութեան կազմում[36]: Հեղինակը բդեշխ է համարում Անգեղտան իշխանին, սակայն լոկ մեծամեծների դասին է վերագրում Կադմէացի իշխանին[37]: Ս. Երեմեանը Աղձնեաց բդեշխութեան մէջ է մտցնում Մեծ Հայքի Աղձնիք աշխարհն ամբողջութեամբ, Գուգարաց բդեշխութեան իշխանութիւնը տարածում է ամբողջ Գուգարքի (աշխարհացոյցեան) վրայ, Նոր Շիրականի բդեշխութեան մէջ է մտցնում Մեծ Հայքի Պարսկահայք աշխարհի տարածքի մեծ մասը՝ բացառութեամբ Հեր եւ Զարեւանդ գաւառների, եւ Նիհորական, Դասն եւ Մահկերտուն գաւառները, իսկ Ասորեստանեայց կողմից բդեշխին է վերագրում Կորճայք աշխարհի տարածքը[36]: Աւելի ուշ, ինչպէս կարելի է դատել նրա կազմած քարտէզներից, նա Աղձնիքի բդեշխութեան տարածքը սահմանափակում էր միայն Արձն եւ շրջակայ մի քանի փոքր գաւառներով[37]: Բդեշխութիւնների խնդրին անդրադարձած Կ. Թումանովն, առաւելապէս, հետեւում է Ն. Ադոնցին եւ Յ. Մարքուարթին: Ըստ նրա դասակարգման, բդեշխութիւնները եղել են Մարաց կողմից կամ Ադիաբենէի, Ասորիքի կողմից կամ Ծոփքի, Արաբական կամ Արուաստանի կողմից կամ Աղձնիքի եւ Մոսքական կամ վրացական կողմից կամ Գուգարքի[38]:

Այլեւս չխորանալով այլ ուսումնասիրողների կարծիքների մէջ, որոնք, ըստ էութեան, նոր բան չեն աւելացնում, փորձենք տեղադրել Ագաթանգեղոսի յիշատակած բդեշխութիւնները՝ սկսելով Նոր Շիրականի բդեշխութիւնից: Ուշադրութիւն է գրաւում այն իրողութիւնը, որ Ագաթանգեղոսի յիշատակութեան «զառաջին սահմանակալն ի Նոր Շիրական կողմանէն» արտայայտութիւնը բովանդակային առումով չի համապատասխանում միւս բդեշխութիւններին: Ի տարբերութիւն միւսների, որոնք անուանուած են Մեծ Հայքին սահմանակից երկրների կամ ժողովուրդների անուններով, Նոր Շիրականի բդեշխութիւնը, որի գոյութիւնը Մեծ Հայքի կազմում գոնէ IV դարում կասկածից վեր է, փոխանակ կոչուելու հարեւան երկրամասի անունով, կոչւում է «սահմանակալն ի Նոր Շիրական կողմանէն»: Թէ ինչո՞ւ է բդեշխութեան անունը նման ձեւով հանդէս գալիս Ագաթանգեղոսի մօտ, դժուար է ասել: Մեր կարծիքով, հնարաւոր են երկու բացատրութիւններ: Շատ հաւանական է, որ բնագրում սկզբնապէս եղել է պարզապէս «ի Շիրական կողմանէն», որը գրիչների կողմից սրբագրուել է «ի Նոր Շիրական կողմանէն», հաւանաբար, Փաւստոս Բուզանդի երկի ազդեցութեամբ, որտեղ բդեշխութիւնը յստակ կրում է Նոր Շիրական անունը: Նման եզրակացութեան համար մեզ հիմք են ծառայում «Աշխարհացոյց»-ի տեղեկութիւնները: Հայ աշխարհագրական երկը, նկարագրելով Քուստի Խուարասանի[39] կամ Արեւմտեան կողմը, յիշատակում է Նոտարտայ եւ Շիրական անունները կրող երկու աշխարհ[40]: Մեր կարծիքով, Մծբնի 298 թ. հաշտութեամբ Շիրական աշխարհի մի մասը միացւում է Մեծ Հայքի թագաւորութեանը, որը Պարսկահայքի մի քանի գաւառների հետ

© National Library of Armenia

յանձնուում է հայոց արեւելեան բդեշխի կառավարմանը եւ ստանում Նոր Շիրական անունը: Հասկանալի է, որ Սասանեան Պարսկաստանի կազմում մնացած Շիրական աշխարհի մեծ մասի պատճառով հայկական բդեշխութիւնը կոչուելու էր «Սահմանակալ ի Շիրական կողմանէն»: Սակայն նշուած բդեշխութիւնը Նոր Շիրական կարող էր կոչուել նաեւ մէկ այլ պատճառով: Տարբերակելու համար բդեշխութիւնը Այրարատ աշխարհի Շիրակ գաւառից, առաջինը կարող էր ստանալ Նոր Շիրական կամ գուցէ անգամ Նոր Շիրակ անունը: Յամենայն դէպս, Սեբէոսի երկը վերջին անուանումով է կոչում յիշեալ երկրամասը[41]:

Ելնելով նման բացատրութիւնից եւ սկզբնաղբիւրների տուեալներից՝ մենք չենք կարող համաձայնել Յ. Մարքուարթի եւ Յ. Մանանդեանի տուած բացատրութիւններին: Գերմանացի հայագէտն իր վերջին աշխատութիւններում գտնում էր, որ Փաւստոսի եւ Ագաթանգեղոսի վկայութիւնները Նոր Շիրականի բդեշխութեան մասին՝ որպէս Արշակունեաց թագաւորութեան չորս սահմանակալ իշխանութիւններից մէկի, ոչ միայն ճիշտ չեն, այլեւ պատմական արժէք չունեն: Ըստ նրա, Նոր Շիրական է անուանուել ամբողջ Ադիաբենէն, որը Սասանեան Պարսկաստանի անկապտելի մասն էր, հետեւաբար միայն Տիգրան Մեծի օրօք Հայոց տէրութեանը միացուած այդ երկիրը IV դարում Մեծ Հայքի թագաւորութեան սահմանակալ իշխանութիւն լինել չէր կարող: Նա, իր յետմահու լոյս տեսած "A Catalogue of the Provincial Capitals of Persia" աշխատութեան մէջ, հիմնուելով Թաբարիի եւ Իբն-Խորդադբեհի տեղեկութիւնների վրայ, փորձ է անում Նոր Շիրական տեղանունը բացատրելու իբրեւ Not-Artaschirakan անուան կրճատուած ձեւ, իսկ այն կապում է Արտաշիր Սասանեանի կողմից Մոսուլի շրջանում հիմնուած նոյնանուն քաղաքի հետ[42]: Հարցին այլ կերպ է մօտեցել Յ. Մանանդեանը, որի կարծիքով «Աշխարհացոյց»-ում հանդիպող Նոտարտայ եւ Շիրական երկրանունները պէտք է միացուեն եւ կարդացուեն Նոտարտա[յ]շիրական, որը Սասանեան Պարսկաստանի երկրներից էր[43]: Այսուհանդերձ ընդունելի չէ նաեւ Յ. Մանանդեանի տեսակէտը: Խնդիրն այն է, որ Նոտարտան, որի ճիշտ գրութիւնը Նոտատր[այ] ձեւով պահպանել է «Աշխարհացոյց»-ի համառօտ խմբագրութիւնը, նոյնանում է Մոսուլի շրջանում գտնուող Բեթ-Նոհադրային, որի ծագումը Նոտատրայից՝ t>h հնչիւնափոխութեան հետեւանքով, ոչ մի կասկած չի յարուցում:

Յ. Մարքուարթը, իրաւացիօրէն, իր "Ērānšahr" աշխատութեան մէջ Նոտարտան եւ Շիրականը համարել է երկու առանձին աշխարհներ՝ նոյնացնելով առաջինը Բեթ-Նոհադրային, իսկ երկրորդը տեղադրելով այժմեան Ուշնուի կամ հին Շնաւհ գաւառի շրջանում, ուր, համաձայն Թէոփիլակտէս Սիմոկատտայի, գտնուել է Սիրագանների գիւղը[44]: Ն. Ադոնցը հետեւել է Յ. Մարքուարթին, սակայն եկել է այն եզրակացութեան, թէ «Աշխարհացոյց»-ում Նոհադրա է կոչուել, ըստ երեւոյթին, ամբողջ Ադիաբենէն եւ որ Շիրականը թերեւս Նոհադրայի հայկական հոմանիշն է[45]: Գ. Հոֆմանը, յենուելով Ռոուլինսոնի կողմից Սիրագանների գիւղը Ուշնուի շրջանում Tepe Sirgân-ի հետ նոյնացնելու վրայ, ենթադրել է, որ Sirgān-ը աղերս ունի հայ պատմիչների Նոր-Շիրականի հետ, որը պէտք է տեղադրուի Ուրմիոյ Լճի մերձակայքում[46]: Այս տեսակէտը, որ պաշտպանել է Յ. Մանանդեանը[47], կիսում ենք եւ

մենք:

Մեծ Հայքի Պարսկահայք աշխարհի աշխարհացոյցեան նկարագրութիւնը, որն սկսւում է ոչ թէ հարաւից կամ հիւսիսից, այլ կենտրոնական մասից, հաւաստում է, որ յիշեալ աշխարհի տարածքը բաղկացած է եղել՝ դրանից առաջ կամ յետոյ, երկու վարչական շրջաններից: Ելնելով այն իրողութիւնից, որ «Աշխարհացոյց»-ը գրուել է III դարի աշխարհագրերի նիւթերի հիման վրայ V դարում՝ դժուար չէ տեսնել, որ Պարսկահայքի հիւսիսային մասը զբաղեցրել է Փաւստոս Բուզանդի յիշատակած Կորճէք (իմա՛ Կորճայք Բ) աշխարհը, որտեղ գտնուել է Սաղամաս բնակավայրը[48]: Այլի կամ Կուռիճան գաւառից մինչեւ Արիսի, որ է Ողեա, գաւառի տարածքը ներառեալ մտել է մէկ այլ վարչական շրջանի մէջ, որը, դատելով Նիհորական, Դասն կամ Դասընտրէ եւ Մահկերտուն գաւառների հարեւանութիւնից, եղել է Նոր Շիրականի սահմանակալ իշխանութիւնը[49]: Նշուած տարածքի աղերսը Նոր Շիրականի հետ հաւաստում է ոչ միայն Թեփէ-Սիրգանը, այլեւ ներկայումս Շիրքեանդի կամ Շիրքեանդի կոչուող գիւղը, որի անունն, ամենայն հաւանականութեամբ, աղաւաղումն է Շիրական անուանման: Աւելին, շատ հնարաւոր է, որ Շիրքեանդին է հէնց Թէոփիլակտէս Սիմոկատտայի յիշատակած Սիրագանոն գիւղը[50]:

Փաւստոս Բուզանդը, խօսելով Արշակ Բ-ի դէմ ապստամբած հայ նախարարների մասին, նշում է, որ նրանց մէջ էր «Նոշիրական բդեշխն, եւ Մահկեր տանն, եւ Նիհորականն, եւ Դասընտրէին»: Կասկածից վեր է, ինչպէս նկատել են բազմաթիւ ուսումնասիրողներ, որ Նոշիրականի բդեշխը գերակայութիւն ունի Մահկերտան, Նիհորականի եւ Դասընտրէի իշխանութիւնների նկատմամբ: Ելնելով այդ բացայայտ իրողութիւնից, ինչպէս նաեւ այն փաստից, որ յիշեալ երեք իշխանութիւնները չեն արտացոլուել հայոց թագաւորների Գահնամակներում, որին մենք դեռ կ՝անդրադառնանք՝ վերը բերուած տեղեկութիւնը թերեւս մի փոքր աղաւաղուել է գրիչների կողմից եւ Նիհորականը Մահկերտան ու Դասընտրէի նման սկզբնապէս դրուած է եղել սեռական հոլովով. «Նոշիրական բդեաշխն, եւ Մահկերտանն, եւ Նիհորականին, եւ Դասընտրէին»: Նոր Շիրականի բդեշխի ենթակայութեան ներքոյ էին Պարսկահայքի Այլի, որ է Կուռիճան, Մարի, Թրաբի, Արիսի, որ է Ողեա եւ յիշեալ երեք գաւառները, որով նրա իշխանութիւնը տարածուում էր եօթ գաւառների վրայ: 387 թ., երբ Մեծ Հայքի թագաւորութիւնը բաժանուեց Հռոմէական կայսրութեան եւ Սասանեան Պարսկաստանի միջեւ, միւս բդեշխութիւնների հետ մէկտեղ Նոր Շիրականի բդեշխութիւնը նոյնպէս հանուեց Արեւելահայկական թագաւորութեան կազմից: Անջատման իրաւական կողմն այն էր, որ հայոց թագաւորը, ընդունելով Սասանեան արքայից արքայի գերակայութիւնը եւ դառնալով նրա հաւատարիմը (վասսալը), կորցնում էր իր գերիշխանութիւնը բդեշխութիւնների նկատմամբ, որոնք այսուհետ պէտք է ենթարկուէին պարսից արքային: Սակայն, ինչպէս կարելի է եզրակացնել սկզբնաղբիւրների անուղղակի տեղեկութիւններից, բդեշխութիւնների ինչ-ինչ հատուածներ մեզ անյայտ պատճառներով հանուել են նրանց կազմից եւ թողնուել Արեւելահայկական թագաւորութեան կազմում: Ինչպէս հաւաստում է Ուխտանէսի երկը, 387 թուից յետոյ, իսկ աւելի որոշակիօրէն 428 թ. Արեւելահայկական թագաւորութիւնը վերացնելուց յետոյ էլ Այլի կամ Կուռիճան գաւառը շարունակում է մնալ

© National Library of Armenia

Հայոց մարզպանութեան մէջ[51]:

Ագաթանգեղոսի ցանկում յաջորդ երկու բդեշխութիւնները անուանւում են «զերկրորդ սահմանակալն յԱսորեստանեայց կողմանէն, եւ զերրորդն՝ յԱրուաստան կողմանէն»: Նոր Շիրականի տեղադրութիւնը եւ յիշեալ երկրների թուարկման աշխարհագրական հերթականութիւնը, որը տրւում է արեւելք-արեւմուտք ուղղութեամբ, կամենում ենք, թէ ոչ, ստիպում է մտածել, որ Արուաստանի կողմից սահմանակալը Աղձնեաց բդեշխն է, հետեւաբար Ասորեստանեայց կողմից սահմանակալի տիրոյթները պէտք է փնտրել Նոր Շիրականի եւ Աղձնիքի միջեւ: Զնայած սկզբնաղբիւրների լռութեանը, ստիպուած ենք, կարծես, արձանագրել, որ երկրորդ սահմանակալի դերում կարող է հանդէս գալ միայն Կորդուքի իշխանը: Յանգելով նման եզրակացութեան՝ Յ. Մանանդեանը գտնում էր, որ նրա ենթակայութեան տակ պէտք է գտնուէին, ըստ երեւոյթին, նաեւ Տմորիքը եւ Կորդիքը[52]: Այս խնդիրը, որին ստիպուած կը լինենք անդրադառնալ մէկ այլ հարցի կապակցութեամբ եւս, մեզ կանգնեցնում է որոշ բարդութիւնների առաջ: Ամէնից առաջ Կորդուաց իշխանը եւ ոչ մի կապակցութեամբ չի հանդիպում բդեշխի պաշտօնով կամ տիտղոսով, եւ, ամէն ինչից դատելով, Տմորիքը եւ Կորդիքը վարչականօրէն չեն գտնուել Կորդուքի իշխանութեան ենթակայութեան ներքոյ: Կորդուքի իշխանին Ամիանոս Մարկելինոսը մի կապակցութեամբ կոչում է satrapa (satrapa Corduenae), որը կարող էր թէ՛ բդեշխ նշանակել եւ թէ՛ նախարար, սակայն հայկական աղբիւրների տեղեկութիւնները խիստ կասկածելի են դարձնում, եթէ չասենք բացառում են բդեշխ իմաստը: Ինչ վերաբերում է Տմորիքին, ապա այն, համաձայն V դարի սկզբնաղբիւրների, եղել է արքունական տիրոյթ եւ բնաւ էլ պատահական չէ, որ «Գահնամակ»-ը, «Գահնամակ-Զօրանամակ»-ը կամ որեւէ այլ աղբիւր Տմորիքի իշխանութիւն չեն յիշատակում: Ըստ Մովսէս Խորենացու՝ Արտաշէս Ա Թագաւորի (189-160) դայեակ Սմբատ Բագրատունին «Հրամանաւ Արտաշիսի բնակէ ի Տմորիս, որ այժմ կոչի Կորդրիք, ի յԱլկի ընտացեալ զբազմութիւն գերուոյն. քանզի էր ի ծերութեան կին արարեալ յասորեստանեայց հուպ յայն կողմանս, զոր յոյժ սիրեաց, վասն այնորիկ եւ զնորին կողմամբք բնակեցաւ»[53]: Եղիշէն, անդրադառնալով հայ ապստամբների՝ Աւարայրի ճակատամարտից յետոյ Պարսից դէմ մղած պայքարին, նշում է, որ «որք էին յամուրս Տմորեաց», քաջութեամբ յարձակուեցին «ի մօտաւոր աշխարհն Պարսկաց» եւ մեծ աւերածութիւններ գործեցին[54]: Վարդանանց պատմիչի հաղորդումից յստակ երեւում է, որ Տմորիքը գտնուում էր Հայոց մարզպանութեան կազմում, որը սահմանակցում էր մօտակայ պարսից մի ինչ-որ երկրամասի: Իհարկէ, տեսականօրէն չի բացառւում, որ Տմորիքը կարող էր գտնուել Կորդուաց «սահմանակալ» իշխանի ենթակայութեան ներքոյ եւ միայն 387 թ. անջատուել «բդեշխութիւնից» ու միացուել Արեւելահայկական թագաւորութեան բուն տարածքին՝ աւելի ուշ մաս կազմելով Հայկական մարզպանութեան: Սակայն այս կարծիքին մեծապէս խանգարում է Թովմա Արծրունու մի հետաքրքիր տեղեկութիւնը: Վասպուրականի պատմիչի հաղորդմամբ, հայոց Արտաշէս Ա Թագաւորի ժամանակներից Փոքր Աղբակ գաւառի Ջլմար եւ Սրինգ ամրոցները պատկանում էին Արծրունիներին[55]: Հասկանալի է, որ Արծրունիների սեփականութիւն կազմող Փոքր Աղբակը, որը, դատելով Փաւստոս Բուզանդի տեղեկութիւններից[56], մտնում էր Տմորիքի մէջ,

չէր կարող Կորդուքի ենթակայութեան տակ գտնուել: Թերեւս, կարելի էր կարծել, որ գոնէ Կորդիքը կամ Կորդրիքը մտել է Կորդուաց «սահմանակալ» իշխանութեան մէջ, սակայն այդ երկրամասի՝ Հայոց մարզպանութեանը վերաբերելը եւ առանձին իշխանութիւն չունենալը կրկին կասկածելի են դարձնում Կորդիքի պատկանելիութիւնը Կորդուաց սահմանակալ իշխանութեանը: Եւ եթէ դրան գումարենք այն իրողութիւնը, որ գոնէ IV դարի 60-ական թուականներին Կորդուքը, Կորդիքը եւ Տմորիքը առանձին վարչական շրջաններ էին, ապա Կորդուքի կազմում, լինի այն բդեշխութիւն, թէ ոչ, Կորդիքի եւ Տմորիքի գտնուելը բացառւում է: Ասորեստանի կողմից «սահմանակալ բդեշխութիւնը» ինչ-որ կարծես չի համապատասխանում միւս բդեշխութիւնների չափորոշիչներին: Մի կողմից՝ սահմանակալ բդեշխութիւնը, դատելով սկզբնաղբիւրների տեղեկութիւններից, գոյութիւն ունի, սակայն այն չունի իր բդեշխական տարածքը: Միւս կողմից՝ Մովսէս Խորենացու պատմութիւնը, կարծես թէ, տեղեակ չէ նրա գոյութեանը, իսկ բդեշխը չի յիշատակւում Գրիգոր Լուսաւորչին Կեսարիա ուղեկցած հայոց մեծամեծ իշխանների շարքում: Ահա ծառանում են հարցեր, որոնց պատասխանը կարող ենք ստանալ այս քննութեան արդիւնքում:

Արուաստանի կողմից սահմանակալ իշխանութիւնը նոյնանում է Աղձնեաց բդեշխութեանը: Սակայն նրա մէջ տեսնել Մեծ Հայքի աշխարհացոյցեան Աղձնիք Մեծ աշխարհի ամբողջ տարածքը կամ էլ Արձն գաւառը՝ շրջակայ մի քանի գաւառներով, ինչպէս կատարում է Ս. Երեմեանը, ճիշտ չէ: Անգեղտան ներքինի իշխանութեան գոյութիւնը, ինքնստինքեան, բացառում է Քաղիրթ գետից դէպի արեւմուտք գտնուող գաւառների գտնուելը Աղձնեաց բդեշխութեան կազմում: Իսկ, ելնելով Փաւստոսի մէկ այլ հաղորդումից, թէ ապստամբեց հայոց Արշակ Բ թագաւորի դէմ «Նախ բդեաշխն Աղձնեաց, ... եւ ամենայն նախարարութիւն Աղձնեաց, եւ զօրն եւ տունն տոհմին Աղձնեաց կողմանն»[57], կարելի է եզրակացնել, որ Աղձնեաց բդեշխի ենթակայութեան տակ են գտնուել մի քանի նախարարութիւններ, ինչպէս նաեւ փոքր գաւառներ, որոնք կառավարուել են բդեշխի կողմից նշանակուած գաւառակալներով: Այս եզրակացութեան օգտին են վկայում «ամենայն նախարարութիւն» արտայայտութիւնը, որը հաւաստում է բդեշխի ենթակայութեան տակ գտնուող ժառանգատէր նախարարութիւնների մասին, ինչպէս նաեւ, «զօրն եւ տունն տոհմին Աղձնեաց կողմանն» հաղորդումը, որը մենք նոյնացնում ենք Աղձնեաց կողմում գտնուող գաւառակալ իշխաններին, որոնք սոսկ վերակացուներ էին եւ ժառանգատէր իշխանների չէին վերածուել: Առայժմ տեսականօրէն նշենք, որ Աղձնեաց բդեշխութեան մէջ կարող էին մտնել Աղձնիք աշխարհի լեռնային գաւառները, սակայն, մանրամասներին կ՝անդրադառնանք բդեշխութիւնների՝ «իմ վասսալի վասսալը իմ վասսալը չէ» սկզբունքի հետ կապուած քննութեան առնչութեամբ[58]:

Վերջին բդեշխութիւնը, ինչպէս վերը նշել ենք, Ագաթանգեղոսը կոչում է «(սահմանակալն) ի Մասքթաց կողմանէն»: Մեզ համար անհասկանալի եւ անբացատրելի պատճառներով ուսումնասիրողների մեծ մասը փորձել է Մասքթացի տակ հասկանալ Մոսքերին կամ վրացական Մեսխեթի երկրամասը եւ չորրորդ սահմանակալին, ինչպէս եւ պէտք էր սպասել, նոյնացրել է Գուգարաց բդեշխին: Սակայն, եթէ Մասքթաց կողմից

© National Library of Armenia

սահմանակալին անպայման պէտք է նոյնացնել Գուգարաց բդեշխին, ապա ոչ մի կերպ չի կարելի մասքուլթներին կապել Մոսքերի կամ Մեսխեթի երկրամասի հետ: Հարկ ենք համարում նաեւ նշել, որ Գուգարաց բդեշխութեան տարածքը գոնէ մինչեւ Մեծ Հայքի թագաւորութեան 387 թ. բաժանումն ու 428 թ. անկումը բնաւ էլ չի համապատասխանել Մեծ Հայքի Գուգարք աշխարհի տարածքին: Պատմահօր մի արժէքաւոր տեղեկութեամբ, Հայկեաններից Գուշարը, որ Շարայի որդիներից էր, «ժառանգեաց զլեառն Մթին, որ է Կանգարք եւ զկէս մասինն Ջաւախաց, զԿողբ, զԾոբ, զՁոր, մինչեւ ցամուրն Հնարակերտ: Բայց զտէրութիւնն Աշոցայ, եւ զսեպհականութիւնն Տաշրաց կարգէ Վաղարշակ ի զաւակացն Գուշարայ Հայկազնոյ: Իսկ ընդդէմ լերինն Կաւկասայ կողմնակալ հիւսիսոյ կարգէ զմեծ եւ զհզօր ազգն, եւ նահապետութեանն անուն կարդայ բդեշխ Գուգարացւոց, որ էր լեալ ի զաւակէ Միհրդատայ, Դարեհի նախարարի»[59]: Որքան էլ հաճելի չլինի, այնուամենայնիւ, հակասութիւն է նկատւում տուեալ հաղորդման սկզբի եւ վերջի միջեւ: Առանձնապէս մեծ սրամտութիւն չի պահանջւում եզրակացնելու համար, որ Գուշարի ստացած ժառանգութիւնը գործնականում համապատասխանում է Գուգարաց բդեշխութեանը: Մովսէս Խորենացու ասելով, Գուշարին ժառանգութիւն են հասել Կանգարքը, Ջաւախքի մի մասը (իմա՛ Ջաւախք վերինը), Կողբը, Ծոբը եւ Ձորը, սակայն պատմական աշխարհագրութեանը քիչ թէ շատ լաւատեղեակ ուսումնասիրողի համար պարզ է, որ տիրել յիշեալ գաւառներին, եթէ իշխանաւորի ենթակայութեան տակ չէ Տաշիրի կենտրոնական գաւառը, որը, ցաւօք, պատմիչը չի յիշատակում Գուշարի առնչութեամբ, պարզապէս հնարաւոր չէ: Թերեւս այդ կարելի է բացատրել հեղինակի կողմից Տաշրաց սեպհականութեան մասին տրուած տեղեկութեամբ: Լինելով Հայաստանի հարաւային աշխարհներից Տուրուբերանի ծնունդ՝ Պատմահայրն, ըստ երեւոյթին, ազդուելով Տաշրաց սեպհականութեան գոյութեան փաստից եւ, չմտածելով, որ կարող էր եւ Տաշիրի մէկ այլ վարչական շրջան գոյութիւն ունենալ, գիտակցաբար Տաշիրը դուրս է թողել Գուշարի տիրոյթներից: Որ Տաշիրը պէտք է գտնուէր աւանդական Գուշարի տիրոյթներում, յստակ երեւում է Գուգարաց բդեշխ Աշուշային տրուած Տաշրացւոց իշխան տիտղոսից[60] եւ Տաշիրի՝ բդեշխական իշխանանիստ գաւառ լինելուց[61]: Սակայն միաժամանակ չենք կարող հաշուի չնստել Պատմահօր յիշատակութեան հետ՝ կապուած Տաշրաց սեպհականութեան գոյութեան հետ: Այն, ինչը մենք այսօր անուանում են Տաշրատափ, իրականում Տաշրաց սեպհականութեան տարածքն է, որը 387 թ. Գուգարաց բդեշխութիւնը Հայոց թագաւորութիւնից անջատելիս թողնուել է Արեւելահայկական թագաւորութեան մէջ: Տաշրաց սեպհականութեան տիրակալն է, որ Հայոց մարզպանութեան իշխանների թւում մասնակցում է Վարդանանց պատերազմին եւ հերոսաբար զոհւում Աւարայրի ճակատամարտում[62]: Եւ նրա անունը բոլորովին էլ չպէտք է մեկնաբանել Վերին, ինչպէս հասկանում է Ս. Երեմեանը, եւ յօրինել գոյութիւն չունեցող եւ ոչ մի տեղ չէ վկայուած Վերին Տաշիր գաւառը: Վրէն անունը շատ սովորական էր եւ տարածուած հայերի շրջանում: Վրէն Տաշրացու եւ Տաշրացւոց իշխան Աշուշայի զուգահեռ օգտագործումն աներկբայ է դարձնում հին ժամանակներում միասնական մեծ Տաշիր գաւառի գոյութիւնը, որի հարաւային ոչ մեծ հատուածը մեզ համար անծանօթ պայմաններում վերածուում է Տաշրաց սեպհականութեան: Թերեւս միակ, առայժմ անբացատրելի խնդիրը մնում է Պատմահօր կողմից Գուշարի ժառանգած գաւառների ցուցակում Թռեղքի բացակայութիւնը: Ըստ երեւոյթին, այն հեռաւոր ժամանակներում Թռեղքը մաս է կազմել բդեշխանիստ Տաշիր գաւառի եւ այդ պատճառով էլ տեղ չի գտել Պատմահօր նկարագրութեան մէջ, կամ էլ պատմիչը պարզապէս մոռացել է յիշատակել այդ գաւառանունը: Այս մօտեցման դէպքում, դժուար չէ տեսնել, որ Գուգարաց բդեշխութեան տարածքում են գտնուել Կանգարք, Թռեղք, Վերին Ջաւախք, Կողբ, Ձոր, Ծոբ եւ Տաշիր (առանց Տաշրաց սեպհականութեան հատուածի) գաւառները[63]: Արտահան եւ Կաղարջք կամ Կղարջք գաւառները, գոնէ Հայոց թագաւորութեան շրջանում, Գուգարաց բդեշխութեան մէջ չեն մտել: Այդ հաւաստում է ոչ միայն Կ. Պտղոմէոսի «Աշխարհագրութիւն»-ը, որը գիտի Կատարզենէ անունով առանձին աշխարհ (իմա՛ Կաղարջք)[64], այլեւ Ագաթանգեղոսի երկը, որը Մեծ Հայքի աշխարհներից մէկը III դարի վերջին եւ IV դարի սկզբին կոչում է Կաղարջք[65]:

387 թ. Գուգարաց բդեշխութիւնը միւսների նման անջատւում է Մեծ Հայքի թագաւորութիւնից եւ միացւում Վրաց մարզպանութեանը: Սակայն, հակառակ ուսումնասիրողների ընդհանրացած կարծիքի, այն չի միացւում Վրաց թագաւորութեանը, այլ վերջինիս հետ միասին կազմում է Վրաց մարզպանութիւնը: Շատ հնարաւոր է, որ, երբ 387 թուից Վրաց թագաւորութիւնը անդառնալիօրէն ներառնուեց Սասանեան Պարսկաստանի կազմի մէջ եւ սկզբնական շրջանում պարսից արքունիքը սիրաշահող քաղաքականութիւն էր վարում նրա նկատմամբ, մարզպանի պարտականութիւնը դրուած էր Վրաց թագաւորի վրայ, ինչպէս կարելի է ենթադրել Կորիւնի մի հաղորդումից[66]: Սակայն, եթէ այդ վկայութիւնը հաւաստում է վրաց Արձիւղ կամ Արձիլ թագաւորի որոշ գերակայութիւնը բդեշխութեան նկատմամբ, ապա միաժամանակ ցոյց է տալիս, որ բդեշխութիւնը թագաւորութեան մաս չէ եւ փաստօրէն ինքնուրոյն է: Ուստի պատահական չէ, որ պատմիչը խստիւ տարբերակում է Մաշտոցի գործունէութիւնը Տաշրացւոց աշխարհում Վրաց մարզպանութեան մնացած մասերից: Պատմահայրը գրում է. «Հրաւիրի անտի ի բդեշխէն Գուգարացւոց Աշուշայէ՝ յաղագս նորին գործոյ գալ յիւր իշխանութիւնն ի գաւառն Տաշրաց, ուր երթեալ՝ լաւագոյնս վարդապետեաց եւ հաստատագոյնս քան զամենայն աշակերտեալսն առ որով ժամանակաւ Արձիլ ոմն էր կացեալ թագաւոր Վրաց»[67]: Ինչպէս տեսնում ենք, պատմիչի մօտ ամէն ինչ յստակ է: Աշուշա բդեշխը հանդէս է գալիս որպէս լիակատար անկախ անձ, իսկ Մաշտոցի առաքելութիւնն էլ Գուգարք կատարւում է նրա հրաւէրով[68]: Ի միջի այլոց, Խորենացին անուղղակի կարծես ընդունում է Աշուշայի ձեւական ենթակայութիւնը Վրաց Արձիլ թագաւորից, որը հնարաւոր էր վերջինիս՝ Վրաց մարզպան լինելու դէպքում:

Շուտով պարսից արքունիքի քաղաքականութիւնը Վրաց թագաւորութեան նկատմամբ փոփոխութիւն կրեց: Վրաց մարզպաններ սկսեցին նշանակուել պարսիկներից եւ անգամ հայերից: Վրաց մարզպանի տնտեսական հիմքը ուժեղացնելու նպատակով 428 թ. աշխարհացոյցեան Գուգարք աշխարհի արեւմտեան հատուածը անջատուեց Հայքից եւ, մտցուելով Վրաց մարզպանութեան մէջ, դրուեց մարզպանի անմիջական ենթակայութեան ներքոյ: Դատելով Եղիշէի որոշ հաղորդումներից՝ կամենալով ուժեղացնել

© National Library of Armenia

իր իշխանութիւնը Այսրկովկասում, պարսից արքունիքն սկսեց սիրաշահել Գուգարաց բդեշխներին՝ նրանց յանձնելով մարզպանութեան պաշտօնը[69]: Հասկանալի է, որ քաղաքական այս ակտի հետեւանքով մարզպանի անմիջական կառավարմանը յանձնուած արեւմտեան Գուգարքը, ինքնաբերաբար, միացուեց մարզպանի պաշտօնը զբաղեցնող Գուգարաց բդեշխների տիրոյթներին, որի հետեւանքով էլ փաստօրէն ձեւաւորուեց Գուգարք աշխարհն այն տեսքով, ինչպէս ներկայանում է «Աշխարհացոյց»-ի մէջ:

Մենք բաւական կանգ առանք Գուգարաց բդեշխութեան տարածքի եւ իրաւական կացութեան հարցերի վրայ, սակայն անհրաժեշտ է պատասխանել այն հարցին, թէ ինչո՞ւ է այն կոչուել Մասքթաց կողմից: Ագաթանգեղոսի երկի տարբերութիւնները Մասքթաց-ը կասկածի տակ առնելու ոչ մի իրաւունք չեն տալիս, ուստի մնում է լոկ բացատրել այս անուանման հանդէս գալու պատճառները: Ինչպէս վերը նշեցինք, Գուշարի ժառանգութիւն ստացած գաւառները թուարկելով՝ Պատմահայրը տուել է իրականում բդեշխութեան տարածքը: Սակայն նոյն հաղորդման մէջ Գուգարաց բդեշխի անձը օտարւում է կարծես յիշեալ տարածքից եւ այն ներկայանում է իբրեւ ընդդէմ Կովկասեան լեռների՝ հիւսիսային կողմնակալ, որը սերում է ոչ թէ Գուշարեաններից, այլ Դարեհի (?) նախարար Միհրդատի որդուց: Հայկական սկզբնաղբիւրներում յաճախ Գուգարացւոցը շփոթւում է Գարգարացւոցի հետ, սակայն որչափ մեզ յայտնի է, այդ հարցին որեւէ վստահելի պատասխան չի տրուել: Մեր կարծիքով, պատճառն այն է, որ I դ. Հիւսիսային Կովկաս ներխուժած Ալաններին ճնշման տակ հիւսիսկովկասեան մի շարք ցեղեր, որանց թւում էին նաեւ Գարգարացիները եւ ուդիները, ստիպուած են լինում տեղաշարժուել եւ մուտք գործել Այսրկովկաս: Ամենամեծ վտանգը Հայոց թագաւորութեան համար ներկայացնում էին Գարգարացիները եւ շատ հաւանական է, որ գուգարաց բդեշխն այդ շրջանում կոչուել է նաեւ «սահմանակալն ի Գարգարացւոց կողմանէն»: Զխորանալով հարցիս մանրամասների մէջ, որոնք հանգամանալից քննութեան են առնուած մեր «Արցախի, Արեւելից կողմերի եւ Ղարաբաղի տարածքի հարցի շուրջը» աշխատութեան մէջ[70], կամենում ենք լոկ նշել, որ մեր տեսակէտն ամրապնդւում է Ստրաբոնի, Պլինիոս Աւագի վկայութիւններով, որոնց համաձայն I դարի առաջին կէսին գարգարացիները եւ ուդիները, որոնք համարւում են Աղուանից թագաւորութեան գլխաւոր ցեղերից, դեռեւս գտնւում էին Հիւսիսային Կովկասում, Կերաւնեան լեռների եւ մերձակայ շրջաններում[71]: Ահա սրանց դէմ է, որ պէտք է պայքարէր Մեծ Հայքի հիւսիսային կողմնակալը: Գուգարաց բդեշխութեան ստեղծումը Մովսէս Խորենացին վերագրում է հայոց՝ պարթեւական ծագումով Վաղարշակ թագաւորին, որի ինքնութեան եւ ժամանակի հարցերը մինչեւ օրս էլ մեծ վէճերի առարկայ են[72]:

II դ. Այսրկովկասը ենթարկուեց մասքթաց ցեղերի արշաւանքին: Անդրադառնալով դրան՝ Դիոն Կասսիոսը գրում է, որ «Հրեաների պատերազմն այսպէս աւարտուեց. մի երկրորդ պատերազմ սկսեցին ալանները - սրանք մասսագէտներ են - Փարասմանէսի դրդմամբ: Այն մեծապէս վնասեց Ալբանիային եւ Մեդիային, շօշափեց նաեւ Հայաստանն ու Կապադովկիան, որից յետոյ ալանները մասամբ համոզուեցին Վոլոգեսոսի ընծաներից, մասամբ էլ վախեցան Կապադովկիայի կառավարիչ Փլաւիոս Արրիանոսից եւ դադարեցրին (պատերազմը)»[73]: Կ. Վ. Տրեւերն ալան-մասագէտների արշաւանքը դնում է 135 կամ 136 թ.[74]: Նրանց արշաւանքի էր հրահրել Վիրքի թագաւոր Փարասման Բ-ն, որը լաւ յարաբերութիւններ էր պահպանում Հռոմի հետ եւ կայսեր կողմից արժանացել էր զանազան պատիւների: Կ. Վ. Տրեւերի կարծիքով, չնայած պատմագիտութեան մէջ ընդհանրացած տեսակէտին, ալան-մասագետներին ընծաներով ետ պահեց պատերազմից ոչ թէ պարթեւական թագաւոր Վաղարշ Բ-ն (105-147), այլ հայոց Վաղարշ Ա (113-140) թագաւորը, որի համար հեշտ էր լեզու գտնել եկուորների հետ, քան հեռաւոր Տիզբոնում նստած պարթեւական թագաւորի[75]: Չնայած Դիոն Կասսիոսի ոգեւորիչ խօսքերին, թէ ալանները մասամբ համոզուեցին Վաղարշի ընծաներից եւ մասամբ էլ վախեցան Կապադովկիայի կառավարիչ Փլաւիոս Արրիանոսից ու դադարեցրին պատերազմը, իրականում արշաւանքի արդիւնքում նրանք հաստատուեցին Այսրկովկասում՝ կրկին արմատական փոփոխութիւններ առաջ բերելով Աղուանքի թագաւորութեան էթնիկական կազմի մէջ: Ալան-մասագէտների կամ ըստ հայկական սկզբնաղբիւրների, մասքութների ներխուժումը ծանր կացութիւն ստեղծեց Մեծ Հայքի թագաւորութեան հիւսիսարեւելեան սահմանների համար: Գուգարաց սահմանակալ բդեշխութեան հիմնական խնդիրն է դառնում մասքութների առաջխաղացման կասեցումը, ուստի եւ այն ստանում է «սահմանակալն ի Մասքթաց կողմանէն» անունը: Գարգարացիները մասքութների ճնշման ներքոյ քաշւում են Աղուանից թագաւորութեան արեւմտեան շրջանները եւ պարտահական չէ, որ Վարդանի «Աշխարհացոյց»-ը նկարագրելով Շաքիի կողմերը, գրում է. «Գարգարացիք Շաքի է»[76]:

Սկզբնական շրջանում մասքութները, զբաղեցնելով Աղուանից թագաւորութեան նշանակալից մասը, ապրում էին տոհմատիրական կարգերով եւ, ամենայն հաւանականութեամբ, դեռեւս պատրաստ չէին պետական գործունէութեան: Պատահական չէ, որ III դարի նիւթերի հիման վրայ գրուած Ասիական՝ Սարմատիայի նկարագրութեան մէջ տրուած են նաեւ մասքութները. «Որոյ ըստ հիւսիսոյ՝ Մասքութաւն ազգն բնակեալ են ի Վարդանեան դաշտին, մինչեւ ցԿասպից ծովն, յոր բազուկ Կաւկասայ հպի, յորմէ ածեալ է զպարիսպն Դարբանդայ, այսինքն Կապ եւ դռնոն՝ քաղաք պահակին Ճորայ. աշտարակ անագին ի ներքս ի ծովուն կացուցեալ»[77]: Դատելով աւելի ուշ ժամանակների տեղեկութիւններից, դեռեւս պետութիւն չստեղծելով, մասքութները իրենց փաստական իշխանութիւնը տարածում են մինչեւ Կուր գետը, որը Մեծ Հայքի թագաւորութեան հիւսիսարեւելեան բնական սահմանագիծն էր: Մեզ յայտնի չէ, թէ ինչպէս ձեւաւորուեց Մասքթաց թագաւորութիւնը, սակայն՝ հիմնուելով պարսից Ներսեհ թագաւորի Պայկուլիի արձանագրութեան վրայ, կարելի է վստահօրէն ասել, որ III դարի վերջերին այն արդէն գոյութիւն ունէր եւ նրա տիրակալը կոչւում էր Մեսքեթների (իմա՛ մասքութների) թագաւոր[78]: Դատելով նոյն արձանագրութիւնից՝ նրանք դեռեւս չեն տիրացել Աղուանքի ամբողջ տարածքին[79]: Սակայն IV դարի 20-ական թուականների վերջերին, երբ Գրիգորիս եպիսկոպոսը՝ Գրիգոր Լուսաւորչի թոռը, նշանակուեց Աղուանից կողմերի եւ Վրաց եպիսկոպոս, Աղուանքի ամբողջ տարածքը գտնւում էր մասքութների վերահսկողութեան ներքոյ եւ պատմիչը հաւասարութեան նշան է դնում Աղուանքի եւ Մասքթաց պետութեան միջեւ. «(Գրիգորիսը) ի հնգետասանումենից եւ հաս յաստիճան եպիսկոպոսութեան աշխար-

© National Library of Armenia

հին Վրաց եւ Աղուանից, այսինքն սահմանացն Մազքթաց»[80]: Մասքութները մեծ աւերածութիւններ գործեցին Սանեսան Թագաւորի՝ դէպի Մեծ Հայք ձեռնարկած արշաւանքի շրջանում, որը ուսումնասիրողները սովորաբար դնում են 335 թուին, սակայն, մեր կարծիքով, այն տեղի է ունեցել 331 կամ 332 թուականին: Թշնամին աւելի քան մէկ տարի ասպատակում էր երկիրը, մինչեւ որ սպարապետ Վաչէ Մամիկոնեանը Մասքթաց Սանեսան Թագաւորի զօրքերին ջախջախեց Օշականի ճակատամարտում, որտեղ էլ սպանուեց Սանեսանը: Հասկանալի է, որ մասքութների բարբարոսական ցեղերի ներկայացրած վտանգն էլ պատճառ է դարձել, որ Գուգարաց բդեշխութիւնը կոչուի «ի Մասքթաց կողմանէն», որովհետեւ իրենց ցեղային ինքնութիւնը կորցրած եւ վրացականացման ուղին բռնած Մոսքերը ոչ մի կերպ չէին կարող լինել այն ուժը, որի դէմ պէտք է ուղղուած լինէր Գուգարաց բդեշխութեան ողջ հզօրութիւնը: Յամենայն դէպս, Պատմահօր հաղորդումներից լոկ կարելի է եզրակացնել, որ հիւսիսային բդեշխութիւնը ստեղծուել էր ընդդէմ Կովկաս լեռան, այսինքն ընդդէմ հիւսիսկովկասեան լեռնականների, որոնք ժամանակ առ ժամանակ խանգարում էին Հայոց Թագաւորութեան անդորրը իրենց Այսրկովկաս կատարած աւերիչ ասպատակութիւններով եւ արշաւանքներով:

Մենք քննարկեցինք բդեշխութիւնների անուանումների եւ տեղադրութեան հարցը: Այժմ փորձենք պարզել այն առանձնայատկութիւնը, որով բդեշխները կամ նրանց մեծ մասը տարբերւում էին միւս մեծամեծ նախարարներից: Վերն արդէն ցոյց տուեցինք, որ, լինելով զինուորական սահմանակալ իշխաններ, բդեշխներն իրենց ռազմական կարողութեամբ շատ չէին տարբերւում Մեծ Հայքի որոշ մեծամեծ իշխաններից, սակայն այդուհանդերձ արքունիքում նրանք գահերէց էին եւ բարձերէց: Կարծում ենք, որ այդ իրողութիւնը պայմանաւորուած է մի առանձնայատկութեամբ եւս, որը զարմանալիօրէն մինչեւ օրս չի դարձել պատմաբանների քննութեան առարկայ: Պէտք է խոստովանել, որ մինչեւ օրս էլ չի յաջողուել պարզել, թէ Մեծ Հայքի թագաւորութիւնում գործե՞լ է, արդեօք, «իմ վասսալի վասսալը իմ վասսալը չէ» աւատատիրական սկզբունքը: Պատմիչների տեղեկութիւնները վերաբերում են առաւելապէս թագաւոր-նախարար փոխյարաբերութեանը եւ պարզ չէ, թէ ինչպիսին են եղել թագաւորի եւ նրա հաւատարիմ կամ վասսալ նախարարի հաւատարիմի կամ վասսալի փոխյարաբերութիւնները: Ըստ որում, խօսքը չի վերաբերում պայմանական հողատիրութեան սկզբունքով նախարար-ազատ յարաբերութիւններին: Այս հանգամանքը մեզ եւս տարիներ շարունակ հետաքրքրել է, մինչեւ որ մեզ համար պարզ դարձաւ, որ աւատատիրութեան յիշեալ սկզբունքը որոշակիօրէն գործել է նաեւ Հայաստանում:

«Գահնամակ»-ների ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ պատմիչների երկերում յիշատակւում են ժառանգատէր իշխաններ, որոնք տեղ չեն գտել նրանցում: Անդրադառնալով Արշակ Բ-ի դէմ ապստամբած իշխաններին՝ Փաւստոս Բուզանդը, ինչպէս վերը մէջբերեցինք, յիշատակում է Ձորի եւ Կողբի իշխաններին: Պատմիչի տեղեկութիւններից յստակ է, որ թէ՛ մէկը եւ թէ՛ միւսը ժառանգատէր նախարարներ են, յայտնի է նաեւ, որ Ձոր կամ Ձորոփոր եւ Կողբ կամ Կողբոփոր գաւառները մտել են Գուգարք աշխարհի եւ Գուգարաց բդեշխի իշխանութեան մէջ: Ուստի, ելնելով այն իրողութիւնից, որ դրանք տեղ չեն գտել

«Գահնամակ»-ում կամ «Գահնամակ-Զօրանամակ»-ում, պէտք է ենթադրել, որ յիշեալ իշխանները Գուգարաց բդեշխի վասսալներն էին, բայց ոչ Հայոց Թագաւորի: Արշակ Բ-ի դէմ ապստամբեցին, ըստ Փաւստոս Բուզանդի, ոչ միայն Աղձնեաց բդեշխը, այլեւ Աղձնեաց բոլոր նախարարները, որոնց անունները, ցաւօք, պատմիչը չի պահպանել: Սակայն այդ բացը հեշտութեամբ կարելի է լրացնել՝ դիմելով «Աշխարհացոյց»-ի օգնութեանը: Համաձայն հայոց աշխարհագրական երկի, Աղձնիք աշխարհը լեռնային մասում ունէր եօթ գաւառ. Կեթիկ, Տատիկ, Ազնուաց ձոր, Երխեթք, Գզեղիս, Սալնոձոր եւ Սանասունք[81]: Կասկած անգամ չի կարող յարուցել այն միտքը, որ նշուած գաւառներից մի քանիսը եղել են ժառանգատէր նախարարների տիրոյթներ, իսկ միւսները, համաձայն պատմիչի, Աղձնեաց բդեշխական ընտանիքի անդամների կառավարչութեանը յանձնուած հողեր, որոնց վերակացուները նոյնպէս ապստամբում են: Ինչպէս տեսնում ենք, այստեղ եւս կան նախարարներ, որոնք Թագաւորի վասսալները չեն: Աւելին՝ յիշեալ ցանկին Թերեւս կարելի է աւելացնել նաեւ Ասպակունեաց ձոր գաւառը, որը պատմական ոկունեաց ձոր գաւառը, որը պատմական որոշակի զարգացման հետեւանքով յայտնուել էր Տուրուբերանի կազմում: Հաւանաբար, այն մինչեւ Աղձնիքից անջատուելը հանդիսացել է Ասպակունի ընտանիքի սեփականութիւնը եւ ենթարկուել է Աղձնեաց բդեշխերին, սակայն հետագայում, երբ այն հանուել էր Աղձնիքի կազմից, մեզ անյայտ պատճառներով գաւառի նախարարական ընտանիքը մարել է: Այս նոյն երեւոյթը յատուկ է նաեւ Նոր Շիրականի բդեշխութեանը, որի ենթակայութեան տակ էին գտնուում արքունի «Գահնամակ»-ի մէջ չմտած Նիհորական, Դասսընտրէ կամ Դասն եւ Մահկերտուն գաւառների տէրերը: Բացառութիւն է կազմում միայն Ասորեստանեայց կողմից սահմանակալ բդեշխութիւնը, որը, ինչպէս վերը տեսանք, ուսումնասիրողները փորձել են նոյնացնել Կորդուաց իշխանութեան հետ: Քննութիւնից պարզ դարձաւ, որ Կորդուքի իշխանները երբէք բդեշխ չեն կոչուել, իսկ նրանց ենթակայութեան ներքոյ գտնուող ժառանգատէր նախարարութիւնների մասին պատմութիւնը լռում է, որովհետեւ այդպիսիք, ըստ էութեան, չեն եղել: Հետեւաբար մնում է եզրակացնել, որ Ասորեստանեայց կողմից բդեշխը արքունիքի կողմից դեռեւս սեփական կառավարման երկիր չէր ստացել, ուստի եւ պայմաններ չէին ստեղծուել բդեշխութեան հաւատարիմ կամ վասսալ ժառանգատէր նախարարութիւնների հանդէս գալու համար: Յիշեալ սահմանակալ բդեշխութիւնը շարունակում էր ներկայացնել լոկ արքունի մէկ բիւրանոց զօրաբանակը, որի գլուխ կանգնած էր արքայազներից մէկը:

387 թ. Մեծ Հայքի բաժանումից յետոյ բդեշխութիւններն անջատուեցին Հայոց Թագաւորութիւնից, սակայն մեզ անյայտ պատճառներով նրանց տարածքի մի մասը թողնուեց Արեւելահայկական Թագաւորութեանը, իսկ 428 թուականից Հայոց մարզպանութեան մաս կազմեց: Աղձնեաց բդեշխութիւնը պարփակուեց Արձն գաւառի սահմաններում, իսկ Աղձնիքի լեռնային գաւառները միացուեցին Խոսրով Գ-ի տիրոյթներին[82]: Ճիշտ է, Մաւրիկիոսի վարչական վերակառուցումներով VI դարի վերջին յիշեալ գաւառները միացուեցին Մեսոպոտամիա պրովինցիայի մէջ մտնող Արզանենէ կլիմային[83], սակայն արաբական տիրապետութեան դէմ հայերի մղած յամառ պայքարի հետեւանքով դրանք կրկին վարչականօրէն միացուեցին բուն հայկական շրջանե-

© National Library of Armenia

րին[84]: Գուգարաց բդեշխութիւնից անջատուեց եւ Արեւելահայկական թագաւորութեանը միացուեց Տաշրաց սեպհականութիւնը, իսկ Նոր Շիրականի բդեշխութիւնից՝ Այլի գաւառը: Հասկանալի է, որ գոնէ սկզբում բդեշխական յատուկ տարածք չունեցող, Նոր Շիրականը Ասորեստանեայց բդեշխութեանը նման տարածքային խնդիրների առարկայ դառնալ չէր կարող, սակայն, դատելով Եղիշէի երկից, Պարսից արքունիքը 428 թ. յետոյ բդեշխական կարգավիճակ տուեց Կորդուաց իշխաններին:

Այժմ անդրադառնանք բդեշխութիւնների հանդէս գալու ժամանակին: Ելնելով այն իրողութիւնից, որ ըստ Ագաթանգեղոսի՝ բդեշխներն ամէնից առաջ զինուորական պաշտօնեաներ էին. սահմանակալ իշխանների հաստատութիւնը ծնունդ էր առել հին ժամանակներից: Ասենք, որ պետութիւնը ռազմական տեսակէտից չորսի բաժանելու իրողութիւնը շատ սովորական էր Արեւելքում, որին անգամ տուրք տուեց Հռոմէական կայսրութիւնը Դիոկլետիանոս կայսեր (284-305) օրոք: Եթէ, իհարկէ, այդ սոսկ Պատմահօր կռահումը չէ, ապա ռազմական առումով Հայաստանի առաջին բաժանումը չորս կողմերի տեղի է ունեցել դեռեւս, ըստ հեղինակի, Արամի, իսկ իրականում Արամանի թագաւորի օրոք: Պարզւում է, որ Արամ-Արամանին «զարեւելեանն եւ զհարաւայինն նուաճեալ, յանձնեալ էր ի ձեռն երկուց ցեղիցս այսոցիկ, Սիսակեանցն զարեւելս, եւ որք ի Կադմեայ տանէն՝ զԱսորեստանին՝ ոչ ինչ այնուհետեւ կասկած շփոթից ուստեք ունէր»[85]: Դատելով Մովսէս Խորենացու հետագայ հաղորդումներից՝ կարելի է ենթադրել, որ արեւմտեան կողմից սահմանակալ էր նշանակուած մէկ բիւր զօրքով Մշակը[86], որի աթոռանիստը Մաժաք, հետագայի Կեսարիա քաղաքն էր: Բոլորովին էլ չժխտելով Արամանիի թագաւորութեան ռազմական առումով չորս մասի բաժանուած լինելու հաւանականութիւնը՝ այնուամենայնիւ, մենք հակուած ենք կարծելու, որ Սիսակեանների եւ Կադմէացիների մասին յիշատակութիւնը վերաբերում է աւելի ուշ ժամանակներին: Ըստ որում, նման եզրակացութիւնը նոյնպէս բխում է Խորենացու տուեալներից: Մեծ Հայքի զինուորական առումով չորսի բաժանելու եւ սահմանակալներ նշանակելու վերաբերեալ որոշակի տեղեկութիւնը Պատմահայրը վերագրում է հայոց Արտաշէս թագաւորին: Եթէ պատմիչի հաղորդումը վերաբերում է հայոց Արտաշէս Ա (189-160 թթ. մ.թ.ա.) թագաւորին եւ ոչ թէ Արտաշէս անուան տակ թաքնուած Տրդատ Ա Արշակունուն (66-88 թթ.), ապա Մեծ Հայքի անկախութիւնը վերականգնած Արտաշէս Ա արքան «Բաժանէ ... եւ զիշխանութիւն զօրուն՝ ընդ չորս. զարեւելեան զօրն թողու ի վերայ Արտաւազդայ, եւ զարեւմտեանն տայ Տիրանայ, զհարաւայինն ի Սմբատ հաւատայ եւ զհիւսիսայինն ի Զարեհ»[87]: Ուշադրութիւն է գրաւում մի շատ կարեւոր իրողութիւն, որ զօրաբանակների հրամանատարներ են կարգւում թագաւորական ընտանիքի անդամները կամ էլ արքունիքին շատ մօտ կանգնած անձինք: Ամէն ինչից դատելով՝ չորս կողմերի կամ դռների սահմանակալ իշխանները դեռեւս բդեշխ չէին կոչւում եւ նրանց իրաւասութիւնները մօտաւորապէս նոյնն էին, ինչպիսիք ունէին IV դարում Մեծ Հայքի չորս սպարապետները, որոնց մասին կը խօսուի ստորեւ:

Բդեշխութեան հաստատութեան մուտքը Մեծ Հայք, ինչպէս այն պատկերացնում էին պարթեւները, տեղի ունեցաւ Մեծ Հայքում Արշակունեաց արքայատոհմի իշխանութեան հաստատումից յետոյ: Այսօր պատմագիտութեան մէջ առաւել քան արմատաւորուել է այն տեսակէտը, թէ պարթեւ Արշակունիների արքայատոհմի կրտսեր ճիւղը հաստատուել է Մեծ Հայքի թագաւորութիւնում Տրդատ Ա-ից սկսած, սակայն կան բազմաթիւ՝ հիմնականում անուղղակի, փաստեր, որոնք ոչ միայն կասկածի տակ են դնում այդ մօտեցումը, այլեւ հաւաստում են յիշեալ արքայատոհմի իշխանութեան հաստատումը Մեծ Հայքում մ.թ.ա. II դարի 30-ական կամ 20-ական թուականներին: Բոլորովին էլ չմտնելով այդ խրթին հարցի խորխորատների մէջ, որը դուրս է սոյն խնդրի հետաքրքրութիւնների շրջանակից, լոկ նշենք, որ ըստ Պատմահօր Մեծ Հայքում հաստատուած Վաղարշակ թագաւորի առաջին գործերից մէկը եղաւ Բագարատ Բագրատունուն նշանակել «ի ծայրս հայերէն խօսից կողմնակալ, իշխան բիւրուց եւ հազարաց, յարեւմտից կուսէ»[88]: Անդրադառնալով Վաղարշակի հետագայ ռազմական վերափոխութիւններին՝ Խորենացին գրում է. «Եւ գունդս եւ պահապանս արքունի կարգէ զչորս, զմի ի իւրաքանչիւր բիւրովք վառելովք ի նոյն ի հին ի զարմից թագաւորացն՝ որք ի մերոյ նախնւոյն ի Հայկայ, որք բուն Ոստանն անուանեալ, որք ընդ ժամանակս ժամանակս ժառանգութիւն ի հարանցն ընկալեալ գիւղս եւ դաստակերտս: Իսկ աստ ուրեմն Պարսից թագաւորութեանն, որպէս լսեմ, այլ ոմանս յարուցեալ գունդս եւ ոստան անուանեալ, ոչ գիտեմ թէ վասն սպառոնելո՞յ ազգին առաջնոյ, թէ վասն ընդդիմութեան իրիք արդեօք շկապեալ եւ ի բաց ընկեցեալ զազգն՝ զայլս ի տեղի նոցա յարուցին գունդս՝ անուամբ արքունի»[89]: Այս տեղեկութիւնից կարելի է եզրակացնել, որ արքունի կողմնակալներից կամ պահապաններից իւրաքանչիւրին յատկացուել է մէկ բիւր զինուորից կազմուած զօրաբանակ եւ որ կողմնակալները նշանակուել են Հայկեանների, իրականում տեղական աւագանու ներկայացուցիչներից, որոնց մի մասը վստահօրէն չէր սերում Հայկեաններից: Ինչ վերաբերում է հետագայ փոփոխութիւններին, ապա պատմիչը յստակ պատկերացում չունի:

Ուշադրութեան արժանի է մի փաստ եւս: Չնայած պատմիչը խնդիրը յստակ չի ներկայացնում, այնուամենայնիւ, Խորենացու տուեալներից կարելի է եզրակացնել, որ Գուգարքում Գուշարեաններին գալիս է փոխարինելու նոր ընտանիք, որը սերում է Դարեհի նախարար ոմն Միհրդատի սերնդից[90]: Գուշարեանները Վաղարշակի հրամանով շարունակում են իշխել Աշոցքի տէրութիւնում եւ Տաշրաց սեպհականութիւնում[91]: Մէկ այլ տուեալի համաձայն, Տուրք կամ Տորք անունով մէկին, որ ըստ պատմիչի սերում էր հայկեան Պասքամի սերնդից, Վաղարշակը նշանակում է կուսակալ արեւմտեան կողմից[92], որը բացայայտ հակասում է նախորդ՝ Բագարատ Բագրատունուն արեւմտեան կողմում կողմնակալ նշանակելու տեղեկութեանը: Հետաքրքիր մանրամասներ է պահպանել Պատմահայրը Աղձնեաց բդեշխութեան մասին: Ըստ հեղինակի Վաղարշակը «Եւ զՇարաշան ի տանէ Սարասարայ հաստատէ բդեաշխ մեծ եւ կուսակալ յարեւմտից հարաւոյ, յեզերս սահմանացն Ասորեստանի, առ ափն Տիգրիս գետոյ, գաւառս պարգեւելով զԱրձն եւ որ շուրջ զնովաւ, եւ զլեառն Տաւրոս, որ եւ Սիմ, եւ զԿղեսուրն ամենայն»[93]: Ամենաթռուցիկ համեմատութիւնն անգամ Աղձնիքի աշխարհացոյցեան նկարագրութեան հետ ցոյց է տալիս, որ Աղձնեաց բդեշխը ստացել էր իրօք միայն Արձնը եւ Աղձնիքի լեռնային եօթ գաւառները, ինչպէս վերը ցոյց տրուեց: Շատ հետաքրքիր է պատմիչի միւս տեղեկութիւնը Վաղարշակի ձեռնարկումների մասին, ըստ որի «Եւ կարգս զինուորութեանց, եւ նոցունց առաջինն եւ երկ-

© National Library of Armenia

որորդս եւ երրորդս եւ որ ի կարգին (հաստատեաց – Յ. Բ.)»[94]: Այս հաղորդումը հաւաստում է արդէն, որ զինուորական պաշտօն զբաղեցնողները եւս որոշակի դասակարգման են ենթարկւում, ուստի բնաւ էլ պատահական չէ, որ Աղձնեաց բդեշխը համարւում էր մեծ բդեշխ, իսկ Գուգարացը՝ այլ բդեշխ:

Առաջին ընկալումն այն է, թէ բդեշխները սովորական սպարապետներ են, որոնց թիւը IV դարի ընթացքում եւ թերեւս դրանից էլ առաջ, չորսն էր: Սակայն առաւել ուշադիր քննութիւնը բացառում է այդ: Արդ, ի՞նչ գիտենք մենք Մեծ Հայքի չորս սպարապետութիւնների մասին: Մովսէս Խորենացին, խօսելով Խոսրով Բ Կոտակի գահ բարձրանալու եւ հռոմէացիների ցոյց տուած օգնութեան մասին, գրում է. «Եկեալ Անտիոքոս (Հռոմէական զօրավար – Յ. Բ.) թագաւորեցոյց զԽոսրով եւ զչորեսին սպարապետն մատոյց ի նոյն իշխանութիւն զօրու, զորս կացուցեալ էր Տրդատայ յիւրում կենդանութեանն՝ յետ մեռանելոյ դայեկին իւրոյ Արտաւազդայ Մանդակունւոյ, որ միագլուխ սպարապետ էր եւ ամենայն Հայոց զօրավար: Առաջին՝ Բագարատ ասպետ, զօրավար, արեւմտեան գնդին. երկրորդ՝ Միհրան առաջնորդ վրաց եւ բդեաշխ Գուգարացւոց, սպարապետ հիւսիսային զօրուն. երրորդ՝ Վահան նահապետ Ամատունեաց, զօրավար արեւելեան գնդին, չորրորդ՝ Մանաճիհր նահապետ Ռշտունեաց, սպարապետ հարաւային զօրուն: Եւ բաժանեալ ետ նոցա զիւրաքանչիւր զօրս»[95]: Այս տեղեկութիւնը փաստւում է պատմիչի մէկ այլ հաղորդմամբ, որը հեղինակը վերագրում է Տրդատ Գ-ին, սակայն՝ ամէն ինչից դատելով, վերաբերում է Տրդատ Բ-ին. «Որով պատճառաւ (Տրդատը – Յ. Բ.) միաբանեալ զամենայն հիւսիսի, հանեալ զօր բազում, գումարտակ արարեալ՝ խաղայ յաշխարհն Պարսից, ի վերայ Շապհոյ որդւոյ Արտաշրի, չորս յիւրոցն առնելով զօրավարս, զՄիհրան առաջնորդ Վրաց, վստահացեալ վասն ի Քրիստոս հաւատոցն, եւ զԲագարատ ասպետ եւ զՄանաճիհր նահապետ Ռշտունեաց եւ զՎահան նահապետ Ամատունեաց»[96]: Հասկանալի է, որ Արտաշրի որդի Շապուհի դէմ արշաւողը ոչ մի կերպ չէր կարող լինել Տրդատ Գ-ն, սակայն, միւս կողմից, վրաց առաջնորդ Միհրանի քրիստոնէութիւն ընդունելը կարող էր կատարուել միայն IV դարի սկզբներին: Ուստի, հիմք ունենալով նաեւ պատմիչի այն տուեալը, թէ «մեռաւ եւ սպարապետն ամենայն Հայոց Արտաւազդ Մանդակունի»[97] եւ միայն դրանից յետոյ չորս սպարապետներ նշանակուեցին, կարելի է եզրակացնել, որ Մովսէս Խորենացին, իրար հետ շփոթելով Տրդատ Բ եւ Տրդատ Գ հայոց թագաւորներին, տեղեկութիւն է պահպանել Տրդատ Բ-ի՝ դէպի Պարսկաստան կատարած արշաւանքի մասին, սակայն, այն վերագրելով Տրդատ Գ-ի գործունէութեանը, մեզ է փոխանցել Տրդատ Գ-ի զօրավարների կամ սպարապետների անունները: Միւս եզրակացութիւնն էլ այն է, որ, հաւանաբար, Տրդատ Բ-ի օրօք չորս սպարապետների հաստատութիւնն առկայ էր:

Սանեսան թագաւորի՝ դէպի Մեծ Հայք կատարած արշաւանքի ժամանակ, ինչպէս հաղորդում է Մովսէս Խորենացին, սպարապետերը կամ զօրապետերն էին Բագարատ Ասպետը, Վահան Ամատունին, Միհրան բդեշխը, որն սպանուեց պատերազմական գործողութիւնների ժամանակ, իսկ հարաւային զօրաբանակը գտնւում էր Խոսրով Բ-ի հրամանատարութեան ներքոյ: Սպանուած Միհրանի փոխարէն թագաւորը սպարապետ է նշանակում Խորխոռունեաց տոհմից Գարջոյլ Մաղխազին[98]: Պատմահայրը Օշականի ճակատամարտում չի յիշատակում սպարապետ Վաչէ Մամիկոնեանի անունը, որն՝ ըստ Փաւստոս Բուզանդի, Օշականի ճակատամարտի յաղթանակի հիմնական կռողն էր, որին օգնում էին Բագարատ Բագրատունին, Մեհունդակ եւ Գարեգին Ռշտունիները, Վահան Ամատունին եւ Վարազ Կամինականը[99]: Այս տեղեկութիւնն, ինչ խօսք, բացատրութեան կարիք ունի: Խնդիրն այն է, որ Խորենացու մօտ բացակայում է հարաւային զօրաբանակի հրամանատարի անունը: Դժուար է ասել, թէ Մանաճիհր Ռշտունին արդէն մահացել էր, թէ ինչ-ինչ պատճառով չէր մասնակցել ճակատամարտին, սակայն մեծ հակասութիւն չկայ, որովհետեւ, յամենայն դէպս, մասնակցում են պատերազմին Մեհունդակ եւ Գարեգին Ռշտունիները, որոնցից թերեւս առաջինի վրայ էր դրուած հարաւային զօրաբանակի հրամանատարութիւնը: Աւելի բարդ է Վարազ Կամինականի իրաւական կացութիւնը, առաւել եւս, որ Պատմահայրը նրա անունը չի էլ յիշում: Մնում է ենթադրել, որ մինչեւ Գարջոյլ Մաղխազին Գուգարաց բդեշխ նշանակելը Վարազ Կամինականը եղել է հիւսիսային զօրաբանակի հրամանատար, որը սակայն ոչնչով փաստարկել հնարաւոր չէ նիւթի պակասութեան պատճառով: Կամ էլ նա պակասութեան պատճառով: Կամ էլ նա գլխաւորել է արքունի սեպուհներից կազմուած զօրագունդը, որ միանգամայն հնարաւոր է:

Արշակ Բ-ի օրօք, թեկուզ եւ միասնական սպարապետի գոյութեանը, թագաւորութիւնը շարունակում էր ռազմական առումով բաժանուած լինել չորս զօրախմբի: Այդ եզրակացութեանը կարելի է գալ ոչ միայն Խորենացու այն տեղեկութիւնից, թէ Հայոց թագաւորը Հայոց արեւելեան զօրքի սպարապետ կարգեց Վահան Ամատունու փոխարէն Վաղինակ Սիւնուն[100], այլեւ Փաւստոս Բուզանդի այն հետաքրքիր հաղորդումից, թէ Արշակ Բ-ն «Եւ հնազանդէր զմեծամեծսն, զիւրաքանչիւր զօրս բաժանեալ յամենայն կողմանց, սահմանացն Հայոց սահմանապահս կացուցանէր»[101]: Այս կարգը գոյատեւեց նաեւ Պապ թագաւորի օրօք, իրողութիւն, որ հաւաստւում է Պատմահօր կողմից Անձեւացեաց նահապետ Գնէլի, որպէս Պապ թագաւորի արեւելեան զօրաբանակի սպարապետի, յիշատակութեամբ. «Գնէլ նահապետ Անձեւացեաց եւ սպարապետ Պապայ արեւելեան զօրուն»[102]: Հայոց թագաւորութեան անկումից յետոյ, բնականաբար, արքունի բանակը չորս մասի բաժանելու եւ սպարապետների ենթակայութեանը յանձնելու կարգը դադարում է գործելուց:

Ստեփանոս Օրբելեանը պահպանել է մի շատ հետաքրքիր տեղեկութիւն այն մասին, որ Հայոց Տրդատ Գ թագաւորը «Իսկ զօրացն եւ աշխարհին չորս միայն կացուցանէ իւրոյ թագաւորութեանն երկրորդ հրամանատարս ի վերայ ամենայնին: Արեւելեան կողմանն՝ իշխանն Սիւնեաց 21 իշխանօք, հիւսիսային կողմանն՝ բդեաշխն Գուգարացւոց 22 իշխանօք. արեւմտեան կողմանն՝ Կորդուացին 21 իշխանօք. հարաւային կողմանն՝ իշխանն Անգեղ-տանն 22 իշխանօք: Զայս այսպէս ի գահ նամակի իշխանացն Հայոց զոր Ղեւոնդ գրեաց, եւ սակայ մի ցուցանէ Ագաթանգեղոսին եւ Ներսիսին»[103]: Մեծ Հայքի բանակի կազմակերպական այս կառուցուածքը տեղ է գտել մեզ հասած «Գահնամակ»-ներից մէկում, որ ուսումնասիրողները պայմանականօրէն կոչում են «Զօրանամակ»[104]: Վերջինիս համաձայն՝ Արեւմտեան դուռը կամ զօրաբանակը գլխաւորել է Անգեղտան իշխանը, Արեւելեան դուռը կամ զօրաբանակը՝ Սիւնեաց իշխանը, Հիւսիսային դուռը կամ զօրաբանակը՝ Գուգարաց բդեշխը եւ Հարաւային դուռը կամ զօրաբանակը՝ Կաղմէացի իշխանը: Ինչ վերաբերում է սրանց ենթակայութեան տակ գտնուող

© National Library of Armenia

իշխանական վաշտերի եւ գնդերի քանակին, ապա Անգեղտան իշխանը գլխաւորում էր 21, Սիւնեաց իշխանը՝ 21, Գուգարաց բդեշխը՝ 22 եւ Կաղմեացի իշխանը՝ 22 իշխանների զօրագնդերը: Դժուար չէ տեսնել, որ այս երկու փաստաթղթերի միջեւ կայ մեծ նմանութիւն, սակայն կան նաեւ տարբերութիւններ: Այսպէս, եթէ երկուսում էլ հիւսիսային զօրաբանակը գլխաւորում է Գուգարաց բդեշխը 22 իշխանների զօրագնդերով, արեւելեանը՝ Սիւնեաց իշխանը 21 իշխանների զօրագնդերով, ապա մի դէպքում Կորդուացին կամ Կաղմէացին արեւմտեան կողմի հրամանատարն է 21 իշխանների զօրագնդերով, իսկ միւս դէպքում հարաւայինինը՝ 22 իշխանների զօրագնդերով եւ մի դէպքում Անգեղտան իշխանը հարաւային զօրաբանակի հրամանատարն է 22 իշխանների զօրագնդերով, իսկ միւս դէպքում՝ արեւմտեանինը 21 իշխանների զօրագնդերով: Սակայն խնդիրը դրանով չի աւարտւում, որովհետեւ, եթէ ինչ-ինչ պատճառներով այս կամ այն զօրաբանակին յատկացուել է 21 կամ 22 իշխանի զօրագունդ եւ ընդհանուր քանակը վերջին հաշուով 84 է, կամ Ստեփանոս Օրբելեանի տեղեկութեան մէջ Անգեղտան համար «Հարաւային կողմանն»-ը կարելի է սրբագրել «Արեւմտեան կողմանն», իսկ Կորդուացիի համար՝ «Արեւմտեան կողմանն»-ը՝ «Հարաւային կողմանն», ապա բացայայտ հակասութիւն կայ Պատմահօր հաղորդումների եւ Ստեփանոս Օրբելեանի ու «Գահնամակ-Զօրանամակ»-ի տեղեկութիւնների միջեւ: Նմանութիւնը, ըստ էութեան, Գուգարաց բդեշխի հիւսիսային զօրաբանակի սպարապետ լինելն է, որովհետեւ արեւելեան զօրաբանակի սպարապետ Վահան Ամատունու դիմաց «Գահնամակ-Զօրանամակ»-ում Սիւնեաց իշխանն է, արեւմտեան զօրաբանակի սպարապետ Բագարատ Բագրատունու դիմաց՝ Անգեղտան իշխանը, հարաւային զօրաբանակի սպարապետ Մանանճիր Ռշտունու դիմաց՝ Կաղմէացին կամ Կորդուացին: Ելնելով կատարուած քննութիւնից, կամայ թէ ակամայ, կարելի է գալ այն եզրակացութեանը, թէ «Գահնամակ-Զօրանամակ»-ի տեղեկութիւնները չեն վերաբերում Տրդատ Գ-ի ժամանակաշրջանին: Այն իրողութիւնը, որ Սիւնեաց Վաղինակ իշխանը նշանակուեց արեւելեան զօրաբանակի հրամանատար կամ սպարապետ, մտածել է տալիս, որ յիշեալ փաստաթուղթը արտացոլում է Արշակ Բ-ի ժամանակների կացութիւնը: Դրան կարծես թէ նպաստում է նաեւ այն հանգամանքը, որ, երբ Արշակ Բ-ն փորձ արեց կաթողիկոսական աթոռ բարձրացնել Զոնակին, ձեռնադրելու եկան միայն Աղձնիքի եւ Կորդուքի եպիսկոպոսները[105]: Նման մօտեցման դէպքում մէկ այլ բարդութիւն է առաջանում: Եթէ մեզ հասած «Գահնամակ-Զօրանամակ»-ը վերաբերում է Արշակ Բ-ի ժամանակներին, ապա ժամանակավրէպ է նրանում Բզնունեաց, Օրդունեաց եւ Մանաւազեան նախարարական տների յիշատակութիւնը, որովհետեւ դրանք մարել էին արդէն IV դարի 30-ական թուականներին: Մնում է ենթադրել, որ մեզ հասած փաստաթուղթը շատ աւելի հին արքունական հրովարտակի խմբագրուած տարբերակն է, որտեղ նախարարական ցանկերը թողնուել են անփոփոխ, սակայն փոփոխուել են կողմերը ներկայացնող սպարապետների տոհմերի անունները:

Մենք բաւականին երկար քննեցինք Մեծ Հայքի թագաւորութեան ռազմական կառուցուածքի խնդիրները, ուստի, բնականաբար, հարց է ծագում, թէ, այնուամենայնիւ, որն էր բդեշխների իրաւական կացութիւնը ռազմական յիշեալ կառոյցում: Եթէ կրկին անդրադառնանք «Գահնամակ-Զօրանամակ»-ին, ապա կը տեսնենք, որ յիշեալ սպարապետութիւնների ենթակայութեան ներքոյ սեփական եւ տարբեր իշխանական զօրագնդերն են: Այլ խօսքով ասած, նրանք, բացառութեամբ Գուգարաց բդեշխութեան, որի մասին դեռ կը խօսուի, արքունական զօրագնդերի ղեկավարութեան հետ գործ չունեն: Բայց չէ որ մենք գիտենք, որ արքունիքը թագաւորութեան կողմնակալների հրամանատարութեան ներքոյ իւրաքանչիւր ուղղութեամբ պահում էր մէկ բիւրից բաղկացած զօրագնդեր: Որ դրանք իրօք կային եւ բնաւ էլ Խորենացու երեւակայութեան արդիւնքը չեն, պարզ երեւում է «Գահնամակ-Զօրանամակ»-ի վերջաբանից[106], որտեղ նախարարական 84 հազարանոց ռազմուժի կողքին[107], որը գլխաւորում են սպարապետները, յիշատակւում է հայկական ընդհանուր 120 հազարանոց բանակը: Խորենացու տուեալներից դժուար չէ եզրակացնել, որ զուտ արքունական զօրաբանակներն, առանց մարդպետական եւ մաղխազական գնդերի, կազմում էին 40 հազար մարտիկ: Բայց ովքե՞ր էին գլխաւորում այդ զօրաբանակները: Անշուշտ, մարդիկ, որոնք մօտ էին կանգնած արքունիքին, ովքեր զինուորական սանդղակում զբաղեցնում էին բարձր դիրք: Վերն ասուածից դժուար չէ յանգել այն մտքին, որ անգամ IV դարում արքունական յիշեալ զօրաբանակների հրամանատարները եղել են բդեշխները, որոնք արքունի տաճարում զբաղեցնում էին ամենաբարձր գահերը, ստանում ամենաբարձր պատիւները, այսինքն գահերէց էին ու բարձերէց: Ի տարբերութիւն բդեշխների, սպարապետները գլխաւորում էին, ինչպէս վերը տեսանք, միայն իշխանական զօրագնդերը: Ըստ երեւոյթին, Գուգարաց բդեշխութիւնը միակ սպարապետութիւնն էր, որ միաժամանակ գլխաւորում էր արքունական հիւսիսային զօրաբանակը: Այդ հանգամանքը, ամենայն հաւանականութեամբ, պայմանաւորուած էր մի կողմից հիւսիսկովկասեան լեռնականների արշաւանքների վտանգով, իսկ միւս կողմից՝ Վիրքը եւ Աղուանքը ռազմակալելու անհրաժեշտութեամբ: Ամենահամեստ հաշուումներով Մեծ Հայքի թագաւորութիւնը Վիրքի եւ Աղուանքի թագաւորութիւններում պահում էր 4000-ոց զօրամաս[108], որը հսկում էր նաեւ Կովկասեան լեռնանցքներին:

Բդեշխներն, անշուշտ, արտօնեալ դիրք էին զբաղեցնում արքունի տաճարում (պալատում), սակայն, ըստ երեւոյթին, նրանց մէջ էլ կար դիրքի որոշակի տարբերութիւն եւ բնաւ էլ պատահական չէ, որ Աղձնեաց իշխանը մեծ բդեշխ էր, իսկ, ասենք Գուգարաց սահմանակալը՝ «միւս»: Թէ ինչպէս էին կոչւում միւս բդեշխները, մեզ յայտնի չէ, բայց չի բացառւում, որ Աղձնեաց բդեշխի նկատմամբ միւսները «կրտսեր» էին կամ պարզապէս «միւս» ինչ-որ յաջորդականութեամբ: Ցամենայն դէպս, Արմազիում յայտնաբերուած եւ Գ. Վ. Ծերեթելու կողմից հրատարակուած երկլեզուեան (արամերէն եւ յունարէն) արձանագրութեան մէջ յիշատակուած Զեւախա անունով բդեշխը համարւում է «կրտսեր» (Ζηουάχου τοῦ νεωτέρου Πιτιάξου)[109]: Դրան յաջորդում է այն մտայանգումը, որ, եթէ Վիրքում եղել է կրտսեր բդեշխ, ապա բնական է, որ նրա կողքին պէտք է գոյութիւն ունենար բդեաշխն մեծ-ը: Անշուշտ, կարելի է նման եզրակացութեան յանգել, եթէ մի ինչ-որ յայտնագործութիւն հաւաստի «բդեաշխն մեծ»-ի գոյութիւնը Վիրքում, որովհետեւ, ամենայն հաւանականութեամբ, ի դէմս Զեւախայի մենք պարզապէս գործ ունենք Գուգարաց բդեշխի հետ, որը Մեծ Հայքի

© National Library of Armenia

բդեշխական համակարգում իրօք կրտսեր էր: Հետեւաբար, այնքան էլ հիմնազուրկ չէ Կիրիլ Թումանովի այն միտքը, թէ Արմազիի ձորում յայտնաբերուած արձանագրութիւնները տեղեկութիւններ են հաղորդում փաստօրէն Գուգարաց բդեշխութեան մասին: Անշուշտ, այս տեսակէտը կարող է տարակոյսներ պատճառել, քանի որ արձանագրութիւնների գիւտը կարծես կատարուած է ոչ թէ Գուգարաց բդեշխութեան սահմաններում, այլ դրանից դուրս: Սակայն այդ փաստարկը առանձնապէս մեծ կշիռ չունի, որովհետեւ բդեշխութեան սահմանները յաճախ անցել են Կուր գետով: Այդ կապակցութեամբ հետաքրքիր են Փաւստոս Բուզանդի տեղեկութիւնները՝ կապուած սպարապետ Մուշեղ Մամիկոնեանի՝ դէպի Գուգարք կատարած պատժիչ արշաւանքի հետ: Ինչպէս յստակ նշում է պատմիչը, հայոց սպարապետը վերականգնում է «զհին սահմանսն, որ յառաջուն էր լեալ յերկիրն Հայոց եւ ընդ երկիրն Վրաց, որ է ինքն մեծ գետն Կուր»[110]:

Հետաքրքրութիւն է ներկայացնում նաեւ բդեշխական ընտանիքների էթնիկական պատկանելիութեան խնդիրը: Համաձայն Մովսէս Խորենացու, Աղձնեաց բդեշխական ընտանիքը սեմական ծագում ունէր եւ սերում էր ասորեստանեան արքայ Սինախերիբի (իմա՛ Սենեքերիմի) որդի Սանասարից: Աղձնեաց բդեշխների սեմական ծագումը հաւաստում է նաեւ Աղձնիքի Մար Իհաբ բդեշխի անունը[111]: Հաւանաբար, պարթեւա-իրանական ծագում ունէր Գուգարաց իշխանական ընտանիքը[112]: Ասորեստանեայց բդեշխները, ամէն ինչից դատելով, նշանակւում էին արքայատոհմի ներկայացուցիչներից[113], իսկ Նոր Շիրականի կամ Նոշիրականի բդեշխների ծագումը պարզապէս անյայտ է: Ուշադրութիւն է գրաւում այն իրողութիւնը, որ բդեշխներ կարգելիս հայոց արքունիքն առանձին նշանակութիւն չի տուել նրանց էթնիկական պատկանելիութեանը:

Դատելով այն իրողութիւնից, որ միայն բդեշխներն էին, որ ունէին հաւատարիմ կամ վասսալ ժառանգատէր իշխաններ՝ անկասկած է, որ աւատականացման ուղին առաջինը նրանք բռնեցին: Թերեւս այդ հանգամանքով պէտք է բացատրել վերջիններիս ապստամբութիւնները հայոց թագաւորի դէմ: Անշուշտ, քիչ չէին նաեւ այն դէպքերը, երբ ապստամբութիւնները ծագում էին՝ կապուած արքունիքի կողմից նրանց իրաւունքները սահմանափակելու հետ, սակայն, այնուամենայնիւ, պէտք է կարծել, որ ապստամբութիւնների ի յայտ գալն աւելի շատ պայմանաւորուած էր երկրի աւատականացման միտումներով: Խոսրով Բ Կոտակի օրօք ապստամբութեան փորձ կատարեց Աղձնեաց Բակուր բդեշխը[114], որի ընտանիքը բնաջնջուեց արքունի զօրքերի կողմից: Իրերի բերումով փրկուեցին միայն բդեշխի Խեշա կամ Հեշա անունով որդին եւ դստերից մէկը, որ կնութեան տրուեց Վաղինակ Սիւնուն, որին էլ թագաւորը տուեց Աղձնեաց բդեշխութեան իրաւունքը: Այս պաշտօնը մնաց Սիւնեաց ընտանիքի ձեռքում, հաւանաբար, մինչեւ Պապ թագաւորի սպանութիւնը կամ Վարազդատի գահընկեցութիւնը, որից յետոյ Մամիկոնեանների օժանդակութեամբ փրկուած Խեշան կարողացաւ մեզ անյայտ պայմաններում վերստանալ իր իշխանութիւնը: Նշուած ապստամբութեան վերաբերեալ Պատմահօր տեղեկութիւնն ունի մի հետաքրքիր մանրամասն, որը տեղ չի գտել Փաւստոս Բուզանդի երկում: Պարզւում է, որ Աղձնեաց բդեշխն իբր, դաւաճանելով հայոց թագաւորին, միացել է պարսից Որմիզդ արքա-

յին[115]: Դժուար չէ կռահել, որ այս անանշան մանրամասնը հեռաւոր արձագանքն է, ամենայն հաւանականութեամբ, Աղձնեաց բդեշխի մի ինչ-որ ելոյթի կամ անգամ ապստամբութեան, որ նա ունեցել է Որմիզդ արքայի գահակալութեան շրջանում, եւ որը թիւրիմացաբար Պատմահայրը միացրել է IV դարի իրադարձութիւններին: Բդեշխութիւնը յանձնելով Սիւնեաց իշխաններին՝ արքունիքը, փաստօրէն, փորձել է ուժեղացնել իր իշխանութիւնն այս երկրամասում: Եթէ հաւատանք պատմիչին, Սիւնեաց իշխանները հաւատարմօրէն էին ծառայում հայոց թագաւորներին, չնայած, միւս կողմից՝ Փաւստոս Բուզանդի հաւաստմամբ, Աղձնեաց բդեշխը հայոց արքունիքի դէմ ապստամբած իշխաններից մէկն էր: Չի բացառւում, որ ապստամբողը եղել է Վաղինակ Սիւնու ժառանգներից մէկը, որովհետեւ հայ-պարսկական կռիւների շրջանում Աղձնիքի բդեշխութեան ենթակայութեան տակ գտնուող Տիգրանակերտ քաղաքում վերակացու էր Արշակ Բ-ի աներ Անդովկ իշխանը[116]:

Պատմութիւնը տեղեկութիւններ է պահպանել նաեւ Գուգարաց բդեշխի՝ Արշակ Բ-ի դէմ ունեցած ապստամբութեան մասին: Եթէ Փաւստոս Բուզանդի տեղեկութիւնները համապատասխանում են իրականութեանը, ապա բդեշխական ընտանիքը որձակոտոր արուեց[117] եւ, բնականաբար, այդ պատուաւոր պաշտօնը յանձնուեց նոր ընտանիքի, որից էլ սերում էր Աշուշա բդեշխը:

Մենք բաւականին հանգամանալից փորձեցինք քննութեան առնել հայկական սկզբնաղբիւրների նիւթը: Հարցիս ամբողջական քննութիւնն, անշուշտ, պահանջում է մանրամասն քննութեան առնել նաեւ բդեշխութիւնների մասին օտար աղբիւրներում պահպանուած հաղորդումներն ու այլեւայլ տեղեկութիւնները: Վաղ Սասանեան ժամանակաշրջանից մեզ յայտնի են երկու արձանագրութիւն, որտեղ վկայակոչուած է bitaxš տերմինը: Դրանցից առաջինը թողել է պարսից Շապուհ Ա թագաւորը միջին պարսկերէն, պարթեւերէն եւ յունարէն լեզուներով 262 թուին Քաաբա-ի-Զարդուշտ անունը կրող շինութեան պատի վրայ[118], որը գտնւում է Պերսեպոլսից ոչ հեռու, իսկ երկրորդը արձանագրել է տուել պարսից Ներսեհ թագաւորը արեաց գահին տիրելուց յետոյ: Այն յայտնի է Պայկուլիի արձանագրութիւն անունով, որը գրուել է երկու լեզուներով՝ միջին պարսկերէն եւ պարթեւերէն[119]: Շապուհ Ա-ի արձանագրութիւնը պարունակում է սասանեան առաջին գահակալներ, արքայից արքաներ Արտաշիր Ա-ի եւ Շապուհ Ա-ի, ինչպէս նաեւ առաջինի հօր եւ երկրորդի պապ Պապաքի պալատականների բաւականին ընդարձակ ցուցակները: Ցիշատակուած 105 պաշտօնական անձերից 31-ը ներկայացնում են Արտաշիր Ա-ի արքունիքը՝ 66-ը՝ Շապուհ Ա-ինը եւ ընդամէնը 8-ը՝ Պապաքինը: Ցուցակներում ներկայացուած պաշտօնեաների շարքում, ըստ որում ամենաբարձրաստիճան, կարեւոր տեղ է զբաղեցնում բդեշխը: Այսպէս, Արտաշիր Ա-ի արքունիքում թագաւորական ընտանիքի անդամներից եւ շահերի արքայիկներից անմիջապէս յետոյ յիշատակւում է Արտաշիր բդեշխը[120]: Եւ լոկ դրանից յետոյ նշւում են հազարապետի, նշանաւոր տոհմերի ներկայացուցիչների եւ այլեւայլ պալատականների անունները: Նոյն վիճակը կարելի է արձանագրել նաեւ Շապուհ Ա-ի արքունիքի առնչութեամբ: Կրկին արքայատոհմի ներկայացուցիչներից յետոյ եւ հազարապետից առաջ յիշատակւում է Շապուհ անունով մի բդեշխ[121]: Արտաշիր Ա-ի արքունիքի

© National Library of Armenia

բդեշխը արձանագրութեան միջին պարսկերէնով գրուած տեքստում կոչւում է bthšy, իսկ պահլաւերէնում՝ bythš: Անտարակոյս, բդեշխը պատուաւոր տեղ է զբաղեցնում նաեւ Պայկուլիի արձանագրութիւնում, սակայն, ինչպէս նշում է Թ. Գամսախուրդիան, այստեղ Պապաք բդեշխը մի դէպքում (7-8-րդ տողեր) յիշատակուած է Սասանեան տոհմի զարմիկներ Հարգուպատիից եւ Նարսէսից առաջ, իսկ միւս դէպքում (16-17-րդ տողեր) Հարգուպատի, Պերոզ եւ Նարսէս Սասանեաններից յետոյ[122]: Ուշադրութիւն է գրաւում երկու հանգամանք. Արտաշիր Ա-ի եւ Ներսեհի արքունիքներում այդ տիտղոսը կրում է առանձին մէկ անձ եւ բդեշխը պետութեան աստիճանասանդղակում հազարապետից աւելի բարձր դիրք է զբաղեցնում, այն դէպքում, երբ հազարապետը, գոնէ մի փոքր աւելի ուշ, արքունիքում ամենակարեւոր դիրքն էր գրաւում, համապատասխանելով, ըստ էութեան, ուշ ժամանակների «մեծ վեզիրին»: ŠKZ -ում համապատասխանելով, ըստ էութեան, ուշ ժամանակների «մեծ վեզիրին»: ŠKZ -ում Շապուհ բդեշխից զատ, որը ցուցակում 10-րդն է, յիշատակւում է նաեւ եւս մէկը՝ Կիրդիստրո անունով բդեշխը, որն անուանացանկում զբաղեցնում է 31-րդ տեղը: Դատելով զբաղեցրած տեղից՝ նրա պատիւը կամ բարձը յիշատակուած նախորդ բդեշխների համեմատ աւելի ցածր էր[123]: Մ. Սպրենգլինգը քանիցս անդրադառնալով այդ խնդրին, այն կարծիքն է յայտնել, որ, հաւանաբար, յիշեալ բդեշխը, լինելով Հայաստանի ներկայացուցիչ, աւելի ցածր պատիւ է ունեցել: Նման տեսակէտը կիսում է նաեւ Թ. Գամսախուրդիան՝ ելակէտ ունենալով այն իրողութիւնը, որ բդեշխի անունն անսովոր է Սասանեանների շրջանում[124]:

Սասանեան թագաւորների արձանագրութիւններից դժուար է եզրակացնել, թէ որն է նրանց իրաւասութիւնների եւ պարտականութիւնների շրջանակը: Եթէ նրանք եղել են այս կամ այն երկրի կամ երկրամասի կառավարիչ, ապա զարմանալիօրէն III դարի աղբիւրները լռում են այդ մասին: Վաղ Սասանեան շրջանի շահերի, թագաւորութիւնների եւ սատրապութիւնների կառավարիչներն արձանագրութիւններում մշտապէս նշւում են յիշեալ վարչա-քաղաքական միաւորների անուանումներով հանդերձ: Ուստի խորհելու տեղիք է տալիս ուսումնասիրողների կողմից բդեշխներին նահանգների կառավարչի կարգավիճակ յատկացնելը: Այստեղ պէտք է համաձայնել Թ. Գամսախուրդիայի այն տեսակէտի հետ, որ նման կարծիքը բխում է մի կողմից բդեշխ տերմինի ստուգաբանութեան առանձին վարկածից, իսկ միւս կողմից՝ Ամիանոս Մարկելինոսի այն տեղեկութիւնից, թէ «Sunt autem in omni Perside, hae regiones maximae, quas vitaxae (id est magistri equitum) curant, et reges et satrapae-nam minores plurimas recensere difficile est et superfluum-Assyria, Susiana, Media, Persis, Parthia, Carmania maior, Hyrcania, Margiana, Bactriani, Sogdiani, Sacae, Scythia infra Imaum et ultra eundem montem, Serica, Aria, Paropanisadae, Drangiana, Arachosia et Gedrosia». (Այժմ ամբողջ Պարսկաստանում մեծագոյն նահանգները, որոնք կառավարւում են բդեշխների (վիտաքսների), այսինքն այրուձիի հրամանատարների, թագաւորների եւ սատրապների կողմից, քանի որ անուանապէս թուարկել փոքրերի բազմութիւնը կը լինէր դժուարին եւ անտեղի, սրանք են. Ասորեստանը, Սուսիանան (իմա՛ Շուշան), Մեդիան (իմա՛ Մարաստան), Պարսքը, Պարթիան (Պարթեւստանը), Մեծ Կարմանիան, Հիւրկանիան (իմա՛ Վրկանից աշխարհը), Մարգիանան եւ Բակտրիացիների, Սոգդիանների եւ Սակերի, Իմաուսի լանջերի եւ նոյն լեռից այն կողմ ընկած Սկիւթների երկրները, Սերիկան, Արիան, Պարոպանիսքը, Դրանգիանան, Արաքոսիան եւ Գեդրոսիան)»[125]: Այո, համաձայն Ամիանոս Մարկելինոսի, բդեշխը նահանգի կամ երկրամասի կառավարիչ է, սակայն ստիպուած ենք կրկին կիսել Թ. Գամսախուրդիայի կարծիքն այն մասին, որ, այնուամենայնիւ, յիշեալ տեղեկութիւնը վերաբերում է IV դարին[124], հետեւաբար հնարաւոր է, որ բդեշխական հաստատութիւնը մինչեւ այդ որոշակի տեղաշարժեր ապրէր, քանի որ Սասանեանների իշխանութեան գլուխ գալու ժամանակներում եւ գործնականում ամբողջ III դարի ընթացքում պարսկական արձանագրութիւններն այդպիսի տեղեկութիւններ պարզապէս չունեն: Այսուհանդերձ, Ամիանոսի տեղեկութիւնն ունի մի շատ կարեւոր հաղորդում, որի կողքից անցնել չի կարելի: Երկրամասի կառավարիչ բդեշխներն, այնուամենայնիւ, այրուձիի հրամանատարներ են, իրողութիւն, որ համահունչ է հայկական աղբիւրների խիստ արժէքաւոր հաղորդումներին:

Բդեշխների մասին տեղեկութիւններ են պահպանուել նաեւ Վրաստանի հանրապետութեան տարածքում յայտնաբերուած արամերէն, յունարէն եւ պարսկա-պահլաւական արձանագրութիւններում: Անշուշտ, մեր խնդիրը չէ քննութեան առնել բդեշխութեան հաստատութիւնը Վիրքում, որը մինչեւ օրս էլ պատմագիտութեան մէջ վիճաբանութիւնների առարկայ է: 1940 թ. Արմազիսխեւիի դամբարաններից մէկում յայտնաբերուեց Զեբարանների որդի բդեշխ Շարագասի տողավախի որդի բդեշխ Շարագասի նոց արամերէն արձանագրութիւնը, որում յիշատակւում է մեծ արքայ Փարսմանի որդի Միհրդատ մեծ թագաւորը: Շորաորդի Միհրդատ մեծ թագաւորը: Պոմպէոսից 7-8 կմ հարաւ-արեւելք Բորի գիւղում պեղուած դամբարանից յայտնաբերուել է արծաթեայ թաս արամերէն արձանագրութեամբ, որում յիշատակւում է

Բուզմիհր բդեշխը: Յիշեալ արծաթեայ թասը նման է Արմազիում՝ բդեշխ Բերսումայի դամբարանում յայտնաբերուած արծաթեայ թասին: Բորիի եւ նրանից ոչ շատ հեռու գտնուող Կլդեեթի գիւղում 1941-1942 թթ. յայտնաբերուած նիւթից ելնելով՝ այն միտքն է յայտնուել, որ բդեշխութիւն է գոյութիւն ունեցել Արեւմտեան Վրաստանի՝ Վիրքի մէջ մտնող Բորիի եւ Կլդեեթիի շրջաններում: Արմազիսխեւիում յայտնաբերուած երկլեզուեան (յունարէն եւ արամերէն) արձանագրութեան մէջ, որը վերաբերում է վրաց Խսեֆարնուգ թագաւորի ժամանակներին, վերջինիս հօր անունը չի յիշատակւում: Խսեֆարնուգ թագաւորի արքունիքի կառավարիչ Իոդմանգանի կնոջ՝ Սերաֆիտի դամբանագիր արձանագրութեան մէջ այն կրկին բացակայում է, չնայած յիշատակւում են թէ Սերաֆիտի եւ թէ Իոդմանգանի հայրերի անունները: Այս հանգամանքն էլ ծնել է այն տեսակէտը, որ Խսեֆարնուգի հայրը թագաւոր չի եղել, իսկ որդին գահ է բարձրացել դաւադրութեան ճանապարհով[126]:

Արմազիսխեւիի դամբարաններից մէկում յայտնաբերուել է նաեւ արծաթեայ մի թաս պարսկա-պահլաւական արձանագրութեամբ: Վերջինս բաւականին վնասուած է՝ պատճառ դառնալով տարբեր վերծանութիւնների: Արձանագրութիւնը կարդալու առաջին փորձը կատարել է Գ. Մերեթելին, որի ռուսերէն թարգմանութիւնն ունի ներքոյիշեալ տեսքը. «... питиашх божественного Ардашира, сына божественного (Папака?)»: Այնուհետեւ արձանագրութեան մէջ կրկնւում է բդեշխ բառը, հանդիպում մի երկրանուն, որը հեղինակը փորձում է նոյնացնել Վիրք-Իբերիային, իսկ վերջում տրւում է թասի քաշը[127]: Նոյն թուականին արձանագրութիւնը կարդալու փորձ կատարեց

© National Library of Armenia

Շ. Ամիրանաշուիլին, ըստ որի այն ունէր հետեւեալ բովանդակութիւնը. «Պապաքը՝ աստուածայինն Արտաշիրի՝ աստուածայինն Պապաքի որդու բդեշխը տուեց [այս թասը] Գուրզան (իմա՛ Վիրքի) երկրի բդեշխ Արզամէսին»[128]: Վ. Հեննինգի թարգմանութիւնը, որ լոյս տեսաւ միայն 1961 թ., հետեւեալն է. "Bowl of Papak bitaxš the son of Artašar the bitaxš, the son of Šahpuhr bitaxš" («Պապաք բդեշխի՝ Արտաշար բդեշխի որդու՝ Շապուհ բդեշխի որդու, թասը (իմա՛ թոռան)»)[129]: Ստացւում է, որ ըստ հեղինակի արձանագրութեան մէջ տրուած է վրաց բդեշխների տոհմը Սասանեանների գահակալութեան I դարում, ըստ որում բդեշխը փոխարքայ է կամ տեղապահ (ռեզիդենտ), որի պարտականութիւնն է տեղական իշխողի գործունէութիւնը վերահսկելը[130]:

Վ. Հեննինգի տեսակէտը, որ հիմնուած էր պահլաւերէնում բդեշխի՝ իբր միշտ առանց իր կառավարմանը յանձնուած երկրի յիշատակութեան վրայ, լուրջ քննադատութեան ենթարկուեց Ֆ. Ալթհայմի կողմից: Հետազօտողն իրաւացիօրէն գտնում էր, որ, եթէ բդեշխները, ըստ մեզ հասած աղբիւրների, յիշեալ շրջանում երկրների կառավարիչ չեն, ապա չէին կարող կառավարել նաեւ Իբերիայում, որտեղ իբրեւ թէ բդեշխի ունեցած առանձնայատուկ կացութիւնը որեւէ բացատրութիւն չի ստանում: Իսկ եթէ դրան աւելացուի այն փաստը, որ թասը գտնուել է Վալերիանոս կայսեր (253-260) դրամի հետ մեկտեղ, ուստի եւ այն կարող էր դամբարանում յայտնուել կամ III դարի կէսին կամ դրանից յետոյ, ապա ժամանակագրական խնդիրներ են ծագում, որոնք Վ. Հեննինգը լուծել չէր կարողացել: Ֆ. Ալթհայմի կարծիքով, Հեննինգը պարզապէս անտեսել է III դարի կէսերով թուագրուող արծաթեայ թասի արձանագրութիւնը, որտեղ յիշատակուած Բուզմիհր բդեշխը գործել է Վիրքում, սակայն չի տեղաւորուում Հեննինգի առաջարկած տոհմածառի շրջանակներում: Հեղինակը գտնում էր, որ Հեննինգը չի ապացուցել իր առաջ քաշած տեսակէտն այն մասին, որ իբր բդեշխը մշտապէս զբաղեցրել է Իբերիայի փոխարքայի պաշտօնը[131]:

Հեննինգի հետ չի համաձայնւում նաեւ Թ. Գամսախուրդիան, որովհետեւ թասի գտնուելը Վրաստանում, եթէ հաշուի առնենք արձանագրութեան խիստ եղծուածութիւնը, որ կարող են առաջարկուել իրարից էապէս տարբեր ընթերցումներ ու հնարաւոր էլ չէ յստակ որոշել թասի տիրոջ անունը, դեռեւս ոչինչ չի նշանակում եւ հարցը մնում է անպատասխան: Ցամենայն դէպս, ըստ նրա, բդեշխական հաստատութեան գոյութիւնը նշուած շրջանում Հայաստանում կարող է հիմք ծառայել Հայաստանի բդեշխ յայտարարելու պահլաւերէն արձանագրութիւններում յիշատակուած բդեշխին[132]: Հեննինգի տեսակէտին խանգարում է նաեւ այն հանգամանքը, որ պարսից Արտաշիր Ա թագաւորի (226-240) օրօք Այսկովկասեան երկրները դեռեւս չէին նուաճուել եւ այդ տեղի ունեցաւ միայն Շապուհ Ա-ի (240-272) իշխանութեան շրջանում[133]: Եթէ Արտաշիրը Երանի արքայից արքայ էր, ապա Շապուհ Ա-ը յաղթական նուաճումների շնորհիւ իրեն կոչեց Երանի եւ Աներանի արքայից արքայ: Եթէ, իրօք, բդեշխը լինէր Իբերիա-Վիրքի պարսից փոխարքայ, որի ենթակայութեան տակ էր գտնւում վրաց թագաւորը, ապա հազիւ թէ Շապուհ Ա-ի ազնուազարմ 66 պալատականների եւ մերձաւորների շարքում վրաց Համազասպ թագաւորը զբաղեցնէր պատուաւոր չորրորդ տեղը[134]: Սակայն դա միաժամանակ չի

հաւաստում Համազասպի՝ Պարսից արքայի առաւել ազդեցիկ դաշնակիցներից լինելը, ինչպէս կարծում է Գ. Մելիքիշուիլին[135]:

Մերժելով բդեշխի՝ III դարի Պարսկաստանում Իբերիայի կամ որեւէ այլ նահանգի կառավարիչ լինելու հանգամանքը՝ Թ. Գամսախուրդիան[136] առաւել հաւանական է համարում Ռ. Ֆրայի այն կարծիքը, ըստ որի Bitaxš-ը եւ Chiliarch-ը (իմա՛ հազարապետը) միմեանց միջեւ բաժանել են տէրութեան ռազմական իշխանութիւնը եւ քաղաքացիական իշխանութեան կառավարումը: Յստակեցնելու համար անորոշ կացութիւնը եւ հարցին ինչ-որ լուծում տալու նպատակով՝ Ռ. Ֆրայը ենթադրել է անգամ, որ III դարում բդեշխներն արքայական ընտանիքի ներկայացուցիչներ են եղել[137]: Այսպէս թէ այնպէս, Սասանեան Պարսկաստանի հասարակական-տնտեսական զարգացման արդիւնքում, ինչպէս հաւաստում է Ամիանոսը, IV դարում բդեշխը կամ բդեշխները երկրների ու երկրամասերի կառավարիչներ էին: Յ. Մարքուարթի կարծիքով, Ամիանոսի թուարկած երկրներից միայն առաջինի կամ Ասորեստանի կառավարիչն է եղել բդեշխ[138]: Այդ կարծիքն առաւել հիմնաւորելու համար Թ. Գամսախուրդիան բերում է ասորական մի աղբիւրի հաղորդումն այն մասին, որ Շապուհ Բ-ի (309-379) ժամանակակից ոմն Մար-Քարդագը եղել է Ասորեստանի Paţahßa/biţaxš եւ մարզպան ու եզրակացնում, որ, հաւանաբար, այդ դէպքում բդեշխը եւ մարզպանը հոմանիշ զուգահեռներ են[139]: Հնարաւոր է, որ իրօք այդպէս էր եւ միայն Ասորեստանի կառավարիչն էր բդեշխ, սակայն որոշ տաքակոյսներ է ծնում Ամիանոսի տեղեկութիւնը ոչ թէ մէկ, այլ մի քանի բդեշխների մասին:

Թւում է, որ մեզ մնաց քննարկելու եւս մէկ հարց եւ ամփոփել կատարուած եզրակացութիւնները: Աշխատութեանը աւարտուն տեսք տալու համար, կարծում ենք, որ անհրաժեշտ է անդրադառնալ այն հարցին, թէ ինչ նշանակութիւն ունի «բդեշխ» տերմինը, որ օտար աղբիւրներում յայտնի է πιτιάξης, πιτάξης, βιτάξης, πητιάξης, βίσταξ (կարդա՛ βίταξ), Paţahša, պատիաշխի, պիտիաշխի եւ vitaxa ձեւերով: Փորձ է արուել Դուրա-Եւրոպոսի պեղումներից յայտնաբերուած արձանագրութիւններից մէկում հանդիպող βατησα տերմինը նոյնացնել «բդեշխի» հետ[140], սակայն, ըստ երեւոյթին, ճիշտ է Ռ. Ֆրայը, որի կարծիքով այն առաւելապէս արտայայտում է ազնուատոհմութիւն, նրա աստիճանը, քան պաշտօն: Աւելին՝ նա հակուած է կարծելու, որ βάτησα-ն, հաւանաբար, պարսկական Āzātān-ի միջագետքեան համարժէքն է[141]: Հ. Աճառեանն, անդրադառնալով «բդեշխ» տերմինին, գտնում է, որ հայերէն բդեաշխ-ը կարող էր հանդէս գալ հնագոյն բիդիախշ ձեւից, իսկ ասորերէն Paţaxša, յունարէն πιτιάξης եւ վրացերէն պիտիաշխի ձեւերը ենթադրում են նախնական pitiaxša, իսկ վրացերէն պատիախշի կամ պատիաշխի ձեւերը՝ հին պարսկական patiaxša կամ paitiaxša գրութիւնը, որը կազմուած է paiti->պատ նախամասնիկով: Ըստ մեծանուն լեզուաբանի՝ կայ նաեւ պահլաւերէն Pātaxšāh-ը, որից առաջանում է պարսկական pādišāh կամ pādišāh (իմա՛ թագաւոր) ձեւը, որը Հոռը փորձել է ծագեցնել հին պարսկական pati-xšāyaqiya (իմա՛ արքայ, թագաւոր) տերմինից: Այսուհանդերձ Հ. Աճառեանը գտնում է, որ յիշեալ ձեւերից եւ ոչ մէկը ճշտիւ չի համապատասխանում հայերէնին եւ միայն յունարէն βιτάξης-ն է, որ իր նախաձայնով համընկնում է հա-

© National Library of Armenia

յերէնին եւ որի հետ էլ նոյնն է պահլաւերէն bitaxš-ը (իմա՛ տեղապահ, փոխարքայ)[142]: Կարստը փորձել է կապել շումերական isse-ի (իշխան), pateši-ի (իշխան, տէր, փոխարքայ) հետ, իսկ Կորշը՝ նախատիպը համարում է զենդական bitya-xšaya (երկրորդ իշխան) ձեւը՝ ընկալելով այն որպէս «թագաւորի երկրորդը»[143]: Գր. Ղափանցեանը եզրակացրել է, որ pitiaxš-ը կամ bitiaxš-ը դժուար է համադրել պահլաւերէն pātaxšāh-ին կամ պարսկերէն pādšah-ին (թագաւոր), քանի որ առաջին վանկի i ձայնաւորին իրանական ձեւում համապատասխանում է a ձայնաւորը[144]: Բդեշխութեան հաստատութեան լաւագոյն գիտակներից մէկը՝ Ս. Կրկեաշարեանը, հակուած է ենթադրելու, որ Գր. Ղափանցեանի կարծիքին հակասում է բդեշխի βάτησα գրութիւնը, որտեղ առաջին ձայնաւորը ոչ թէ i է, այլ a[145]: Եթէ βάτησα-ն, իրօք, նոյնանում է բդեշխի հետ, այդ տեսակէտը ընունելի է, սակայն, ինչպէս տեսանք, մեծ կասկածներ կան, որ այն ընդհանրապէս առնչութիւն ունի բդեշխ տերմինի հետ: Համեմատելով հանդերձ եւ նոյնացնելով βάτησα-ն բդեշխի հետ, Ս. Կրկեաշարեանն, այնուամենայնիւ, հակուած է ընդունելու Գր. Ղափանցեանի ներքոբերեալ տեսակէտը. «Ես չեմ կասկածում, որ մենք ունենք հին փոքր ասիական բառ, որտեղ bidi-(pidi) նշանակում էր տեղ, երկրամաս (հմմտ. խեթ. peda- «տեղ»), իսկ - aš̆x, հաւանաբար, նշանակում էր տիրակալ, իշխան ...: Այնպէս, որ bidiaxš կարող էր նշանակել «երկրի իշխան», այսինքն տեղական կիսանկախ մեծատոհմիկ, եւ ոչ թէ սիզերէն թագաւորի օտար տեղապահը»[146]:

«Բդեշխ» տերմինի եւ բդեշխութեան հաստատութեան մասին բաւականին տարտամ են Ս. Երեմեանի տեսակէտները, որը Յ. Մարքուարթի ազդեցութեամբ հակուած էր բդեշխութիւնների առաջացումը վերագրելու Տիգրան Մեծի ժամանակներին: Ըստ հեղինակի «Նուաճուած երկրները (Տիգրան Մեծի օրօք – Յ. Բ.) ստանում էին նոր վարչական կառավարում: Դրանք բաժանւում էին առանձին կուսակալութիւնների, որոնց գլուխ կանգնած էին թագաւորի նշանակած կուսակալները՝ բդեշխները, որոնք ունէին քաղաքացիական եւ ռազմական իշխանութիւն: Բդեշխներին կարելի է համեմատել Սելեւկեան պետութեան սատրապների հետ: Այս կուսակալութիւն-բդեշխութիւնների կառավարիչներ նշանակւում էին կամ թագաւորական ընտանիքի անդամները, կամ բարձր ազնուականութեան ներկայացուցիչները: Այսպէս, օրինակ, Միգդոնիա նահանգում կուսակալ էր նշանակուած Գուրասը՝ Տիգրան II-ի եղբայրը: Հաւանաբար նրա արքայորդի Զարեհը նշանակուած էր Նոր Շիրականի բդեշխ: Նախկին սելեւկեան Սիրիայի կառավարիչ նշանակուած էր մեծատոհմիկ Բագադատը կամ Բագարատը...: Նոյնպիսի կառավարիչներ էին նաեւ Տիգրան II-ի պալատականներ Մեհրուժանը եւ Մանկայոսը»[147]: Յաւօք, վերը կատարուած քննութիւնն այս ամէնը բացառում է, որովհետեւ բդեշխներն ամէնից առաջ սահմանակալներ էին եւ ոչ թէ կուսակալներ: Այլապէս, վերոբերեալ մօտեցմամբ Հայոց տէրութեան մէջ կարելի էր գործ ունենալ ոչ թէ չորս՝ ըստ աշխարհի կողմերի, բդեշխութիւնների, այլ գուցէ երկու տասնեակի հասնող կուսակալաշխարհակալ իշխանների հետ:

Վ. Հինցը գտնում էր, որ բդեշխը եղել է փոխարքայ (Vizekönig), տէրութեան երկրորդ (Zweiter im Reich), Երանի փոխարքայ (Vizekönig Irans)[148], Ա. Պալիարոյի կարծիքով բդեշխը նշանակել է արքայի աչք (king's eye)[149], համաձայն Վ. Հեննինգի՝ փոխարքայ (Viceroy) կամ տեղապահ (Resident)[150]: Յայտնի իրանագէտ Ա. Քրիստենսէնն իր սկզբնական աշխատութիւններում կարծում էր, որ վաղ սասանեան շրջանում Պարսկաստանը բաժանուած էր չորս կողմերի եւ այդ կողմերը (տոպարքիաները) համապատասխանել են բդեշխութիւններին: Հեղինակի տեսակէտով մինչեւ V դարի սկիզբը այդ տիտղոսը տարածուած է եղել եւ միայն այնուհետեւ փոխարինուել է մարզպանով[151]: Սակայն 1944 թուին լոյս տեսած նրա "L'Iran sous les Sassanides" աշխատութեան մէջ ասւում էր, որ հնարաւոր է, որ նահանգների կառավարիչները սասանեան դարաշրջանի վաղ ժամանակներում կոչուել են սատրապներ կամ բդեշխներ, իսկ մարզպան տերմինը կիրառում գտաւ աւելի ուշ[152]: Այլ խօսքով, հեղինակը հրաժարուել է բդեշխներին չորս կողմերի կառավարիչ կամ տոպարքոս դիտելուց եւ բդեշխ է համարել ամէն մի նահանգի կառավարչի:

Ս. Կրկեաշարեանն իրաւացիօրէն ուշադրութիւն է դարձրել այն փաստի վրայ, որ «գահերէց» տերմինը յունարէն Ագաթանգեղոսում թարգմանուած է τιμιώτατος, այսինքն՝ «պատուաւորագոյն»: Հեղինակի կարծիքով, «գահերէց» բառում «գահ» բաղադրիչը օգտագործուած է ոչ այնքան «նստելու տեղ, բազմոց» իմաստով, ինչքան «պատիւ» նշանակութեամբ[153]: Ընդհանուր առմամբ համաձայնելով հեղինակի հետ՝ մենք, սակայն, գտնում ենք, որ առանձնապէս մեծ հակասութիւն չկայ, քանի որ գահերէցութիւնը կամ բարձր գահ զբաղեցնելը, վերջին հաշուով, բարձր պատուի արտայայտութիւն էր: Ամփոփելով իր քննութեան արդիւնքները՝ Ս. Կրկեաշարեանը կատարում է մի շատ կարեւոր դիտողութիւն եւս՝ ընդգծելով, որ Արտաշիսեան Հայաստանի պետական մի շարք հաստատութիւններ իրենց վրայ կրել են հելլենիստական շրջապատի ուժեղ ազդեցութիւնը, սակայն դրանք այդուհանդերձ կրելու էին «ազգային» աւանդութիւնների կնիքը[154]:

Արդ, ամփոփենք կատարուած քննութեան հիմնական եզրակացութիւններն ու եզրայանգումները:

Բդեշխը եղել է զինուորական պաշտօնեայ եւ, գոնէ Հայաստանում այդ պաշտօնը կապուած է եղել երկրի ռազմական ուժերն ըստ աշխարհի չորս կողմերի բաժանման կառոյցի հետ: Սկզբում այդ պաշտօնը տրուել է արքայատոհմի ներկայացուցիչներին, սակայն հետագայում այդ սկզբունքը խախտուել է եւ բդեշխներ են կարգուել երկրի ազնուատոհմիկները եւս: Բդեշխի՝ զինուորական պաշտօն լինելը հաւաստում են ոչ միայն հայկական աղբիւրները, այլեւ Ամիանոս Մարկեղինոսի «Պատմութիւնը»:

Իւրաքանչիւր բդեշխի ենթակայութեան ներքոյ գտնուել է մէկ բիւրից բաղկացած արքունի այրուձի, որը պաշտպանել է Հայոց թագաւորութիւնը աշխարհի չորս կողմերից որեւէ մէկի ուղղութեամբ: Որ բդեշխներն այրուձիի հրամանատարներ էին, հաւաստում է աներկբայելիօրէն Ամիանոսի երկը: Բդեշխներն արքունիքում զբաղեցնում էին ամենաբարձր գահերը, ուստի եւ կոչւում էին գահերէց եւ բարձերէց: Սկզբնաղբիւրների կցկտուր տեղեկութիւնները հնարաւորութիւն չեն տալիս պարզելու, թէ աւատատիրական յարաբերութիւնների հաստատման ու զարգացման շրջանում նրանք մտել են արքունի «Գահնամակ»-ի մէջ ըստ իրենց ռազմուժի եւ ազնուատոհմիկութեան, ինչպէս միւս մեծամեծ ու սովորական նախարարները, թէ առանձնաշնորհեալ դիրք են զբաղեցրել: Եթէ անգամ արտօնեալ դիրք ունեցել են էլ, ապա նրանց մէջ էլ եղել է գահերի որոշակի հերթականութիւն, որն, ամէն ինչից դատելով, արդէն ժառանգատէր իշխան-

© National Library of Armenia

ներ դարձած բդեշխների ռազմական կարողութեամբ չէր պայմանաւորուած: Այսպէս, Աղձնեաց բդեշխը, որ մարտադաշտ էր դուրս բերում ընդամէնը 4000 մարտիկ, կոչւում էր բդեաշխն մեծ, իսկ 4500 մարտիկ դուրս բերող Գուգարաց բդեշխը՝ միւս բդեշխ: Շատ հնարաւոր է, որ Աղձնեաց բդեշխի մեծ տիտղոսը պայմանաւորուած էր այն հանգամանքով, որ նրա տիրոյթներում էր գտնւում հինաւուրց Տիգրանակերտ մայրաքաղաքը:

Պատմագիտութեան մէջ վիճաբանութիւնների առարկայ է դարձել Հայաստանում բդեշխութիւնների թուի խնդիրը: Ելնելով, մասնաւորապէս, Մովսէս Խորենացու երկի տուեալներից՝ որոշ ուսումնասիրողներ հակուած են կարծելու, որ բդեշխների, հետեւաբար նաեւ բդեշխութիւնների թիւը եղել է ընդամէնը երկու: Կարծես այդ է հաւաստում նաեւ Ագաթանգեղոսի երկում պահպանուած՝ կաթողիկոսի ձեռնադրման համար Գրիգոր Լուսաւորչին Կեսարիա ուղեկցող նախարարների ցուցակը, որտեղ հանդիպում են միայն Աղձնեաց եւ Գուգարաց բդեշխների անունները: Հիմք ընդունելով այն իրողութիւնը, որ սոյն փաստերին զուգահեռ նոյն պատմիչները մշտապէս յայտնում են չորս բդեշխների գոյութեան մասին՝ մենք գալիս ենք այն եզրակացութեան, որ բդեշխութիւնների թիւն իրօք չորս էր, սակայն նրանցից մէկը գտնւում էր թագաւորական ընտանիքի ներկայացուցչի ենթակայութեան ներքոյ, երկուսի բդեշխներն արդէն վաղուց վերածուել էին ժառանգատէր իշխանների՝ համալրելով հայ նախարարութեան շարքերը, իսկ չորրորդը, որ կոչւում էր Նոր Շիրականի, ամենայն հաւանականութեամբ, ժառանգական է դարձել միայն 298 թ. Մծբինի հաշտութիւնից շատ չանցած: Ըստ որում, յայտնի չէ, թէ Նոր Շիրականի բդեշխը ժառանգատէր դառնալուց առաջ թագաւորական ընտանիքի անդամ էր, թէ հայ աւագանու ներկայացուցիչ:

Բդեշխութիւնները, ինչպէս եւ պէտք էր սպասել, սկզբում կոչուել են հարեւան այն երկրների եւ երկրամասերի անունով, որոնց դիմաց գտնւում էին բդեշխական զօրաբանակները՝ ապահովելով երկիրը թշնամու հնարաւոր յարձակումներից նշուած ուղղութիւններով: Ուստի, պատահական չէ, որ Ագաթանգեղոսը նրանց կոչում է, «սահմանակալն Նոր Շիրական (պէտք է լինի՝ Շիրական) կողմանէն, ... յԱսորեստանեայց կողմանէն..., յԱրուաստան կողմանէն եւ ի Մասքթաց կողմանէն»: Բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ Գուգարաց բդեշխութիւնը, որ մասքութ-մասագետների Այսրկովկաս ներխուժելու եւ հաստատուելու պատճառով ստացել էր «սահմանակալն ի Մասքթաց կողմանէն» անունը, մինչ այդ Մեծ Հայքի թագաւորութեան հիւսիսարեւելեան սահմաններին սպառնացող գարգարացիների անունով կոչուելու էր «սահմանակալն ի Գարգարացւոց կողմանէն»՝ պայմաններ ստեղծելով, որ երբեմն ձեռագրերում Գուգարացւոց բդեշխութիւնը թիւրիմացաբար նշուի Գարգարացւոց անունով, երբ վերջինները վաղուց դադարել էին քաղաքական եւ էթնիկ վտանգ ներկայացնելուց:

Աւատատիրական յարաբերութիւնների յաղթանակն ու զարգացումը լուրջ տեղաշարժեր առաջ բերեցին ոչ միայն Մեծ Հայքի հասարակական-տնտեսական կեանքում ընդհանրապէս, այլեւ բդեշխութիւնների կարգավիճակում մասնաւորապէս: Գուգարքում հաստատուած սահմանակալ բդեշխն աստիճանաբար դարձաւ երկրամասի ժառանգատէր իշխան: Հարաւում բդեշխական իրաւունքը յանձնուեց սեմական ծագում ունեցող ինչ-որ ընտանիքի, որն ըստ Մովսէս Խորենացու

«Պատմութիւն Հայոց»-ի Աղձնիքի կառավարիչն էր եւ սերում էր ասորեստանեան Սինախերիբ արքայի Սանասար որդուց: Դառնալով ժառանգատէր իշխաններ՝ երկուսն էլ կարեւոր մասնակցութիւն են հանդէս բերում պետութեան համար կարեւոր նշանակութիւն ունեցող խնդիրներին: Որպէս ժառանգատէր իշխան՝ բդեշխների շարքը գալիս է լրացնելու Նոր Շիրականի սահմանակալը: Չնայած Աղձնեաց բդեշխի «մեծ» կոչուելուն, դատելով Ագաթանգեղոսի տուեալներից, բդեշխութիւնների աստիճանասանդղակում չորրորդ դարի սկզբին առաջին տեղն աստիճանաբար անցնում է Նոր Շիրականի բդեշխութեանը, որը պէտք է ապահովէր Մեծ Հայքի սահմանների անվտանգութիւնը Ատրպատականի կողմից:

Հիմք ունենալով Մովսէս Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի հաղորդումները՝ կարելի է առանց սխալուելու եզրակացնել, որ սահմանակալ իշխաններից առաջինը, գոնէ Արտաշես Ա-ի օրօք (189-160), եղել է թագաւորութեան երկրորդը: Պատմիչի խօսքերով, արքայորդի Արտաւազդը, որ թագաւորութեան երկրորդն էր, նշանակուած էր արեւելեան զօրագնդի հրամանատար, արքայորդի Տիրանը՝ արեւմտեան, արքայորդի Զարեհը՝ հիւսիսային եւ թագաւորի դայեակ Սմբատը՝ հարաւային: Վաղարշակ Արշակունու՝ Մեծ Հայքի թագաւոր դառնալուց յետոյ պարթեւական պետական կառոյցի որոշ տարրեր մուտք գործեցին Հայաստան, իսկ աւելի մեծ չափով տեղական կառոյցները յարմարեցուցին արքունիքի պահանջներին՝ ստանալով պարթեւական անուանումներ: Դժուար չէ տեսնել, որ Վաղարշակը պահպանեց երկրի ռազմական ուժերի չորս մասի բաժանելու սկզբունքը, սակայն, ամենայն հանգամանութեամբ, միայն նրա ժամանակներից սահմանակալ մէկ բիւրանոց զօրագնդերի հրամանատարներն ստացան բդեաշխ անուանումը: Ըստ Պատմահօր օգտագործած աղբիւրի, Գուշարեանները, որ հնից ժառանգել էին Գուգարքը, ստիպուած էին բաւարարուել միայն Աշոցքի տէրութեամբ եւ Տաշրաց սեպհականութեամբ, իսկ նրանց հիմնական տիրոյթներն անցան «ի Գարգարացւոց կողմանէ» բդեշխի կառավարման ներքոյ, որը հիւսիսի կողմնակալ էր նշանակուած ընդդէմ Կովկաս լեռան: Այս տեսակէտն իր հաստատումն է գտնում Մովսէս Խորենացու երկի ձեռագրերի ոչ միայն «Գարգարացւոց» այլեւ «Գուրգարացւոց» ընթերցումների մէջ (Մովսէս Խորենացի, էջ 114 (երկրորդ տողի տողատակ)): Սակայն ոչ մի փաստ չկայ այն մասին, որ Վաղարշակի ժամանակներից սկսած բդեշխը կամ, աւելի ճիշտ, նրանցից առաջինը շարունակել է զբաղեցնել թագաւորութեան երկրորդի պաշտօնը: Նոյն կերպ մերժելի է նաեւ այն կարծիքը, թէ բդեշխները եղել են փոխարքաներ: Բդեշխները սահմանակալներ էին, այսինքն պետական սահմանի հսկիչներ, պետութեան անդորրի պահպանիչներ, հետեւաբար այնքան էլ անիմաստ չի aš-ի մէջ դիտել կամ նայել իմաստը տեսնել եւ պատեաշխը կամ բդեաշխը ընկալել որպէս սահմանի հսկիչ կամ պահպանիչ, այսինքն սահմանապահ, որն, ըստ էութեան, նոյնական է սահմանակալ տերմինին[155]:

Բդեշխութիւնների առանձնայատուկ կարգավիճակի պատճառով, բդեշխների կառավարմանը յանձնուած երկրամասերում աւատատիրական յարաբերութիւնների ձեւաւորումն ու զարգացումը ընթանում էր շատ աւելի արագ, որի հետեւանքով աստիճանաբար կազմաւորւում են բդեշխներից անմիջական կախման մէջ գտնուող փոքրիկ իշխանութիւններ, որոնք հետզհետէ վերածւում են ժառան-

© National Library of Armenia

գատէր փոքրիկ նախարարութիւնների՝ հաւատարմային կամ վասսալական կապերով ոչնչով առնչուած չլինելով հայոց թագաւորի կամ արքունիքի հետ: Կողբի, Ջորի կամ Դասնի, Մահկերտան ու Նիհորականի իշխանները հաւատարիմներն էին՝ համապատասխանաբար, Գուգարաց եւ Նոր Շիրականի բդեշխների, բայց ոչ թագաւորի, ինչը կարելի է եզրակացնել «Գահնամակ»-ից: Աղձնիքի լեռնային փոքրիկ գաւառների ժառանգատէր իշխանները, որոնց անունները, ցաւօք, Փաւստոս Բուզանդի երկը չի պահպանել, Աղձնեաց բդեշխի հաւատարիմներն էին: Հետեւաբար, պիտի ենթադրել, որ ժամանակի ընթացքում բդեշխներն ստեղծել էին իրենց «Գահնամակներ»-ը, որոնցում նրանց վասսալներն ըստ ռազմուժի, պատուի ու արժանաւորութեան գահեր էին ստացել: Այսինքն, աւատատիրութեան սրբազնագոյն «իմ վասսալի վասսալը իմ վասսալը չէ» սկզբունքը գործել է նաեւ Հայաստանում:

Աւատատիրական յարաբերութիւնների զարգացման արդիւնքում ձեւաւորուած ժառանգատէր իշխանութիւններն՝ ըստ իրենց մարդկային եւ տնտեսական հնարաւորութիւնների, հայոց թագաւորի տրամադրութեան տակ էին դնում իրենց զօրաջոկատները: Սոցիալական առումով բանակի հաւաքագրման եւ կազմաւորման սկզբունքը էապէս փոխւում էր, որի հետեւանքով արքունիքն ստիպուած էր նախարարական զօրաջոկատներից կազմուած զօրքերն էլ բաժանել չորս մասի՝ ըստ աշխարհի կողմերի կամ դռների, որոնց հրամանատարները դարձան սպարապետները: Ժամանակի ընթացքում արքունիքում ստեղծուեց սպարապետութեան գործակալութիւնը, որը գլխաւորող պաշտօնեան՝ սպարապետը, դարձաւ Մեծ Հայքի թագաւորութեան զօրքի համընդհանուր հրամանատարը: Ըստ որում, չորս սպարապետութիւնները պահպանուեցին, ամէն ինչից դատելով, մինչեւ Մեծ Հայքի թագաւորութեան 387 թ. բաժանումը: Ստեղծուեց մի առանձնայատուկ կացութիւն: Բդեշխները գլխաւորում էին արքունի չորս զօրագնդերը, թուով 40 հազարանոց այրուձի, սակայն ժառանգատէր բդեշխների ռազմաջոկատները, ինչպէս ցոյց է տալիս «Գահնամակ-Զօրանամակ»-ը, կռւում էին պետութեան տարբեր սահմանները պաշտպանող, սպարապետների կողմից ղեկավարուող՝ թագաւորութեան այս կամ այն դռան նախարարական զօրքի կազմում: Այսպէս, Արեւմտեան դռան զօրաբանակում, որի մէջ մտնում էին 21 իշխանական զօրաջոկատներ, գտնւում էր 4000 մարտիկներից կազմուած Աղձնեաց բդեշխի զօրաջոկատը, իսկ Հարաւային դռան զօրաբանակում, որը կազմուած էր 22 իշխանական զօրաջոկատներից, գտնւում էր 3200 ռազմիկներից[156] բաղկացած Կաղմէացի անունով Նոր Շիրականի բդեշխի զօրաջոկատը: «Գահնամակ-Զօրանամակ»-ից կարելի է անգամ եզրակացնել, որ Նոր Շիրականի բդեշխը մի ինչ-որ ժամանակահատուածում եղել է նաեւ Հարաւային դռան զօրաբանակի սպարապետ: Բացառութիւն է կազմում Գուգարաց բդեշխը, որը, հաւանաբար, ռազմավարական նկատառումներով մշտապէս զբաղեցրել է Հիւսիսային դռան սպարապետութիւնը եւս, քանի որ անհրաժեշտ էր ոչ միայն Մեծ Հայքի թագաւորութեան ռազմական ներկայութիւնն ապահովել Վիրքում եւ Աղուանքում, այլեւ երկիրը պաշտպանել հիւսիսկովկասեան լեռնականներից, որոնց վտանգը խիստ մեծ էր անգամ IV դարում: Գուգարաց բդեշխը, բացի սպարապետ լինելուց, յայտնի է նաեւ Վրաց առաջնորդ անունով, որն այլեւայլ բացատրութիւնների տեղիք է տուել: Կարծում ենք, որ բացատրութիւնը միանշանակ մէկն է: Վիրքը, որ Մեծ Հայքի թագաւորութեան հաւատարիմ կամ վասսալ երկրներից մէկն էր եւ պէտք է պատերազմների, գուցէ եւ խաղաղ ժամանակ, զօրք տրամադրէր հայոց թագաւորին, գտնւում էր բդեշխի կողմից իրականացուող վերահսկողութեան ոլորտում, իսկ վրաց թագաւորի կողմից տրամադրուող զօրաբանակը պատերազմի էր առաջնորդւում Գուգարաց բդեշխի կողմից՝ պատճառ դառնալով, որ վերջինս ստանայ նաեւ «վրաց առաջնորդ» տիտղոսը:

Մեծ Հայքի բդեշխներից երեքը IV դարում ունէին իրենց ժառանգական տիրոյթները: Աղձնեաց բդեշխի տիրոյթների մէջ էին մտնում Արձն կամ Աղձն բդեշխանիստ գաւառը եւ լեռնային Կեթիկ, Տատիկ, Ազնուաց ձոր, Երխեթք, Գզեղխ, Սալնոձոր եւ Սանասունք գաւառները: Գուգարաց բդեշխութեան մէջ էին մտնում Տաշիր բդեշխանիստ եւ Ջորոփոր, Կողբոփոր, Ծոբոփոր, Թռեղք, Կանգարք, Վերին Ջաւախք գաւառները: Աւելի ուշ, բդեշխանիստ Տաշիր եւ Թերեւս նաեւ Թռեղք գաւառներից անջատուեցին եւ վերածուեցին ինքնուրոյն գաւառների Քուիշափորը, Բողնոփորը եւ Մանգլեաց փորը, որն արդիւնք էր աւատականացման գործընթացների: Սկզբնապէս բդեշխութեան մէջ էր մտնում նաեւ Տաշիր գաւառի մաս կազմող Տաշրաց սեպհականութիւնը, որը զբաղեցնում էր Տաշրատափը՝ շրջակայ լեռնալանջերով: Սակայն Աշոցքի տէրութիւնը հանդիսանում էր հայոց թագաւորի ուղղակի հաւատարիմը: Նոր Շիրականի բդեշխութիւնն ընդգրկում էր Այլի, որ է Կուռիճան, Մարի, Թրաբի, Արիսի, որ է Ովեա գաւառների տարածքը եւ Նիհորականի, Դասն եւ Մահկերտ-տուն իշխանութիւնները: Երբ 387 թ. Մեծ Հայքի թագաւորութիւնը բաժանուեց Հռոմի եւ Սասանեան Պարսկաստանի միջեւ, իսկ Արեւելահայկական թագաւորութեան ենթակայութիւնից հանուեցին բդեշխութիւնները, կատարուեցին տարածքային որոշ վերաձեւումներ, որոնց պատճառները մեզ անյայտ են: Արեւելահայկական թագաւորութեանը թողնուեցին Աղձնեաց բդեշխութեան բոլոր լեռնային գաւառները, որոնք այնուհետեւ մնացին Հայոց մարզպանութեան կազմում մինչեւ Հայաստանի 591 թուականի երկրորդ բաժանումը եւ Մաւրիկիոս կայսեր վարչական վերափոխութիւնները: Գուգարաց բդեշխութիւնը, յօգուտ Արեւելահայկական թագաւորութեան, զրկուեց Տաշրաց սեպհականութիւնից, իսկ Նոր Շիրականի բդեշխութիւնը, որի երեք գաւառները՝ Նիհորականը, Դասնը կամ Դասընտրէն եւ Մահկերտ տունը, կազմեցին Դասն վարչական շրջանը, իսկ Պարսկահայքի մաս կազմող Մարի, Թրաբի եւ Արիսի, որ է Ովեա գաւառները միացուեցին Ատրպատականին, զրկուեց Այլի, որ է Կուռիճան գաւառից, որը նոյնպէս մնաց Արեւելահայկական թագաւորութեանը:

Բդեշխական հաստատութիւնը գոյութիւն է ունեցել Պարթեւական թագաւորութիւնում եւ Սասանեան Պարսկաստանում, սակայն նրանց կարգավիճակի մասին մեզ գրեթէ մանրամասներ չեն հասել: Հնարաւոր է, որոշ վերապահութեամբ, ընդունել, որ հայ Արշակունիները եւ նրանց նախորդած, դեռեւս չհայացած պարթեւ Արշակունիները, հաստատելով հայոց գահին, ըստ մեծի մասին, հետեւում էին իրենց արքայատոհմի աւագ ճիւղի պետական կառավարման աւանդոյթներին, հետեւաբար Պարթեւական թագաւորութիւնում, ամենայն հաւանականութեամբ, բդեշխները նոյնպէս սահմանակալ իշխաններ էին, պետութեան

© National Library of Armenia

տարբեր կողմերը պաշտպանող այրուձի զօրաբանակների հրամանատարներ: Չի բացառւում, որ նրանք արքունիքում նոյն կարգավիճակն ունէին, ինչ բդեշխները Մեծ Հայքի թագաւորութիւնում: Յամենայն դէպս, երբ Սասանեան Պարսկաստանում յայտնուեց մարզպանական հաստատութիւնը, բդեշխները, թեկուզ եւ որպէս նահանգների կառավարիչներ, այրուձի զօրքերի հրամանատարներ էին: Սասանեան շրջանի արձանագրութիւններում բդեշխի յիշատակութիւնը հազարապետից առաջ յուշում է, որ նրա ենթակայութեան տակ էին երկրի ռազմական ուժերը, իսկ հազարապետը գլխաւորում էր պետութեան քաղաքացիական իշխանութիւնը, մասնաւորապէս տնտեսական գործունէութիւնը: Չի բացառւում, որ Սասանեան Պարսկաստանում բդեշխը թագաւորի բացակայութեան ժամանակ տեղապահի պարտականութիւններ եւ իրաւունք է ունեցել, ինչպէս կարծում է Ռ. Ֆրայը, սակայն այդ հիմնաւորելը շատ դժուար է: Յամենայն դէպս, Մեծ Հայքում Վաղարշակ թագաւորի գահակալելուց յետոյ բդեշխները, որչափ կարելի է դատել սկզբնաղբիւրներից, այլեւս թագաւորութեան երկրորդ կամ տեղապահ չեն եղել: Պարսից արքայից արքայ Ներսեհի՝ Պայկուլիի արձանագրութեան մէջ բդեշխը զբաղեցնում է, ինչպէս նշուեց, հազարապետից բարձր դիրք եւ անմիջապէս յաջորդում է Հարգուպատիին, իսկ հազարապետից յետոյ յիշատակւում է սպահբեդ Ռախշը: Հնարաւորութիւն չունենալով սոյն աշխատութեան մէջ խորանալ սպահբեդի հաստատութեան քննութեան մէջ, որ համապատասխանում է հայ իրականութեան սպարապետին, կամենում ենք նշել, որ հաւանաբար, ի տարբերութիւն բդեշխների, որոնք գլխաւորում էին այրուձին, որի նշանակութիւնն այնպէս բարձր էր Պարսկաստանում, սպահբեդները, գոնէ III դ. կամ առաւելագոյնը IV դարի սկզբներին, գլխաւորել են հետեւակը, որի արդիւնքում ռազմական ասպարէզում մղուել են երկրորդ պլան: Փաստերի բացակայութեան պատճառով դժուար է որեւէ բացատրութիւն տալ Կիրդիստրո բդեշխի իրաւական կացութեանը: Ոչ մի հիմք չկայ եզրակացնելու, որ նա Հայաստանի բդեշխ է եղել:

Բդեշխական հաստատութիւնը գոյութիւն է ունեցել նաեւ Վրաստանում կամ, որ աւելի ճիշտ է, Վիրքում: Չնայած ուղղակի փաստերի բացակայութեանը, մենք հակուած ենք կարծելու, որ բդեշխի պաշտօնը Վիրքում եւս զինուորական էր: Ներկայիս Վրաստանի հանրապետութեան տարածքում յայտնաբերուած արձանագրութիւնները, որոնցում տեղեկութիւններ են պահպանուել բդեշխների մասին, յստակութիւն չեն մտցնում նրանց թուաքանակի հարցում: Առաւել եւս, որ այդ տեղեկութիւնների մի մասը, անկախ Թ. Գամսախուրդիայի ցանկութիւնից, կարող էր, իրօք վերաբերել Մեծ Հայքի Գուգարաց բդեշխներին: Շատ հնարաւոր է, որ Վիրքում բդեշխը եղել է թագաւորութեան երկրորդը, ինչպէս կարծել են Գ. Մելիքիշուիլին, Կ. Թումանովը եւ այլ ուսումնասիրողներ: Խնդիրն այն է, որ ի տարբերութիւն Մեծ Հայքի, որտեղ Արշակունիների իշխանութեան հաստատումով տեղի ունեցաւ դինաստիական փոփոխութիւն, Վիրքում թագաւորող հարստութիւնը, շարունակեց գահակալել, ուստի եւ, ամենայն հաւանականութեամբ, բդեշխի պաշտօնը չդադարեց արքայատոհմի իրաւունքը հանդիսանալ: Հետեւաբար ճիշտ են այն ուսումնասիրողները, որոնք ի դէմս Վիրքում յիշատակուած թագաւորութեան երկրորդի կամ ὁ

δεύτερο՛-ի տեսնում են բդեշխին (Strabo, XI, 3,6):

Ունենալով հանդերձ առանձնաշնորհեալ դիրք՝ բդեշխները Մեծ Հայքում, Պարթեւական թագաւորութիւնում, Սասանեան Պարսկաստանում եւ Վիրքում մտել են երկրի մեծամեծ իշխանների շարքը, որոնց թւում էին աշխարհների կամ նահանգների կառավարիչները եւ պետութեան բարձրաստիճան գործակալները:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 Հ. Ղ. Ինճիճեան, *Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի*, հտ. Բ, Վենետիկ, 1835, էջ 74-75:

2 Հ. Ղ. Ալիշան, *Այրարատ*, Վենետիկ, 1890, էջ 421-422:

3 «*Զօրանամակ*»-ի (իմա՛ «*Գահնամակ*») մեզ հասած տարբերակում Սիւնեաց իշխանութեան ռազմական կարողութիւնը 19400 զինուոր է (տե՛ս **Н. Адонц**, *Армения в эпоху Юстиниана*, СПБ, 1908, էջ 28): Սակայն փաստաթղթի քննութիւնը ցոյց է տալիս, որ Սիւնեաց իշխանի ռազմուժին աւելի ուշ գումարուել է մարզպանի ենթակայութեան տակ գտնուող 15 հազարանոց զօրաբանակը (Ց. Բ):

4 «*Զօրանամակ*» տե՛ս **Н. Адонц**, *Армения в эпоху Юстиниана*, էջ 251:

5 «*Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց*», աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց, Տփղիս, 1909, § 795:

6 **J. Marquart**, Ērānšahr *nach der Geographie des Ps. Moses Xorenaći*, Berlin, 1901, էջ 165-173: Փորձ է արւում նաեւ բդեշխներին նոյնացնել Սալիւսիոսի յիշատակած *տետրարքոսների* կամ *չորրորդապետերի* հետ, որոնց Ապիոս կամ Կլաւդիոսը քաջալերեց Տիգրան Մեծի դէմ (*Sallusios*, Historiarum Fragmenta, IV, 56, p. 179, ed. Mauren - brocher): Նոյնացումը գուցէ եւ չի բացառւում, սակայն, ինչպէս ստորեւ կը տեսնենք, բդեշխը ամէնից առաջ զինուորական պաշտօն էր:

7 **Н. Адонц**, *Армения в эпоху Юстиниана*, էջ 283:

8 Պրոֆ. **Ց. Մանանդեան**, *Ֆէոդալիզմը հին Հայաստանում*, Երեւան, 1934, էջ 34:

9 **C. Toumanoff**, *Studies in Christian Caucasian History*, Georgetown University Press, 1963, էջ 155-192:

10 **Ս. Մ. Կրկեաշարեան**, *Բդեշխութիւնների առաջացումը Հայաստանում*, տե՛ս «Պատմա-բանասիրական հանդէս», 1966, թիւ 4, էջ 261-262:

11 **Թ. Գամսախուրդիա**, *Կովկասագիտութեան պրոբլեմներ (Բդեշխութեան ինստիտուտի հարցի շուրջը)*, «Գիտա-ինֆորմացիոն բիւլետէն», Ա, մատենաշար թիւ 5, 1971, էջ 18, 27, 53:

12 Ընդգծումն իմն է:

13 **Ագաթանգեղոս**, § 873:

14 «**Փաւստոսի Բուզանդացւոյ** *Պատմութիւն Հայոց*», Վենետիկ, 1832, դպր. Գ, գլ. Թ:

15 **Ագաթանգեղոս**, § 795, 796:

16 **Փաւստոս Բուզանդ**, Դպր. Դ, գլ. ԻԴ:

17 Որոշ ձեռագրերում Նոր Ծիրական է:

18 **Փաւստոս Բուզանդ**, Դպր. Դ, գլ. Ը:

19 Անդ, Դպր. Ե, գլ. ԺԵ:

20 Անդ, Դպր. Ե, գլ. ԺԶ:

21 Անդ, Դպր. Ե, գլ. Թ:

22 Անդ, Դպր. Ե, գլ. Ժ:

23 «**Մովսիսի Խորենացւոյ** *Պատմութիւն Հայոց*», աշխատութեամբ Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913, Գիրք Ա, գլ. ԻԳ (ԻԴ):

24 Անդ, Գիրք Բ, գլ. Լ:

25 Անդ, Գիրք Գ, գլ. Դ: Տրդատ Գ-ն պարսից Որմիզդ թագաւորի ժամանակակից լինել չէր կարող:

26 Անդ, Գիրք Գ, գլ. Է: Փաւստոսի երկում բդեշխի որդու անունը «*Խեշայ*» է, որին յաջողւում է փախչել:

27 Անդ, Գիրք Բ, գլ. Ը:

28 Անդ, Գիրք Գ, գլ. Զ եւ Կ:

29 Հ. Ղ. **Ալիշան**, *Այրարատ*, էջ 422:

30 Անդ:

31 **J. Marquart**, Ērānšahr, էջ 168-169: Հետագայում նա տեսակէտը փոխեց՝ մազքութների տակ հասկանալով մասագէտներին եւ ալաններին (տե՛ս Die Genealogie der Bagratiden, "*Caucasica*", 1930, Fasc. 6, 2, էջ 33):

32 Անդ, էջ 169:

33 Անդ: Հ. Հիւբշմանի տեղադրութիւններին չենք անդրադառնում, որովհետեւ դրանք հիմնուած են Ց. Մարքուարթի տեսակէտների վրայ (տե՛ս Հին Հայոց տեղւոյ անունները, Վիեննա, 1907, էջ 180-181):

34 Անդ, էջ 170:

35 Անդ, էջ 172:

36 **Ս. Երեմեան**, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի*, Երեւան, 1963, էջ 34, 48, 60, 77: Տե՛ս նաեւ **Ս. Երեմեան**, *Արշակունիների թագաւորութիւնը 298-387 թթ. (քարտէզ)*, «Հայկական Սովետական հանրագիտարան», հտ. Բ, Երեւան, 1976, էջ 112:

37 **Ս. Երեմեան**, *Արշակունիների թագաւորութիւնը*

© National Library of Armenia

298-387 թթ. (քարտէզ), տե՛ս ՀՍՀ, հտ. Բ, էջ 112: Հեղինակի յիշեալ քարտէզն առանց փոփոխութեան լոյս է տեսել նաեւ «Արշակունիների թագաւորութիւնը 298-389 թթ.» խորագրով 1988 թ.:

38 **C. Toumanoff**, *Studies in Christian Caucasian History*, էջ 163:

39 Մեզ հասած ձեռագրում Խուարասանի փոխարէն հանդիպում է Խորասան (այսինքն՝ Արեւելեան) ընթերցումը: Սխալն, ըստ երեւոյթին, առաջացել է *Խուարասան* կամ *Խւարասան* անունը սխալմամբ *Խաւրասան* արտագրելուց, որն այնուհետեւ առանց դժուարութեան կարող էր վերածուել «*Խորասան*»-ի (տե՛ս «Աշխարհացոյց *Մովսէսի Խորենացւոյ*, յաւելուածովք նախնեաց», Վենետիկ, 1881, էջ 40):

40 «*Աշխարհացոյց* **Մովսէսի Խորենացւոյ**», էջ 40: «Աշխարհացոյց»-ի համառօտ խմբագրութեան մէջ անունները հանդիպում են *Նոտատր* եւ *Շիրական* ընթերցումներով (**К. П. Патканов**, *Армянская география VII века*, СПБ, 1877, էջ 22):

41 «*Պատմութիւն* **Սեբէոսի**», աշխատասիրութեամբ Գ. Վ. Աբգարեանի, Երեւան, 1979, էջ 54 (Նոր Շիրակ), էջ 78 (Նոր Շիրական):

42 **J. Markwart**, *A Catalogue of the provincial Capitals of Persia*, տե՛ս "Anecdota Orientalia", III, Rome, 1931. էջ 81-82:

43 **Յ. Մանանդեան**, *Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան*, հտ. Բ, մասն Ա, Երեւան, 1957, էջ 297-298:

44 **J. Marquart**, Ērānšahr, էջ 23:

45 **Н. Адонц**, *Армения в эпоху Юстиниана*, էջ 228-229:

46 **G. Hoffmann**, *Auszüge aus syrischen Akten persischer Märtyrer*, Leipzig, 1880, էջ 249: Տե՛ս նաեւ **Յ. Մանանդեան**, *Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան*, հտ. Բ, մասն Ա, էջ 298-299:

47 **Յ. Մանանդեան**, *Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան*, հտ. Բ, մասն Ա, էջ 299-301:

48 **Փաւստոս Բուզանդ**, դպր. Դ, գլ. ԽԸ: Պատմիչը գաւառ է անուանում Կորճայքը, սակայն, ամէն ինչից դատելով, հայ իրականութեան մէջ գաւառն ունեցել է երբեմն նաեւ աշխարհի նշանակութիւն:

49 Մանրամասն տե՛ս **Բ. Յ. Յարութիւնեան**, *Մեծ Հայքի Պարսկահայք աշխարհն ըստ «Աշխարհացոյց»-ի*, ՊԲՀ, 1989, թիւ 2, էջ 26-39, թիւ 3, էջ 18-36:

50 Տե՛ս Ռուսական տաս վերստանոց քարտէզի թիւ 100 պլանշետը: **Феофилакт Симокатта**, *История*, М., 1957, էջ 128. "Σιραγανων κομή":

51 **Ուխտանէս եպիսկոպոս**, *Պատմութիւն Հայոց*, Վաղարշապատ, 1971, էջ 100: Պատմիչը Հայոց մարզպանութեան մէջ յիշատակում է Այլիի կամ Ելոյ եպիսկոպոսութիւնը: Չնայած պատմիչի հաւաստիացմանը, թէ եպիսկոպոսութիւնների ցուցակը վերաբերում է Գրիգոր Լուսաւորչի ժամանակներին, քննութիւնը հեշտութեամբ պարզում է վերջինիս մարզպանական շրջանում ստեղծուելու իրողութիւնը:

52 **Յ. Մանանդեան**, *Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան*, հատ. Բ, մասն Ա, էջ 302:

53 **Ammianus Marcellinus**, *with an english translation by John C. Rolfe*, in three volumes, I, London, Cambridge, Massachusetts, 1971, XVIII, 6, 20; **Մովսէս Խորենացի**, գիրք Բ, գլ. ԾԳ:

54 «*Եղիշէի* Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին», ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան, Երեւան, 1957, էջ 126:

55 **Թովմա Արծրունի եւ Անանուն**, *Պատմութիւն տանն Արծրունեաց*, Երեւան, 1985, էջ 90-91:

56 **Փաւստոս Բուզանդ**, Դպր. Դ, գլ. Ծ. «*ամուր գաւառն Տմորեաց, եւ ամուր աշխարհն Կորդեաց, ապա եւ տէր գաւառին Կորդուաց չոգաւ եկաց առաջի թագաւորին Պարսից*»: Դպր. Ե, գլ. Ժ. «*Հարկանէր Մուշեղ սպարապետն եւ զայս գաւառս ապստամբեալ յարքայէն Հայոց, զԿորդուս եւ զԿորդիս եւ զՏմորիս*»: Կասկած չի յարուցում, որ Կորդուքը նախարարի ժառանգական տիրոյթն է, իսկ Տմորիքը եւ Կորդրիքը՝ արքունի ամուր երկրամասեր: Ելնելով աշխարհագրական հերթականութիւնից՝ գոնէ IV դարում Տմորիքի մէջ էին մտնում Կորճայք աշխարհի ոչ թէ կենտրոնական, այլ արեւելեան շրջանները:

57 Անդ:

58 Հակառակ ամէն մի տրամաբանութեան, Յ. Մարքուարթը, «*յԱսորեստանեայց*»-ը ուղղելով «*յԱսորւոց*», երկրորդ սահմանակալ իշխանութիւնը տեղադրել է ոչ թէ Ադիաբենէ-Ասորեստանի հարեւանութեամբ, այլ Ասորիքի սահմանակցութեամբ: Ուստի եւ կարծել է, որ երկրորդ սահմանակալը Ծոփաց (Ծաճունոյ) իշխանն է: Մօտաւորապէս տրամաբանական նոյն մտքերի շղթայով պէտք է բացատրել Ն. Ադոնցի կողմից Անգեղտան իշխանին բդեշխ համարելը: Յ. Մանանդեանը, որ իր «Ֆէոդալիզմը հին Հայաստանում» աշխատութեան մէջ հակուած էր այդ տեսակէտն ընդունելու (էջ 35), իրաւացիօրէն հետագայում այն մերժել է, համարելով նման տեղադրութիւնը ոչ միայն վիճելի, այլեւ անհաւանական (Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան, հատ. Բ, մասն Ա, էջ 301): Սակայն հեղինակի այն պնդումը, թէ Տրդատ Գ-ի եւ Արշակ Բ-ի օրօք Ծաճունց Ծոփքը եւ հարեւան երկրամասերը

գտնուում էին Հռոմի բարձրագոյն իշխանութեան ներքոյ եւ սահմանների պաշտպանութեան կարիք չունէին, չի դիմանում ոչ մի քննադատութեան:

59 **Մովսէս Խորենացի**, Գիրք Բ, գլ. Ը:

60 **Կորիւն**, *Վարք Մաշտոցի*, Երեւան, 1961, էջ 120:

61 **Մովսէս Խորենացի**, Գիրք Բ, գլ. Կ:

62 **Եղիշէ**, էջ 100. «Վրէն Տաշրացի», էջ 193. «Յազգէն Տաշրացեաց Վրէն»:

63 Ինչ վերաբերում է Քուիշափոր, Բողնոփոր եւ Մանգղեաց փոր գաւառներին, որոնք յիշատակւում են Վրաց մարզպանութեան նկարագրութեան մէջ, ապա դրանք ձեւաւորուել են աւելի ուշ՝ աւատատիրութեան զարգացման հետեւանքով:

64 **Claudii Ptolemaei** *Geographia*, E codicibus recognovit, prolegomenis, annotatione, indicibus, tabulis intruxit Carolus Müllerus, Vol. Primi, pars secunda, Parisiis, 1901, Lib. V, cap. XII, 4:

65 **Ագաթանգեղոս**, § 842:

66 **Կորիւն**, *Վարք Մաշտոցի*, էջ 120:

67 **Մովսէս Խորենացի**, գիրք Գ, գլ. Կ:

68 Պատմիչի կողմից Մեսրոպ Մաշտոցի գործունէութեան տարբերակումը Վրաց թագաւորութիւնում եւ Գուգարաց բդեշխութիւնում պայմանաւորուած էր ոչ միայն Գուգարաց բդեշխի՝ գրեթէ ինքնանկախ դիրքով, այլեւ այն իրողութեամբ, որ Գուգարքում Մաշտոցը պարզապէս տարածում էր հայ գրերը, իսկ Վիրքում գրեր էր ստեղծում վրացերէն լեզուի համար:

69 Մանրամասն տե՛ս **Բ. Յարութիւնեան**, *Մեծ Հայքի Գուգարք աշխարհը ըստ «Աշխարհացոյց»-ի*, տե՛ս «Բանբեր Երեւանի համալսարանի», 1977, թիւ 2, էջ 176-198:

70 Մանրամասն տե՛ս **Բ. Յ. Յարութիւնեան**, *Արցախի, Հայոց Արեւելից կողմերի եւ Ղարաբաղի տարածքի հարցի շուրջը*, տե՛ս ՊԲՀ, 1995, թիւ 1, էջ 193-197:

71 **Strabo**, XI, 5, 1: *Plin.*, Nat. Hist., VI, 38, 39: Տե՛ս նաեւ **Strabo**, XI, 7, 1, XI, 8, 8, XI, 14, 14:

72 Չնայած Վաղարշակին Տրդատ Ա-ի կամ Վաղարշ Ա եւ Վաղարշ Բ թագաւորների հետ նոյնացնելու ուսումնասիրողների ջանքերին՝ ամենայն հաւանականութեամբ, նա իրական անձնաւորութիւն է, ոչ աւանդական եւ իշխել է մ.թ.ա. II դարի 30-ական թուականների վերջին կամ 20-ական թուականների սկզբին: Հարցս կամ 20-ական թուականների սկզբին: Հարցս կարօտ է յատուկ քննութեան, ուստի այն թողնում ենք ապագային:

73 **Յովսէպոս Փլաւիոս**, *Դիոն Կասսիոս*, թարգմանութիւն բնագրից. առաջաբան եւ ծանօթագրութիւններ Ս. Մ. Կրկեաշարեանի, Երեւան, 1976, գիրք 69, 15 (էջ 214):

74 **К. В. Тревер**, *Очерки по истории и культуры Кавказской Албании*, М. -Л., 1959, էջ 130:

75 Անդ, էջ 130-131:

76 «*Աշխարհացոյց* **Վարդանայ վարդապետի**», Բարիզ, 1960, էջ 10: Ձեռագրերի մի մասում սխալմամբ հանդիպում է Գուգարացիք ընթերցումը, որը վերը նշուած շփոթի հետեւանքն է:

77 «*Աշխարհացոյց* **Մովսէսի Խորենացւոյ**», էջ 27: Սոյն տեղեկութիւնը վերլուծութեան կարիք ունի, որովհետեւ սկզբնական մասը չի համապատասխանում մնացած մասին: Սակայն հարցիս տեսանկիւնից այդ մեծ կարեւորութիւն չի ներկայացնում:

78 **В. Г. Луконин**, *Древний и раннесредневековый Иран*, Москва, 1987, էջ 169:

79 Դրա օգտին է խօսում Սիկանի թագաւորի յիշատակութիւնը:

80 **Փաւստոս Բուզանդ**, Դպր. Գ, գլ. Ե:

81 «*Աշխարհացոյց* **Մովսէսի Խորենացւոյ**», էջ 30-31: **К. П. Патканов**, *Армянская география VII века*, էջ 18: Ընդարձակ խմբագրութեան մէջ բացակայում է *Գզեղխ* գաւառի անունը:

82 **Բ. Յարութիւնեան**, *Մեծ Հայքի թագաւորութեան հարաւ-արեւմտեան երկրամասերի վարչա-քաղաքական կացութիւնը III դարի վերջին - IV դարի սկզբին*, տե՛ս «Բանբեր Երեւանի համալսարանի», 1982, թիւ 2, էջ 79-94:

83 **H. Gelzer**, *Georgii Cyprii Descriptio Orbis Romani*, Lipsiae,1890, էջ 46-48:

84 «Հայ ժողովրդի պատմութիւն», ՀՍՍՀ ԳԱ հրատ., հտ. Բ, Երեւան, 1984, էջ 336:

85 **Մովսէս Խորենացի**, Գիրք Ա, գլ. ԺԴ:

86 Անդ:

87 Անդ, Գիրք Բ, գլ. ԾԳ:

88 Անդ, գիրք Բ, գլ. Գ: Շատ հնարաւոր է, որ Բագարատ Բագրատունուն արեւմտեան կողմից կողմնակալ նշանակելու փաստը շփոթի արդիւնք է, որ թոյլ է տուել Պատմահայրը, ուշ շրջանի իրողութիւններից ազդուելով, երբ Բագրատունիներն իրօք գլխաւորում էին արեւմտեան զօրաբանակը: Յամենայն դէպս, Արտաշէս Ա-ի օրօք Բագրատունիները գլխաւորում էին հարաւային զօրաբանակը: Բագարատ Բագրատունու՝ արեւմտեան կողմից կողմնակալ նշանակելը տեսականօրէն կարող էր տեղի ունենալ նաեւ Տրդատ Ա-ի օրօք, եթէ նա է այդ ռազմական վերակառուցումների հեղինակը:

89 Անդ, գիրք Բ, գլ. Է:

90 Անդ, գիրք Բ, գլ. Ը:

91 Անդ:

92 Անդ:

93 Անդ:

© National Library of Armenia

94 Անդ:

95 Անդ, գիրք Գ, գլ. Զ:

96 Անդ, գիրք Բ, գլ. ՁԵ:

97 Անդ:

98 Անդ, գիրք Գ, գլ. Թ:

99 **Փաւստոս Բուզանդ**, դպր. Գ, գլ. Է:

100 **Մովսէս Խորենացի**, գիրք Գ, գլ. ԺԸ:

101 **Փաւստոս Բուզանդ**, դպր. Դ, գլ. Բ:

102 **Մովսէս Խորենացի**, գիրք Գ, գլ. ԺԹ:

103 «*Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ* **Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց**», Թիֆլիս, 1910, գլ. Է (էջ 24-25):

104 **Н. Адонц**, *Армения в эпоху Юстиниана*, էջ 251-252:

105 **Փաւստոս Բուզանդ**, դպր. Դ, գլ. ԺԵ:

106 «*Գահնամակ-Զօրանամակ*», տե՛ս **Н. Адонц**, *Армения в эпоху Юстиниана*, էջ 252. «...եւ զոմանս ի յայլ աշխարհս գրաւեալս. եւ լինի թիւ մարտիկ արանց որ ընդ ազգաւք ՁԴ-ից հազարաց թող զպասաւորս դրանն արքունի՝ որ է ոստանդ որք ի պատերազմ ելանէին ընդ արքայի եւ մարդպետական, որ է ներքինի պահապան ի վերայ թագուհւոյն եւ գանձուցն եւ ընդ ամենայնն թիւ զօրացն հայոց՝ որ է հարիւր եւ քսան հազարաց»:

107 Անդ:

108 Ստացուած քանակութիւնն արդիւնք է. «*Գահնամակ-Զօրանամակ*»-ի քննութեան: Դատելով նոյն փաստաթղթից՝ ռազմակալող զօրամասերը վերցուում էին արքունական զօրաբանակից եւ ոչ թէ իշխանական ջոկատներից:

109 **Г. В. Церетели**, *Армазская билингва*, Թբիլիսի, 1941, էջ 23:

110 **Փաւստոս Բուզանդ**, դպր. Ե, գլ. ԺԵ:

111 **Մովսէս Խորենացի**, գիրք Բ, գլ. Լ:

112 Անդ, գիրք Բ, գլ. Ը:

113 Այս տեսակէտի օգտին է խօսում Ասորեստանեայց կողմից բդեշխների սեփական տիրոյթ չունենալը:

114 **Մովսէս Խորենացի**, գիրք Գ, գլ. Դ: **Փաւստոս Բուզանդ**, դպր. Գ. գլ. Թ:

115 **Մովսէս Խորենացի**, գիրք Գ, գլ. Դ:

116 Անդ, գիրք Գ, գլ. ԻԶ:

117 **Փաւստոս Բուզանդ**, դպր. Ե, գլ. ԺԵ:

118 Այսուհետեւ կրճատ՝ ŠKZ:

119 Այսուհետեւ կրճատ՝ NPK:

120 **R. N. Frye**, *Notes on the Early Sassanian State and Church*, տե՛ս Studio orientalistici in onore di Giorgio Levi della vida, v. I, N52, Roma, 1956, Appendix I; **A. Maricq**, *Res Gestae divi Saporis*, Syria, t. XXXV, fasc. 3-4, Paris, 1958, էջ 322, 324, 326, Liste III, 55/56:

121 **R. N. Frye**, *Notes...*, Appendix I; **A. Maricq**, *Res Gestae...*, էջ 326. Liste IV, 61; **В. Г. Луконин**, *Древный и раннесредневековый Иран*, Москва, 1987, էջ 163-169; **Herzfeld E., Paikuli.** *Monument and Inscription of the Early History of the Sassanian Empire*, vol. B., 1924, էջ ------:

122 **Թ. Գամսախուրդիա**, *Բդեշխութեան ինստիտուտի հարցի շուրջը*, էջ 3: Տե՛ս նաեւ Herzfeld E., Paikul:

123 **R. N. Frye**, *Notes...*, Appendix I, էջ 332; **A. Maricq**, *Res Gestae...*, էջ 328, Liste VI, 63-64; **Թ. Գամսախուրդիա**, *Բդեշխութեան ինստիտուտի հարցի շուրջը*, էջ 4:

124 **Թ. Գամսախուրդիա**, *Բդեշխութեան ինստիտուտի հարցի շուրջը*, էջ 4:

125 **Ammianus Marcellinus**, *with an English translation by John C. Rolfe*, in three volumes, II, London, 1972, XXIII, 6, 14: Տե՛ս նաեւ **Аммиан Марцеллин**, *История*, перевод с латинского проф. Ю. А. Кулаковского, выпуск II, Киев, 1907, XXIII, 6, 14:

126 **Г. А. Меликишвили**, *К истории Древней Грузии*, Թբիլիսի, 1959, էջ 348, 354-355, 362 եւ այլն: Տե՛ս նաեւ *Очерк истории Грузии*, том I, Թբիլիսի, 1989, էջ 316, 318, 319, 363, 373, 379-380, 386, 400, 411-415 :

127 **Г. В. Церетели**, *Эпиграфические находки в Мцхета - древней столице Грузии*: Տե՛ս ВДИ, 1948, թիւ 2, էջ 55:

128 **Ш. Я. Амиранашвили**, *Серебряная чаша ранне-сасанидской эпохи из раскопок в Армазисхеви*, "Թբիլիսի 1500" (Юбилейный сборник), Թբիլիսի, 1958, էջ 90 եւ այլն: Տե՛ս **Թ. Գամսախուրդիա**, *Բդեշխութեան ինստիտուտի հարցի շուրջը*, էջ 10:

129 **W. B. Henning**, *A. Sassanian Silver Bowl from Georgia*, տե՛ս BSOAS, 1961, vol. 24, էջ 353: Արձանագրութիւնը կարդացել է նաեւ Վ. Գ. Լուկոնինը, որը, սակայն, չհաշուած անէական փոփոխութիւնները, հետեւել է Վ. Հեննինգին (*Иран в эпоху первых сасанидов*, Щ., 1961, էջ 61):

130 Անդ, էջ 355:

131 **F. Altheim**, *Geschichte der Hunnen*, 4, Berlin, էջ 24-26:

132 **Թ. Գամսախուրդիա**, *Բդեշխութեան ինստիտուտի հարցի շուրջը*, էջ 14:

133 **A. Maricq**, *Res Gestae ...*, էջ 304: **R.N. Frye**, *The Heritage of Persia*, Cleveland-New York, 1963, էջ 206:

134 **R. N. Frye**, *Notes...*, Appendix I, էջ 323; **A. Maricq**, *Res Gestae...*, էջ 326, Liste IV:

135 **Г. А. Меликишвили**, *К истории Древней Грузии*, էջ 394:

136 **Թ. Գամսախուրդիա**, *Բդեշխութեան ինստիտուտի հարցի շուրջը*, էջ 16:

137 **R.N. Frye**, *Notes...*, էջ 318:

138 **J. Marquart**, Ērānšahr, էջ 172:

139 **Թ. Գամսախուրդիա**, *Բդեշխութեան ինստիտուտի հարցի շուրջը*, էջ 17-18:

140 **Rostovtzeff M., Welles C.B.**, *A Parchment Contract of Loan from Dura-Europos*, տե՛ս *Yale Classical Studies*, vol. 2, 1931, էջ 53:

141 **R. N. Frye**, *Some Early Iranian Titles*, տե՛ս "Oriens", vol. 15, 1962, էջ 353-354:

142 **Հր. Աճառեան**, *Հայերէն արմատական բառարան*, հատ. Ա (Ա-Դ), Երեւան, 1971, էջ 434:

143 Անդ, էջ 435:

144 **Гр. Капанцян**, *Историко-лингвистические работы*, Ереван, 1956, էջ 468:

145 **Ս. Կրկեաշարեան**, *Բդեշխութիւնների առաջացումը Հայաստանում*, էջ 258:

146 **Гр. Капанцян**, *Хайаса-колыбель армян*, Ереван, 1946, էջ 116, ծան. 1:

147 **С. Т. Еремян**, *Основные черты общественного строя Армении в эллинистический период*, "Известия" АН Арм. ССР, 1948, թիւ 11, էջ 52:

148 **Hinz W.**, *Altiranische Funde und Forschungen*, B., 1969, էջ 153, 201, 206.

149 **Pagliaro A.**, *Riflessi di etimologie iraniche nella tradizione storiografica Greca*, Rendiconti dell' Academia Nazionale dei Lincei, Ser. 8, vol. 9, Roma, 1954, էջ 143: Տե՛ս նաեւ **Pagliaro A.**, *Mediopersano bitaxš, armeno bdeašx*": ὁ ὀφθαλμος του Βασιλέως, t. 12, 1929.

150 **Henning W. B.**, *A Sasanian Silver Bowl from Georgia*, էջ 355:

151 **Christensen A.**, *L'Empitre des Sassanides, Cobenhavn*, 1907, II, էջ 116:

152 **Christensen A.**, *L'Iran sous les Sassanides, Copenhague*, 1944 (2-nd ed.), էջ 137, ծան. 1:

153 **Ս. Կրկեաշարեան**, *Բդեշխութիւնների առաջացումը Հայաստանում*, էջ 260-261:

154 Անդ, էջ 261:

155 **Հ. Աճառեան**, *Հայերէն արմատական բառարան*, հատոր Ա, էջ 434:

156 «*Գահնամակ-Զօրանամակ*»-ում Կադմէացի իշխանը ներկայանում է 13200 մարտիկից բաղկացած զօրաբանակով (**М. Адонц**, *Армения в эпоху Юстиниана*, էջ 251), սակայն փաստաթղթի ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ ինչ-ինչ պատճառներով այդ թուի մէջ է մտել մաղխազական թիկնապահ 10 հազարանոց գնդի քանակութիւնը:

Die Bdeschchentümer (Markfürstentümer) Großarmeniens (Geschichte und Institution)

Babken Harutyunyan

Zusammenfassung

Ungeachtet der in der Armenologie bislang erzielten beträchtlichen Ergebnisse ist die Frage bezüglich der Bdeschcheninstitution von der Geschichtswissenschaft noch nicht allseitig und vollkommen untersucht worden. Im Aufsatz sind die Bdeschentümer und die Bdeschcheninstitution des Königreichs Großarmeniens aufgrund der uns bekannten Quellen einer gründlichen Prüfung unterzogen worden. Von unseren Forschungsergebnissen ausgehend sind wir zu den folgenden Schlußfolgerungen gekommen: Die Bdeschchen übten eine Militärfunktion. Ihre Einsetzung im Königreich Großarmenien ist mit der Notwendigkeit von Aufteilung der Militärkräfte des Landes auf alle vier Richtungen zur Außenwelt zu verstehen. Anfänglich sind ausschließlich die Mitglieder der Königsfamilie mit dieser Anstellung betraut worden. Dieses Verfahren ist aber in der späteren Zeit nicht aufrechterhalten worden, und mit der genannten Anstellung sind auch Persönlichkeiten aus der armenischen Oberschicht beauftragt worden. Jeder Bdeschch hatte eine sich aus 10 000 Männern zusammengesetzte Kavallerie zu befehligen, der die Verteidigung der Grenzen des Königreiches Großarmeniens in allen Richtungen (Norden, Süden, Osten, Westen) oblag. Im Königshof haben die Bdeschche die höchsten Plätze oder Kissen besessen, weshalb sie auch als „Oberplatzhaber“ beze-

© National Library of Armenia

ichnet worden sind.

Der Bdeschch von Aldznik‘ hatte den Titel „Großer Bdeschch“, während die anderen als „andere Bdeschchen“ bezeichnet worden sind. Obwohl nur zwei Bdeschchen von Movses Khorenazi erwähnt worden sind, hat es in Wirklichkeit vier Bdeschchen in Großarmenien gegeben. Zwei von ihnen d. h. die Bdeschchen von Aldznik‘ und Gugark‘ sind im Laufe der Zeit zu erbberechtigten Fürsten geworden. Nach einiger Zeit, besser gesagt nach Abschluß des Vertrages von Nisibin (Mtzbin) im Jahre 298 geschah das gleiche auch mit dem dritten Bdeschchen (von Nor Schirakan oder Nuschirakan), während der Vierte als Vertreter der Königsfamilie allem Anschein nach weiterhin auch im Dienste geblieben ist, wenn auch er sich lediglich als Militärdienstleistender betätigt hat.

Die Bdeschchentümer sind mit den Namen der benachbarten Länder und Distrikte gekennzeichnet worden, gegen die ihre Streitkräfte vorgesehen waren. Daher haben diese Anfang des vierten Jahrhunderts die folgenden Namen gehabt: „Der grenzwachende Fürst von seiten Nor-Schirakans“ (Im Original gibt es eine Unrichtigkeit. Es sollte „...von seiten Schirakans“ heißen), „... von seiten Assyriens“, „... von seiten Aruastans“ und „... von seiten der Maskuten oder der Masageten“. Es ist ganz logisch, dass das nördliche Bdeschchentum vor dem Einfall der Maskuten ins Transkaukasien als „das grenzwachende Bdeschchentum von seiten der Gargaren“ bezeichnet worden ist.

Den Mitteilungen von Movses Khorenazi nach sei einer der grenzwachenden Fürste in den Herrschaftsjahren des großarmenischen Königs Artasches I (189-160) als die zweite Person im Königreich angesehen worden. Diese Anstellung hat der Königssohn Artawasd in Besitz gehabt. Seit den Zeiten von Walharschak Arschakuni hat ein solcher Privileg aber nicht mehr bestanden. In den den Bdeschchen zu ihrem eigenen Gebrauch zugewiesenen Ländereien, die im Laufe der Zeit zu erbberechtigten Grundbesitzen geworden sind, haben sich die feudalistischen Verhältnisse vergleichsweise schnell etnwickelt, indem diese zur Entstehung neuer erbberechtigten Fürstentümer führten, die in der Tat nicht dem König, sondern den Bdeschchen als ihren Vasallen untergeben waren. Das Leitmotiv des Feudalismus „Der Vasall meines Vasallen ist nicht mein Vasall“ hat also in Armenien ebenfalls bestanden.

Der Feudalisierung des Landes und der Entstehung verschiedener Fürstenstreitkräfte zufolge ist neben den Bdeschchen auch die Institution der Heerführer (Sparapeten) gebildet worden. Während die ersteren die königlichen Streitkräfte kommandierten, haben die letzteren die Befehlsgewalt über die Fürstentruppen besessen. Nach der im Jahre 387 vollzogenen Teilung des Königreichs Großarmenien zwischen Rom und dem Sassanidischen Persien sind die auf dem östlichen Hoheitsgebiet Großarmeniens bestandenen Bdeschchentümer aus dem Königreich getrennt und unmittelbar dem persischen Königshof unterstellt worden, indem sie den benachbarten Verwaltungsgebieten angeschlossen wurden. Während der Teilung der Bdeschchentümer hat man aber aus uns unbekannten Gründen bestimmte Teile ihrer Gebiete weiterhin auch im Hoheitsgebiet des ostarmenischen Königreiches bleiben lassen. Aus dem Bdeschentum von Gugark‘ ist beispielsweise die Distrikt von Taschirk‘, aus dem Bdeschchentum von Aldznik‘ die Bergdistrikte -Ketik, Tatik, Asnwaz-Dsor, Erchetk‘, Gselch, Salnodsor und Sanasunk‘ und aus dem Bdeschchentum von Nor Schirakan die Distrikt Ajli bzw. Kuritjan dem ostarmenischen Königreich angeschlossen worden.

Die fremden Quellen beinhalten keine wesentlichen Neuigkeiten zu den erwähnten Fragen und haben bloß die Auskünfte der armenischen Quellen ergänzt.

ՀԱՅՈՑ ԴԱՐՁԻ ԹՈՒԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Գրիգոր Բրուտեան*

Վերջին տարիներին շատ խօսուեց եւ գրուեց քրիստոնէութիւնը Հայաստանում[1] պետական կրօն հռչակելու մասին: Եւ դա բնական էլ էր, քանի որ նշուեց Հայոց պատմութեան այդ ամենաբախտորոշ հանգրուանի 1700-ամեակը: Այսօր պաշտօնապէս ընդունուած է Հայոց դարձի թուական համարել Փրկչական 301 թուականը: Այս թուականը ամրագրուած է տարբեր պաշտօնական հրատարակութիւնների էջերում (Հայկական Հանրագիտարանում, Հայ ժողովրդի պատմութեան ակադեմիական բազմահատորեակում, դպրոցական եւ բուհական դասագրքերում եւ այլն): Այդուհանդերձ, դա չի խանգարում, որ, ինչպէս անցեալում, այսօր եւս, գիտական տարբեր հրապարակումներում բաւական լուրջ հիմնաւորուած տեսակէտներ ներկայացուեն՝ Հայոց դարձը Փ. 301 թուից առաջ կամ յետոյ դնելու վերաբերեալ: Օրինակ, մանրամասն քննելով քաղաքական անցուդարձը Առաջաւոր Ասիայում եւ Հայոց դարձի միջազգային քաղաքական հենքը, Ռուբէն Մանասերեանը Հայոց դարձի յարմարագոյն ժամանակ է համարում Փ. 304-306 թուականները[2]: Իսկ Ստ. Մալխասեանն էլ Հայոց դարձի ժամանակ է համարում Փ. 279 թիւը (Տրդատ Մեծի թագաւորութեան սկիզբ ընդունելով Փ. 263 թ.)[3]: Կատարելով զանազան փաստերի մանրամասն քննութիւն, Ստ. Մալխասեանը գրում է. «ըստ Խորենացու, որ միակ աղբիւրն է այս շրջանի ժամանակագրութեան, Տրդատը թագաւորել է 263 թուին, իսկ Հայոց դարձը, Ս. Գրիգորի ձեռնադրութիւնը, էջմիածնի տաճարի շինութիւնը տեղի են ունեցել 279 թուին, եւ ոչ 301-ին, ինչպէս առհասարակ ընդունուած էր: Այս է ամենակարեւոր եզրակացութիւնը մեր կազմած աղիւսակի»[4]:

Բնականաբար, կան Հայոց դարձը այլ ժամանակ դնող հեղինակներ եւս: Ընդ որում, այդ բոլոր թուականներն էլ այս կամ այն կերպ հիմնաւորուած են: Ակնյայտ է, որ դրանք բոլորը միաժամանակ ճիշդ լինել չեն կարող. ճիշդ կարող է լինել դրանցից առաւելագոյնը՝ մէկը: Սակայն, դրանց քննութիւնը դուրս է մեր նպատակներից, եւ այստեղ դրանց չենք անդրադառնայ:

Իսկ ո՞ր տեղից է գալիս Փ. 301 թուականը: Զանց առնելով մանրամասները, նշենք, որ այս թուականի վերջնական հիմնաւորումը գալիս է Մաղ. արք. Օրմանեանից: Իր կոթողային «Ազգապատումի» առաջին հատորում, քննելով Հայոց դարձի հետ կապուած պատմական անցքերի ժամանակագրութիւնը, նա Հայոց դարձը դնում է Փ. 301 թուին[5]: Եւ սրա համար էլ հիմք է ընդունում Ասողիկի այն տեղեկութիւնը, թէ «Քրիստոսի 553 թուին, ի լուսաւորութենէ սրբոյն Գրիգորի, ամս 252 կը հաշուէ (Ասող. 84)»[6]: Ընդհանրապէս, Օրմանեանը տալիս է հետեւեալ ժամանակները. վիրապից Ս. Գրիգորի ելնելը՝ Սահմի 10-ին (ըստ Յայսմաւուրքի), որ լինում է Փ. 301 թ.[7]. Նոյեմբերի 20-ը (Ս. Գայիանէի նահատակութիւնից 13 օր անց): Ս. Գրիգորի արած բժշկութիւնները՝ Սահմի 16-ին (Նոյեմբերի 26-ին), իսկ երկամեայ քարոզութեան լրումն էլ դնում է Քաղոց 16-ին, որ է Փ. 302 թ. Յունուարի 25-ը: Այս նոյն օրն էլ համարում է Գրիգոր Լուսաւորչի մեծ տեսիլ-

© National Library of Armenia